

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





ԼԱՅԻՍ ՍՈՒԴՐԱԲԱ

ՄԵՐ ՈՒՂԻՆ

Վ Ե Պ

ՄԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԿԱՆԻ ԿՑՈՆՔԻՑ

1002
5961

144



№ 241

ՊԵՏԱԿՑՆ ՀՐԱՏԵՐԱԿՉՈՒԹՅԱՆ
1925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ԽՈՐՀ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոպեգանդա բաժնի լեհրներ, միացե՛ք:

ԼԱՑԻՍ ՍՈՒԴՐԱԲՍ

19 NOV 2010

89171

U-77

պր.

ՄԵՐ ՈՒՂԻՆ

Վ Ե Պ

ՈՒ ՀԵՂԱՓՈԽՆԵՆԻ ԿՅՈՆՔԻՑ

Թարգմ. Դեռ. Գեմ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1925

Մ Ե Ր Ո Ւ Ղ Ի Ն

1. ՍԱՐԴ ԾՆՎԱԾ Ե ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿՅԱՆՔԻ ՀԱՍԱՐ

Նա 13 տարեկան էր, յերբ առաջին անգամ լսեց սոցիալիստ բառը:

Յե՛վ դարձանալի չե: Ախր այն խուլ, յեա ընկած վայրում, ուր մարդիկ ծնվում, ապրում, մեռնում էյին ու չեյին լսում, չեյին ասում պոլիտիկա՝ վճրտեղ պիտի նա ծանոթանար պոլիտիկայի հետ:

Բայց դեհ, պատահեց, վոր նա լսեց այդ բառը— սոցիալիստ:

Յե՛վ դա պատահեց այն ժամանակ, յերբ նա արդեն հինգ տարի դպրոցումն էր:

Հինգ տարի վարժապետները լցնում էյին նրա գլուխը յերկնային ու ցարական բնակավայրերի մասին, ստիպում էյին անդիր անել կայսրների թագավորումները: Բայց ի՞նչ կասես, վոր վոչ մի դասի ժամանակ, վոչ վոք մի անգամ չասաց սոցիալիստ բառը:

Իսկ նա գյուղացի աղքատ մշակի տղա յեր: Ութը տարեկան էր, հագիվ էր տեղիցը վեր կենում, վոր նա սրա-նրա տանը հովիվ էր և ձմեռվա համար ապրուստ էր ճարում, վոր կարողանա ուսումնարան գնալ:

Յե՛վ մինչև անգամ նա, այդ գյուղացի պրոլետարը դրա մասին վոչինչ չըզիտեր:

Ահա այդպիսի գարհուրելի խավար էր, վորով

պաշարել էյին աշխատավոր ժողովուրդին նրա տիրապետները:

Իսկ նրանց ընտանիքը վերջիններից չեր: Նրա հայրն էլ, մայրն էլ գրաճանաչ էյին, այսինքն՝ տղածբաներ կարդում էյին, դեռ հայրը մինչև անգամ դողդողջուն ձեռքով ծուռտիկ տառեր եր շարում թղթի վրա:

Իսկ մայրը հենց մի գլուխ այս եր ասում վորդուն.

—Վորդի, դու պիտի ավելի լավ կյանքի համար ապրես: Ուսում առ, սովորիր, վոր հարուստների ձեռքին ստրուկ չըմնաս:

—Իմանում ես:

—Իմանում եմ,—ասում եր նա այդպիսի դեպքերում:

Այո, նա ուզում եր մարդամեջ դուրս գալ, մարդ դառնալ:

Մայրը այդպես եր պատվիրել նրան:

Ասենք մայրը այս բաները պիտք է լավ իմանար: Նա իր կաշու վրա յեր փորձել աղաների լծի բոլոր ծանրությունը և վաղաժամ գերեզման մտավ՝ չըզիմանալով տաժանակիր աշխատանքին:

Նա այդ բանը վճնց կըմոռանար...

Կասես ահա հենց աչքի առաջն և այդ ճնշող պատկերը.—

Յերկար ամառ որվա ուշ յերեկո: Նա վաղուց արդեն անկողնի մեջ է: Մայրը դեռ տուն չի յեկել: Աղա-պարոնի գործից հետո, իր ընտանիքի հոգսն և քաշում: Կես գիշեր և դառնում, վոր վերջապես դուռը բաց և անում և ներս և մտնում մայրը: Իսկ վաղը ա-

ուսովորվա ժամը յերեքին նա արդեն խոտհարքում պիտի լինի:

Բայց ի՞նչ և պատահել նրան: Ինչո՞ւ չի պատկում: Մտեհնում և դռանը, տասն անգամ բաց ու խուփ անում:

—Մայրիկ, ի՞նչ ես անում:

—Ի՞նի, վորդի, քնի:

Բայց նրա քունը չի տանում: Նայում է աչքի տակով և տեսնում է, վոր մայրը ձախ թևը կոխել և դռան արանքը, իսկ աջով սխմում է դուռը:

—Մայրիկ, եդ ինչու համար ե:

—Սա անում եմ, վոր ցավն անցնի, վորդի: Բանելուց ձեռքերս թափվում են: Յավից են, մի թևս կասես իմը չըլինի:

—Իսկ վտանե՞րդ ինչու յես բանջարով ձաղկում:

—Դրա համար, բալա ջան, դրա համար:

Ապա այդ բաները նրա մտքից կընկնեն:

Վճչ, վճչ մի ժամանակ:

Նա ուսում պիտի առնի և մարդամեջ դուրս գա: Յե՞վ ահա նա դպրոցումն է: Ամառը բանում և գյուղացի տերերի մոտ, իսկ ձմեռը դպրոց և գնում:

Կրճում է քարթու հացը, վրան տաք ջուրը խըմում, բայց ուսումից յես չի մնում:

Նա ուզում է ավելի լավ կյանքի համար ապրել, բայց:

Վորպեսզի չըլինի սարսափելի աղքատություն, տղես աշխատանք, վոր գործատերը չըկարողանա յեքեսիդ թքել ու վտախ տակ արորել քեզ շան լակոտի պես, վոր պատուհանից յերեցող այն հասուն, սևորակ

Քալը ախորժակդ չըզրզուի ու ընկնի մենակ գործատե-
րի զավակների բերանը:

Բայց վճնց անես, վճրտեղից սկսես:

Նա առ այժմ մի ճամբա մենակ գիտե—մոր կը-
տակը՝ սովորել:

3. ՆՐԱՆՔ ՍՈՑԻԱԼԻՍ ԵՆ

Յեվ ահա հինգերորդ ձմեռն է, վոր նա դպրո-
ցումն է:

Հինգ տարի շարունակ նրա վարժապետները կըր-
կընում էյին, վոր մարդիկ պիտի ապրեն այն պատ-
վիրաններով, վոր տեր աստվածը տվել է Մովսեսին
Մինա սարի վրա:

Այդ պատվիրանները տասն են, և նրանք ազա-
տում են տասը մահացու մեղքերից, տասը հանցանք-
ներից:

Այո, նա գիտեր, վոր կան տասը հանցանքներ:
Ասենք թե վոչ նա գիտեր, վոչ թե հասկանում եր, այլ
այդպես էյին սովորեցրել նրան:

1902 թվի դարնանն եր: Ծառերն արդեն կանա-
չել էյին, և ուսուցիչները շտապեցին կարգի բերել
մրգի այգիները, վոր աշակերտների աշխատանքի հա-
մար ոգտավետ էյին:

Մրգի այգին ընկած եր ճամբի յերկու կողմը,
այնպես վոր յերեխաների աչքից վոչ մի ճամբորդ չեր
պըծնում:

Յեվ ահա, այդ դարնան իրիկնաւահին յերեխա-
ների ուշը գրավեց մի արտասովոր տեսարան. ճամբու-
քում էյին ձեռնակապերով կապած յերկու մարդու:

Ուրյադնիկը ձիով եր գնում, իսկ այս յերկուսը

ծանր քաշ են տալիս փոշոտ վոտները: Իսկ ձեռնակա-
պերը զըրնգում են, զըրնգում...

Հանկարծ յերեխաներից մինը ճանաչում է նրանց.

— Իրանք հարևան շրջանի վարժապետներն են:

— Վարժապետները:

— Վարժապետները:

— Բա ինչ՞ու յեն դրանց քշում բանտարկյալնե-
րի պես:

— Չեմ իմանում:

— Ապա վարժապետից հարցնենք:

— Հարցնենք:

Հարցրին և անհասկանալի պատասխան ըս-
տանցան:

— Նրանք շղթայված են նրա համար, վոր սո-
ցիալիստ են:

— Իսկ սոցիալիստն ի՞նչ բան է:

— Սոցիալիստները ամենաչար հանցավորներն
են, նրանց պետք է շների պես կոտորել:

— Բա վոր դրանք հարևան ուսումնարանի վար-
ժապետներն են:

— Այդ վոչինչ: Նրանք սոցիալիստ են: Նրանց
չարդախում արգելված գրքեր են գտել:

Այսպես ասաց կրոնուսուլց վարժապետը:

— Իսկ առաջ ինչ՞ու նա այդ բանը մեզ չի ասել:

— Պատվիրանի մեջ չըկա այդ բանը:

Ապա աստված առաջուց այդ չըգիտելը, չէր նա-
խատեսել:

— Ասել է՝ առաջ այդ տեսակ հանցանք դեռ չը-
վար:

— Բա վճնց թե: Չե՞ վոր աստված ամենազեւ է:

— Ս՛ուս կաց, վարժապետը գալիս է:

—Օերությունից խելքը պակասցրել է, հը՛ հը՛ հը՛...

—Սո՛ւս կաց:

—Եդ ս՛վ է խելքը պակասցրել:

—Աստված:

—Իսկ յեթե աստված իսկի յել չկա՛:

—Դո՛ւ ինչ ես ասում, գժվե՛լ ես: Այ թե եդ բա- նը վարժապետը կիմանա:

Նրա հավատը դեպի աստված հիմքից խախտվեց: Իսկ սոցիալիստները մասին նա դեռ վոչինչ չեր իմա- նում:

Հետաքրքիր է մի տեսակ, թե եդ ի՛նչ գրքեր են, վարոնց համար նրանց բռնել են:

Հը՛:

Բայց վո՛րտեղ ճարես:

Բա վոր հանկարծ բռնե՛ն:

Դատարկ բան: Իսկի յերեխաներին կըբռնե՛ն:

Ապա մի գնանք չարդախը լավ քրքրենք, աես- նենք մի բան մնացե՛լ է:

Հը՛:

Դատարարակի զանգը ընդհատեց նրա մտածմունքը:

Բայց՝ ի՛նչ ուզում է լինի՛ նա կըհարցնի վար- ժապետին, թող բացատրի, թե այդ ի՛նչ հանցանք է սոցիալիզմը:

Հարցրեց, բայց վարժապետը չուզեց բացատրել: Կարճ կտրեց:

—Լռիր:

Լավ, վնաս չունի, ինքը կիմանա: Յեկող աշնան նա միտքը դրել է քաղաք գնալու:

Այնտեղ այդ կիմանա հաստատ:

Այ թե բանն ինչու՞մ եր: Ո՞վ կարող եր առաջ իմանալ այդ բանը.—

Սոցիալիստները ամենաչար հանցավորներն են: Այդպես ասավ ավագ ուսուցիչը:

Ասենք նա այն ել ասավ, վոր աստված կա:

Տեսնես իսկապես նա զիտե՞, թե սոցիալիստն ինչ բան է:

Իսկ յեթե սոցիալիստների բանն ել այնպես է, ինչպես աստվածը:

Այո, ապա թող վարժապետն ասի՛ զիտե՞ ինչ բան է սոցիալիստը: Ինչո՞ւ չըպիտի ասեր, յեթե իմա- նար, թե ինչ բան է:

Ասել է՛ չի իմանում:

Բայց ինչ ել վոր է՛ այն բռնվածները հանցավոր էյին՝ յեթե նրանց տանում էյին:

Այո, հանցավոր էյին:

3. ՅԵՍ ՍՈՑԻԱԼԻՍՏ ԵՍ

Նա ուզում է մարդամեջ դուրս գալ:

Դրա համար նա մի ճամբա գիտեր-ուսումնարանը:

Բայց նրա այդ միակ ճամբան նրա առջև հի- մա փակում են:

—Դու ուսման վարձ չես բերել, դրա համար ել հետևյալ կուրսը չես ընդունվի:

Ի՛նչ հիմարն է յեղել նա մինչև հիմա: Ի՞նչպես նա առաջ չեր տեսել, վոր զիտուեթյունը հարուստներին համար է:

Իսկապես, վորտե՞ղ պիտի տեղավորվեն նրանց վոր- դինները, յեթե գյուղական աղքատ մշակները դուրս գան մարդամեջ: Ո՞վ պիտի այն ժամանակ աշխատի նը- քանց համար:

Քանն այդպես եր յեղել, հմ:

Այ, հիմի վոր հասկանում ե: Լավ, նա ցույց կը-
տա այդ հարուստներին:

Հապա, ապա:

Շոր-մոր հավաքում, կապում ե ու յալլա՞ քաղաք:
Ել գյուղում չի մնում: Հերիք ե իր մանկությու-
նից վեց տարի նա տվեց այդ մոխրագույն աղա-պա-
րոններին:

Վեց տարի, ե, վեց տարի:

Ել հիմի հերիք ե:

Մնա՞ս բարով, գյուղ. մնա՞ք բարով, մոխրագույն-
աղա-պարոններ, մնա՞ք բարով ուսումնարան և կրոնու-
սույց վարժապետ:

Մնա՞ք բարով:

Յերկու որից հետո արդեն նրան քաղաքը ըն-
գունում ե փողոցների խլացնող վորտներով և սուլիչ-
ների ծակող ճիչերով: Նրա առջև, սալահատակի վրա-
յով, կարճ ու հաստլիկ տղան, ճկուկով քաշ ե տալիս
բեռան սայլակը: Ահա մի ուրիշն ել, վտաները հաղիվ
ե փոխում, զամբյուղը շալակին՝ ամաններով լի:

Այս ե յեղել քաղաքը, հմ:

Յեվ ահա նրան խորհուրդ տվին աշկերտ մտնե-
լու կահագործ քեռու մոտ:

Ասել ե՞ ինքն ել պիտի սայլակներ քաշ տա: Այ, թե
ինչ տեսակ ե յեղել այդ յերգված քաղաքը:

Ասել ե «մրից յելանք՝ մըջուրն ընկանք»: Այս-
տեղ միտն ընկավ հին ժողովրդական յերգը.—

Ռիգա, քաղաք անվանի,

Վերջը յեկա տեսա քեզ.

Չորս բոլորդ թումբ ու ճումբ,
Ինքդ ջրում կորած ես:

Ռիգա, քեզ սով ստեղծեց,

Ռիգա, քաղաք հրաշալի,

Լիֆլանդացի՞ն գերի-ճորտ,

Պայտ—յերկաթը ձիերի:

Խոտե տրեխով յերեք հետ

Ռիգայի շուրջ շրջեցի,

Ինձ ուղեցին շրթայել

Աղաները Ռիգացի:

Հենց աքլորը ձեն տվեց՝

Վեր թոա ու ճղեցի,

Աղա, շրթա, գերություն

Վողջ հետևում թողեցի:

Այսպես, ելի, իսկ և իսկ՝ «մրից յելանք՝ մըջ-
ուրն ընկանք»:

Ինչ վոր ե, ավելի վատ բան չի լինի:

Ահա և քեռու մոտն ե:

Նրան տվեց իր մոր վերջին խնայությունը—հինգ
ուրբլին վոսկով: Դրա տեղ քեռին առժամապես թույլ
տվեց նրան մնալ իր մոտ և փորձել՝ տեսնե՞ք իր քը-
րոջ վորդին խառատության համար ե, թե վոչ:

Բայց քրոջ վորդին խելքը-միտքը գրքին ե աը-
վել, դեռ կապեր հաստատել անաստված վարպետի ոգ-
նականի հետ:

Չե, իրան այդ տեսակ աշկերտը պետք չի: Պետք
ե պոչը խուզել:

Յեվ տղային տալիս ե խանութ՝ աշկերտության:
Թող հեռու մնա անաստված վարպետի ոգնականից
վոր չըփշանա, հեռու գնա իր սուփրից, ինքը պարտալ
հացակերի գլուխ չունի:

Չուր տեղը չե, վոր ինքը տասը տարի ապրեց

քաղաքում և խառատ արհեստանոցի տեր դառաւ: Նա գիտե, թե ինչպես պիտի վարվել այդ քոստոնների հետ:

Բայց տղան վարպետի ոգնականի հետ ունեցած կապը չի կտրում: Նրանք ընկերացան: Ընկերացան հենց առաջին իրիկունը: Մեկը գյուղի սրտուկն է, մյուսը՝ քաղաքի: Յերկուսն էլ մի մտքի յեն—մարդը ծընփած է ավելի լավ կյանքի համար:

Տարորինակ մարդ էր այդ վարպետի ոգնականը: Տերեկը արհեստանոցում իր 10 ժամվա աշխատանքը տալիս էր վարպետին, իսկ յերեկոյան հենց նույն արհեստանոցում առնում էր մի գիրք ու սերտում, սերտում ամբողջ գիշերը:

Ի՞նչն էր տանում և թե չէ՝ ձեռաց մուգ թեյ է խըմում: Իսկ յեթե այդ էլ չի ոգնում, գլխիվայր է կանգնում կամ ծանր ըմբռամարդ է անում:

Յեվ այ թե ուժ ուներ այդ կուզիանը. յերեք փթանոց կշաքարը մի ձեռով հանգիստ կըբարձրացնե՞ր՝ ողում կըբռներ, կամ փռով կըբռներ, կըղներ ձեռքի թաթին ու կըբարձրացներ ողը:

Ի՞նչու չէր ջահել ժամանակ ջաղացպանի ոգնական յեղել: Վեց փթանոց ջվալը ուսած՝ ազատ բարձրանում էր հողմաղացի յերրորդ հարկը:

Չենց դրանից էլ նա կուզիան դառավ:

Բարեկազմ, առողջ, պնդակազմ էր և դառավ կուզիան: Իր տիրոջ ազահությունից էր, վոր ամսոսում էր մի քանի ուլըլի ծախսել բարձրացնող մեքենա շինել տալու համար:

Ջահելին չէր ամսոսում:

Վոչ, Ձե՛ վոր սա նրա դավակը չէր:

Յեվ անա սա կուզիան է: Այդ ազահ մարդու յեփեսից:

Ի՞նչ կասեք սրան:

Ե՛, նա այդ բանը չի՛ մոռանա: Նա ցույց կըտա այդ վարպետներին, վոր նա յեկ մի բան կարող է անել:

Այ, մի անգամ խառատների գործադուլ էր. բոլոր գործիքները, դադգահն էլ հեաը դուրս բերեց փողոցը:

Այդ տեսակ մարդ էր խառատ վարպետի ոգնականը, այդ կարճահասակ, կուզիան մարդը:

Յեվ նրանից վախում էյին:

Հիմիկվա տերը նրան պահում էր լավ բանելու համար: Ի հարկե, հետն էլ հաշվում էր, վոր այդ «սատանան» իր շնարունը չի կեղտոտի, և մի գեղեցիկ որ դադգահնը փողոց չի տանի կոտորտած մասերով:

Նա յեկ իրա համար խելք ուներ, այդ տերը, վոր մարդ էր դառել՝ դուրս գալով հոտաղությունից: Նա գիտեր, վոր ծառայողին լավ կարելի յե քամել ավելի խաթրով, քան թե ուժով:

Բայց այդ տիրող խաթրն էլ չափ ուներ:

Մի անգամ էլ այնպես պատահեց, վոր Պյոտրը չարդախից տախտակները վեր բերելիս սանդուխքով միտսին սայթաքեց, ընկավ և զոտների ջլեբը լայնացան: Տերը ուղել էր խնայություն անել, սանդուխքը բռնող մարդը չըպահել: Դրանից էլ առաջ յեկավ անբախտությունը, Սաքոն բանից—գործից ընկավ յերկար ժամանակ:

Հիմի կասեք, թե տերը նրան սկսեց բժշկել:

Վոչ, նա այդքան պարզամիտը չէր: Նա հաշմանդամ պահելու շատ գլուխ չունի:

Վոչ, նրա տունը անկեկանոց չէ:

Ձի կարող աշխատել, թող գնա կորչի:

Ու Սաքոյին դուրս վոնդեց արհեստանոցից. ախր,

ի՞նչպես կարող ե նա թույլ տալ, վոր նրա արհեստանոցում հիվանդը պառկի ու գործին խանգարի:

— Ինչի՞ յեր վեր ընկնում, — այդպես եր դատում տերը:

Պյոտրն ել իր յեղբոր և յերիտասարդ ընկերոջ ոգնությամբ տեղափոխվեց քաղաքի ծայրամասը և մի կերպ տեղավորվեց փայտե տնակում՝ սպասելով առողջանալուն:

Այդ ամենը մեր ջահել տղայի աչքի առաջ եր տեղի ունենում: Նա հենց քաղաք գալու առաջի որերից սկսեց ակնատես և մասնակից լինել աշխատանքի և կապիտալի կռիվին: Նա դիտում եր այդ կռիվը նրա ամենազգվելի արտահայտությունների մեջ:

Սաքոն բանվոր եր և պայքար եր մղում բանվորական ուրվա կրճատման համար, աշխատավարձի բարձրացման, աշխատանքի ավելի լավ պայմանների համար: Յեվ, տարրինակ բան, այդ յերիտասարդը **աստիճան վրա հույս չեր դնում: Նա այդ պառակ հրեական աստծուն բերնից յեկածը ասում եր:**

Սա անսահման ուրախություն եր պատճառում մեր ջահել-տղային: Չէ՞ վոր նա յերեք տարի սրանից առաջ նույն բանը մտածում եր աստծու մասին:

Հիմի այստեղ նա գտնում եր իր մտքերի հաստատումը. —

— Մարդիկ իրանք են ստեղծել աստծուն, իրանք են նրան հնարել: Վերջն ել նրա պատկերը կախել են իրենց խրճիթների անկյունում և ճակատները գետնին դարկել:

Այդպես եր ասում կապը կտրած վարպետի ոգնականը:

Յեվ նա հույսը չեր դնում աստծու վրա:

Վոչ:

Նա ինքն եր աշխատում, վոր իր կյանքը ավելի լավ դարձնի: Նա այդ սովորցնում եր ուրիշներին ել: Ամեն իրիկուն նրա մոտ տնկվում եր բանվորներից վորեն մինը: Յեվ նա նրանց համբերությամբ սովորցրնում եր թե գրել-կարդալ և թե քաղաքականություն:

Դրա համար փող չեր վերցնում:

Փող չեր վերցնում:

Դա իսկի նման չեր իր մինչև հիմի տեսածներին:

— Եղ հարուստներն են հնարել գիտելիքների մոնապոլիան, վոր աղքատները խելքի չըզան, ու վերջը իրենց թամբերից վեր բերեն: Բոլոր դասագրքերն ել այնպես են կաղմած, վոր հասարակ մարդը չըհասկտանա, վոր առանց ուսուցչի չըկարողանա սովորել: Բայց, սպասիր, ինչ ուզում ե լինի՞ յես կավարտեմ բարձրագույն դպրոցը և այն ժամանակ նրանց ցույց կըտամ: Ուսումը ամենքի համար ձրի, դասաւերջերը ամենքին հասկանալի: Հենց այդ պիտի անեմ:

Այդպես եր ասում այդ խիզախ վարպետի ոգնականը:

Այո, նա հույսը չեր դնում վո՞չ աստծու, վո՞չ հարուստների, վոչ ել ինտելիգենտների վրա:

Վոչ ել մինչև անգամ թագավորի վրա:

Ահա այս բանը մեր ջահել տղան չեր հասկանում:

Մինչև անգամ թագավորի վրա:

Չէ՞ վոր թագավորը ամենակարող ե, հարուստ, ուժեղ, արդար:

Յեվ իր ժողովրդի հայրը:

— Եղ սարսաղ միտքը ո՞վ է գլուխդ մացրել, — շպտեց վարպետի-ոգնականը:

— Ուսուցիչները:

— Եղպես ել գիտեյի: Դու ել թժեյիր նրանց սեխ-ներին:

Այ թե ինչ: Հենց ուղիղ սեխին: Այո:

— Ի՞նչ ես ասում:

— Այո, այո, սեխին: Իսկ նրանք քեզ ասել են, թե ո՞վ է թագավորը, թե ո՞վ է նրան թախտ նստա-ցըրել:

— Մոսկվայի իշխանները:

— Տես՜, իշխանները: Իսկ դու գիտես, թե ովքեր էյին իշխանները: Դրանք խոշոր կալվածատերեր էյին, բանվորներին և գյուղացիներին խեղդողներ: Իսկ թագավորը ամենախոշոր կալվածատերն է: Նա ու-նի ընդարձակ անտառներ և վարելահող. ամենա-լավ այգիները, գինու մառանները, վոսկու և ար-ծաթի հանքերը նրանն են: Իսկ նրա կալվածնե-րում բանում են հազարավոր ժողովուրդ և բոլոր նը-րանք, ովքեր սոված են: Այ թե ինչ տեսակն է մեր թագավորը: Նա ամենամեծ կալվածատերն է մեր յերկ-րում, զրա համար ել միշտ պաշտպանում է կալվածա-տերերին ու հարուստներին: Իր դասակարգի կամքը անաջ տանելով՝ նա մահվան և դատապարտում հար-յուրավոր, հազարավոր ազնիվ բանվորների:

Այո, նա հարուստների թագավորն է և քեզ նա չի ոգնի: Դատարկ բան է...

— Ապա ի՞նչ անենք մենք:

Պյոտրը կռացավ նրա ահանջին ու կամաց բայց հաստատ ասավ:

— Պետք է թաղավորին վերացնել:

— Ի՞նչ ես ասում, սպտանձ յես, ի՞նչ ես:

— Վնչ: Սոցիալիստ եմ:

— Սոցիալիստ: Դա յեն չի, վոր արգելված գըր-քեր և կարդում, վորի ձեռն ու վոտը շղթայում են ու ճամբերովը քշում են՝ բանտարկյալների պես:

— Հա՛, հենց եղ:

— Սոցիալիստ:

— Հա: Յես սոցիալիստ եմ:

1002
596

4. ՆՐԱՆՔ ՇԱՏ ԵՆ

Այ թե ինչ բան եր յեղել սոցիալիստը:

14 տարի յե նա ազրում է, ու յերկու մարդու գի-տե, վոր բարի սիրա ունեն, յերկու մարդ, վոր թանգ են նրա սրտին— իր մայրը և մին ել անա այդ վար-պետի ոգնականը:

Յեկ նրանցից մինը—այդ վարպետի ոգնականը սոցիալիստ դուրս յեկավ:

Վոչ, ասել է իր վարժապետը դրուստ չի, ասե-լով, թե սոցիալիստը ամենաչար հանցավորն է: Ախր, այն ժամանակ վոր նրա մեջ կասկած զարթնեց՝ դուր չեր: Յերկու հարցում—աստժու և թագավորի մասին վարժապետը ուղիղ չըզուրս յեկավ: Ասել է նա ճշմա-րիտ չի ասում սոցիալիստների մասին:

Բայց ինչ վոր է՝ ավելի լավ է մի անգամ ել հարցնի այդ մասին:

— Վարժապետը մեզ ասում եր, վոր սոցիալիստը ամենաչար հանցավորն է: Ասել է՝ նա ճշմարիտ չէր:

— Իր տեսակետից նա ճշմարիտ եր:

—Վհնց թե. հիմի դու հանցագործ ես:

—Նայած թե ով ում հոմար, Թագավորի համար, նրա պալատականների համար, բոլոր հարուստների համար—սոցիալիստը չար հանցագործ ե: Նա նրանց դեմ ե կռվում թե խոսքով, թե գործով, կամենալով վերջ տալ նրանց տիրապետութեան:

Բանվորների համար—սոցիալիստը ամենալավ ընկերն ե և ամենից ավելի, ամենապատվավոր և անձնուրաց մարդն ե: Նա զոհում ե իր անձնական յերջանկութեանը, իր ազատութեանը և շատ հաճախ՝ իր կյանքը բանվորի բարիքի համար, նրանց ազատելու համար կապիտալի ստրկութեանից: Յեթե քո վարժապետի լեզվով խոսենք, պիտի ասենք, վոր սոցիալիստը աղքատների համար սուրբ մարդ ե:

—Եդ սոցիալիստները շատ են:

—Շատ:

—Ապա ինչո՞ւ չեն յերևում:

—Ժամանակը կըզա՞ կըտեսնես: Նրանց հետապընդում են ցարական ժանդարմներն ու պահապանները, և նրանք ստիպված են թագնվել ու իրենց յերեսը ամեն պատահողի ցույց չըտալ:

Յես քեզ մի կերպ կըտանեմ գաղտնի ժողով: Այնտեղ կըտեսնես, թե վորքան շատ են նրանք: Միայն մի պայման. պիտի սուս կենաս:

—Հասկանում ես:

—Հասկանում եմ:

—Հն, դե, ուշքդ վրե՛ւ պահի:

Մեր ջահել տղան իսկապես վոր նրանց—սոցիալիստներին տեսավ շուտով:

Դա 1905 թվի հունվարի 13-ին եր: Նա վաղ ա-

ռավոտից սահնակով սպրանք եր կրում. մին ել տեսավ, վոր վագոնի գործարանի մոտ նրա ճամբան կըտրեց բանվորների մի բազմութեան, և նրան ստիպեցին ճամբան փոխել:

Բանվորները գործարանի դարբաններից գետի պես դուրս եյին թափվում և շարքով շարվում: Հետո վորտեղից վոր եր մի կարմիր դրոշակ բերին, և բանվորները յերգելով շարժվեցին դեպի քաղաքի կենտրոնը:

Նա առաջին անգամն եր այդպիսի յերգել լսում, և բանվորների մի այդպիսի բազմութեան նա դեռ յերբեք չեր տեսել:

Ճամբին նրանց միացան բանվորների նորանոր խմբեր, և բոլորը միասին շարժվեցին յերկաթուղու կամրջի ուղղութեամբ:

Հենց մի գլուխ լավում եյին հետևյալ բացականչութեանները.

—Հնց և ազատութեան:

—Կորչի ցարական կառավարութեանը:

—Կորչեն Պետերբուրգի բանվորներին կոտորողները:

—Կեցցե ութժամյա բանվորական որը:

—Կեցցե Դեմոկրատական Հանրապետութեանը:

Բայց այստեղ, յերկաթուղու կամրջի մոտ ինչ վոր մի սարևափելի բան պատահեց:

Վորտեղից վոր եր՝ զանազան կողմերից լավեցին հրացանաձգութեաններ:

Ահա մի բանվոր ընկավ, ապա մյուսը, հետո յերբորդը, շատերը...

—Կրակում են, —լավեցին հուսահատ բացականչութեաններ:

Յեզ բազմությունը վրա ընկավ պաշտպանված տեղերը:

Բայց ո՛ր փախչեա: Չի խմացվում, թե վորտեղից են կրակում:

Բազմության մի մասը փախավ պաշտպանված գետափը, սառուցի վրա: Բայց սառուցը չը դիմացավ և մարդիկ ջրի հատակն անցան և հոսանքը նրանց տարավ:

Հետո յերևացին զինվորներն ու վոստիկանները:

Ասել է՝ նրանք եյին կրակում:

Կրակում եյին բանվորները վրա, հաց պահանջողների վրա:

Ահա նրանք մոտենում են վիրավորներին: Բայց աստված իմ, այդ ի՛նչ են անում: Այդ ի՛նչ բաներ են անում:

Խփում են հրացանի կոթերով, արորում են վոստներով, ձերբակալում են: Վիրավորներին:

Մեր աղան մի կերպ տուն հասավ, ընկավ իր թախտի վրա և կատաղի չարությունից հեկեկաց:

Ահա թե ինչ տեսակն է յեղել թագավորը, Չե՛ վոր նրա ծառաներն եյին այդ բանն անողները: Նրանք կատարում են նրա հրամանը: Նրան պաշտպանում են:

Բայց ո՛ւմնից: Բանվորներից:

Բանվորներից:

Ահա թե նա ումնից է վախենում:

Ասել է՝ իր ընկերը ճիշտ է ասում: Ճշմարիտ:

Յեզ դրանք սոցիալիստ եյին: Ուրիշ վոչինչ, մենակ սոցիալիստ:

Այժմ նա նրանց տեսավ: Տեսավ:

Նրանք շատ են:

Շատ:

5. ՆՐԱՆՔ ՔՆԱԾ ՉԵՆ

—Ո՛ւյ, արյունարբո՛ւններ, յես նրանց ցույց կը տամ մեր ընկերներին գնդակահարել: Յես նրանց ցույց կտամ,—չեր հանգստանում խառատի ոգնականը:

—Եդ բաներն ինչո՛ւ համար յեղան:

—Վախներից ծնկները ծալվեցին, ահա թե ինչո՛ւ համար: Իրենց քսակների համար անհանգստացան: Յեզրոպայում մի ուրվական է շրջում, կոմունիզմի ուրվականը, իսկ բուրժուազիան վախից ձեռը դցել է գենքին: Նա ուզում է անխուսափելի առաջն առնել: Ուզում է մի քիչ ել հեռացնել այն վայրկյանը, յերբ բանվորը նրան գերեզման կը դնի:

Չե՛ վոր աղոթքներով, իկոնաներով Պետերբուրգի բանվորները մի շարաթ առաջ գնացին թագավորի մոտ. իսկ նա նրանցից վախեց և գնդակներով դիմավորեց:

Հացի տեղ արձիճ ու արյուն: Ահա նրանց պատասխան:

Ահա ձեր հայրը, թագավոր-հայրիկը: Գնա հիմի գլուխ վեր բեր նրան: Ծո՛ւնկ չոքիր: Տուֆլիները պաշարա: Ինչի՛ց յես սուս կացել: Հիմի հասկացա՛ր:

Հը՞:

—Հասկացա:

—Դե, հիմի տես: Ես խրատը լավ ո՞ղ արա ա-կանջիդ ու կախիր:

Այո, նա հիմի սկսեց հասկանալ այդ խորամանկ մեքենայությունները. խառատի ոգնականը նրան այդ բանում ոգնեց:

— Լարատության աղբույրը յերկու բանուսն է—
հողը և բանվորի աշխատանքը: Յերկնքից վոչինչ չի
թափվում: Իսկ բուրժուաններն իրենց ձեռն են գցել
այդ աղբույրները: Հողը հայտարարել են իրենց սե-
փականութուն: Իներքն իրենք են հավաքում: Իսկ
գյուղացուն իրա աշխատանքի համար թողնում են վո-
ղորմելի գրողներ, այնքան վոր սովից չըստակեն: Նը-
րանք իրենց ձեռն են գցել բոլոր ֆաբրիկաներն ու
զավոդները, բոլոր աշխատանքի գործիքները, և բան-
վորը ստիպված է մի քանի գրողի նրանց ծախել իջ
աշխատանքը: Դու նրան մի ուրբուր բան էս արտա-
գըրում՝ նա քեզ տալիս է հիսուն կոպեկ: Մյուս հիսու-
նը դնում է գրպանը, վորպեսզի նոր կապիտալ դիգի
և նոր ստրկության շղթաներ կռի հենց քեզ համար:
Փողը նրանց մոտ, իրենք գլխիդ տերը: Իսկ փողի
համար սատանան էլ պար կըզա:

Մտիկ տուր դպրոցներին: Ի՞նչ են սովորցնում:—
Իշխանությունը հարգել:

Կարգն լրագիրները: Ի՞նչ են գրում:— Իշխանու-
թյունը հարգել:

Ականջ արա նրանց քարոզներին: Ի՞նչ են սո-
վորցնում:— Իշխանությունը հարգել:

Մտիր զսրանոցները: Ի՞նչ կըլսես այնտեղ:— Իշ-
խանությունը հարգել:

Ինչի՞ցն է դա: Նրա համար, վոր իշխանությունն
այդպես է ուզում, նա դրա համար վճարում է: Բուր-
ժուաղիային պետք է հնազանդ ստրուկ՝ ուժեղ մկան-
ներով և թույլ ուղեղով: Յեվ այդպիսի ստրուկ ունե-
նալու համար կառավարությունը սարքել է յեկեղեցին,
դպրոցը, գիրքը, լրագիրը:— Ամեն, ամեն բան...

Ո՞վ կարող է այս կարգը փոխել:

Վոչ վոք՝ բացի ձեզանից:

Դե վոր եդպես է՝ ուժեղ ուսներդ թոփ տվեք և
դճն շպտեցեք ձեր վրա հեծած բուրժուային:

Դուք հարյուր միլիոններ եք, նրանք հազարա-
վորներ են:

Միշտ պիտի լուծը քաշենք մենք:—

Ահա այսպես եր խոսում նրա բարեկամը, իսկ
հիմա յե՛լ՝ ընկերը անտառի ժողովում: Յեվ նա տեսավ,
թե ինչպես եյին վառվում բանվորների աչքերը, ի՞նչ
պես եյին բուռնցքները կծկում՝ վճռելով փոխել գո-
յություն ունեցող կարգերը:

Այդ սոցիալիստները չեյին քնում: Նրանք աշ-
խատում եյին: Յեվ նրանց համախոհների թիվը հե-
տըզհետե ավելանում եր:

Բայց նրանք միայն խոսքով չեյին աշխատում:

Նրանց գլխում ծագեց վրեժ առնել ընկերների
դնդակահարության համար և նրանք կանգ չեյին առ-
նում ժանդարմներ յպանության առջև:

Մի անգամ, մայիսյան մի կիրակի որ, յերբ
նա կրկին այցելեց իր հիվանդ ընկերոջ, վորը դեռ
սենյակից դուրս չեր գալիս, խառատի ոգնականը նը-
րան հանդիպեց ժպտալից տեսքով:

— Փառավոր առավոտ է, այնպես չէ:

— Շնտ:

— Փանդարմները վոնց են ձիերը խաղացնում:

— Չեմ տեսել:

— Մի քիչ առաջ պիտի գայիր: Եսպես՝ առավոտ
ժամը վեցի մոտ: Հիսունի չափ անցկացան:

— Ի՞նչ բան ունեյին:

—Սրտերը կապարե լոբի յեյին ուզում: Նարինջ-
ներով հյութասիրեցին նրանց, հն, հն, հն:

—Չեմ հասկանում:

—Փամանակն և հասկանալու, բարեկամ:

Յեվ նա կոացավ մեր տղայի ախանջին:

—Չարդախից նրանց վրա բոմբ նետեցին: Տասն
յերկու ձիավոր մնաց տեղն ու տեղը:

Յեվ ծիծաղեց... գոհունակ, ուրախ ծիծաղով:

—Բոմբ:

—Իսկական, լցրած: Շատ ուժեղ եր:

—Յեվ այդ դո՞ւ արիք:

—Սնւ կաց, շուն:

—Այ թե բանն ինչու՞ն է: Բոմբ են գցել: Ես
մեր բաշխողուկը չըլինի՞ արած,—անցավ նրա մտքով...

Բայց նա դեռ կաղում է: Ասենք՝ նա կարող եր
միայն բոմբը լցրած լինել: Չե՞ վոր նա քիմիկոս է:
Դա՞ն հենց այդպես է, թեկուզ նա ուրանա յել:

Այ թե ինչ գործով և նա այստեղ պարապում:

Ապա ինչո՞ւ յե նա իրան ուրիշ կերպ ուսուցանում:

Նա հիշում և նրա խրատները. —

—Եղ անըզգամներին սպանել չարժե: Մոծակի
պես բաներ են: Մեկին կըծխես՝ հարյուրներով կըզան
վրադ:—Վոչ, առանձին սպանություններով գոյություն
ունեցող կարգը չես փոխիլ: Անհրաժեշտ է բանվորնե-
րի և գյուղացիների ընդհանուր շարժումն, պետք է
հեղափոխություն:

Այո, Սաքոյի խոսքերը, ըստ յերևույթին գործից
տարբերվում է:

Ասել է՝ չըղիմացավ: Նրա բնավորությունն այդ-
պես է:

Այո, նրանք քնած չեն:

Այդ իր աչքով տեսավ: Ահա նա քաղաք յեկավ
այն հասկացողությամբ, վոր սոցիալիստները ամենա-
չար հանցագործներն են, իսկ հիմա նա նրանց աստ-
վածացնում է: Նա ինքը շուտով սոցիալիստ կըդառնա:

Այո:

Արդեն իր տիրոջ հետ յոյա չեր գնում, իսկ հիմա
բանը հասավ գործադուլի: Տերն ուզում եր նրան ըս-
տիպել, վոր տոն որերն ել բանի: Իսկ նա մերժեց:
Տերը նրան նախաձաշին շընալակ տվեց, սա յել հա-
ցադուլ հայտարարեց:

Ու բանը հասավ կովի:

Նա ուզում եր սովորել, վորպեսզի ինքն ել ու-
րիշներին սովորեցնի, բայց աշխատանքի հիմիկվա
պայամաններում վոչ ժամանակ եր մնում, վոչ միջոց:

Առաջին տարին նրան ամսենը վճարում էյին 3
ուրբլի, ճաշը տիրոջ վրա. հիմի նա ստանում էր
չորս ուրբլի, իսկ հետեյալ տարին նրան պիտի վճա-
րեն մի ուրբլի ավել:

Չենց մենակ այդ նրա աշխատանքի համար:

Չե՞, նա այդքան ել հիմար չէ, ինչպես մի տարի
առաջ, յերբ հավատաց իր քեռուն, թե դա լավ տեղ է:

Չերիք է: Նա գյուղ կըգնա: Այնտեղ կյանքը ա-
վելի եժան է: Նա ամառը կըսովորի, կըպատրաստվի
քննություններին, վորպեսզի աշնանը մտնի ուսուց-
չական ինստուտը:

Այո, նա կանի այդ բանը:

Նա այդ աշխատանքն եր ուզում ընտրել իր հա-
մար.—յերիտասարդ սերունդին սովորացնել նոր ա-
վեսարանը:

Այդ ամենը մտածողը նա յեր, նա, վոր մի տարի առաջ այդ քաղաքն եր յեկել բոլորովին վայրենի:

Ահա սա յիլ քեզ արդյունաբերական քաղաքը: Ինչ հրաշքներ ե գործում նա:

Այո, նրանք աշխատում եյին, այդ սոցիալիստները:

Բոլոր յեռանդով:

6. ԱՅՍԵՂ Ե՛Լ ԵՆ ԱՇՆԱՏՈՒՄ

Այսպես ուրեմն, նա գնում ե գյուղ: Նա մտքում դրածը ուզում ե իրագործել:

Ահա կանգնել ե նա շեմքին և հրաժեշտի վողջույններ ե տալիս իր վարպետին.—

— Խնդրեմ պասպորտս հետ տաք:

— Բանն ինչու՞ն ե:

— Իմ պասպորտն եմ ուզում:

— Ապա մի ետե՛ղ արի:

Նա, բան չըկասկածելով, մոտենում ե: Վարպետը բռնեց նրա ձեռքից ու մին, յերկու, հենց շըխկացրեց ապտակները, վոր ականջները թըշաջին:

— Ա՛ռ քեզ պասպորտ, ա՛ռ քեզ:

Այդ արդեն չափազանց եր: Վարպետը համարձակեց մարդամիջում նրան թակել:

Կա՛վ, թույ մտքումը պահի, վերջը կուտեցնի: Իսկ վարպետը վո՛չ պասպորտ ե տալիս, վո՛չ իրերը, վո՛չ ել հաշիվ:

Ստիպված յեղավ հաշտվելու: Յե՛վ անա այնպես ցույց տվեց, թե հաշտվել ե և սկսել ե աշխատել, ինչպես առաջ:

Վարպետը ուրախացավ, թե տղայի կամակորուժյունը կտորվեց: Իսկ մեր տղան աչքաբաց եր, յերկրորդ տարին կոմմի-վոյաժոր ե գնում: Այդպիսիներին շատ չե՛ս ճարի: Մեծի պես գործ ե տեսնում:

Բայց վարպետը սխալվեց:

Մեր տղան յերեկոները ուր վոր կորչում ե տանից: Յե՛վ ամեն անգամ թե՛ի տակ ինչ վոր բան ե հետը բերում:

Նա սուս ու փուս իր հիվանդ ընկերոջը բան ե տանում ուտելու:

Հիմի յե՛լ նա իր վարպետին ձեռ կառնի:

Մի շաբաթ անց ելի յե կանգնում դռանը.

— Խնդրեմ հաշիվս տաք:

— Գժվեցի՛ր:

— Ձե, խելքս տեղն ե:

— Ապա՛ մի մոտ արի:

— Այստեղից ել կարելի յե խոսել:

— Դե, հիմի իմացի՛ր, վոր քո՛զ գրոջ ել չես ստանա:

— Տուրեցե՛ք իմ աշխատանքի փողերով: Մնաք

բարով:

— Ինչ ասի՛ր, ինչ ասի՛ր:

— Տ՛տեսություն:

Գրակը հանեց ու հանկարծ չքացավ:

Մի շաբաթ անց նա արդեն գյուղումն եր:

Բայց ի՛նչ եր դառել գյուղը:

Անտառի ժողովներ, հեղափոխական յերգեր, կարմիր դրոշակներ, ստրաժնիկների հարձակումներ...

Յե՛վ այդ ամենը իր գնալուց յերկու տարի հետո՛:

Ա՛յ թե նրանք ինչ տեսակ մարդիկ են:

Այստեղ էլ են աշխատել: Բռնված ուսուցիչներին սերմածը արդեն ծիլեր եր տալիս:

Կեցցեն:

Ապա մի տեսնենք, իսկապես, ինչ բանի յեն:

Պետք է մտիկ տալ:

Ահա լուր են տալիս, թե մի ագիտատոր է յեկել: Լուրը հաղորդում են ծանոթը-ծանոթին: Վերջ ի վերջո ամենքը գիտեն, բացի գավառի ստարշինայից:

Ահա մեր տղան ժողովումն է:

Բայց ի՞նչ բաներ են լինում, ի՞նչ բաներ են լինում այնտեղ: Նա կարծում էր, թե այստեղ կըպատահի միայն աղքատ մշակների ու մանր արհեստավորների. բանից դուրս է գալիս, վոր այդտեղ են թե՛ տերերը, թե՛ մշակները, թե՛ ուսուցիչները. խառնվել են իրար, վոնց վոր շիլավիլավ:

Ես վոնց են տերերը իրենց ծառայողներին հետ մեկտեղ:

Բանն ինչո՞ւնն է:

Գաղտնիքը բացվում է շատ հասարակ:

Նորահաս մորուքավոր մի տղա, վոր քսան դեսյատին հող ունի՝ ճառախոսում է.

— Եդ շանվորդիներին պետք է ջնջել աշխարհի յերեսից: Յեկան, գրավեցին մեր հողերը, բահրա դըրին. հիմի արի ու քո ունեցածը թող քեզ ծախեն: Տեսաք ինչ թալակ սարքեցին:

— Յես ենպես մի մախաթ կըկոխեյի դրանց հետեւը, վոր թող ուղ ըլին իրենց հայրենիքը—ձայն է տալիս մի ուրիշ կալվածատեր:

Իսկ մշակը նրան հենց ձակատին է խփում.

— Եդ դուք բարոններից եք խոսում: Լավ չի՞ լի-

նի ինքներդ ձեզ մտիկ տաք: Բասն դեսյատին ունես, ինչո՞վ բարոն չես:

— Աչքդ ի՞նձ տեսավ: Այ, բարոններից հողերը կըխլենք, դու յել քո հողաբաժինը կըստանաս:

— Կանչեցե՛ք բարոնին:

— Կանչեցե՛ք:

Իսկ հարևան խումբն արդեն վեր է քաշում թուխավոր յերգը.

Ա՛խ դու, Գերման, դեի ճուտ,

Քեզ պար կածե՛մ՝ յես մի որ.

Տաքացրած ահուռին

Վրտներդ մի երվին՝ վոր...

Կըգա՞ որը հատուցման

Կաց դու, ջիգրս կըհանեմ

Ապուղապիս—սլապերիս

Հարյուրպատիկն յես կանեմ,

Մի ջուխտ Գերման կըլծեմ

Խոպան հողը վարելու,

Յերկուսին էլ կըքշեմ

Վարած արտը ցելելու:

Են մի զույգն էլ կլծեմ

Կերթամ անտառ կըծան գամ,

Կա՞վ կըհունցեմ բակի մեջ

Սելով ահուռ կըկրեմ:

Յե՞վ այլն:

Այո, գաղտնիքը բացվում է. տերերին ու մշակներին միացրել է մի ընդհանուր ատելուժյուն գերմանացի բարոնների գեմ, վորոնք այստեղ վոչ միայն ամենալավ հողերին են տիրում, այլ և իշխանուժյան ներկայացուցիչներն են, բնակչուժյան բախտի անորինողները:

Յեկավ ճառախոսը:

Նա բարձրացավ կոճղի վրա և ձեռքով նշան ետնում, վոր սուս կենան:

Տիրում ե լուսթյուն: Սկսում ե բարոններից և անցնում ե մշակների դասն վիճակին:

Դա ամենքին հասկանալի չե, մոտ ե: Աղմակալի նշաններ հավանության:

Բայց անանա անցնում ե միապետության հարցին:

— Չարիքի արմատը, — ասում ե նա, — միապետական կառավարության մեջն ե: Դա կալվածատերերի, գործարանատերի, հարուստների կառավարությունն ե: Այդ կառավարության գլուխն ե մի ապուշ թագավոր, վորը կարտոնս պարյեկողի պես՝ հենց վոր հարուստները թելը քաշում են, պարում ե նրանց ուղածի պես: Քանվորները հաց են ուզում, նա նրանց կապար ե հրամցնում, բանվորները ազատություն են պահանջում, նրանց բանտ են գցում: Պոկեցեք չարիքի արմատը, ոճգ արեք թագավորին, և մեջներդ լիությունն ու ազատությունը կըտիրե:

Այստեղ ել մի անսպասելի բան պատահեց: Հենց վոր ճառախոսը իր խոսքի մեջ հասավ թագավորին՝ տերերը քաշվեցին անտառն ու ծլկըվեցին:

Քանի խոսքը գերմանական բարոնների մասին եր՝ նրանք առաջին կարգի հեղափոխական եյին: Այ, հենց վոր բանը հասավ թագավորին՝ կծիկը դրին:

Վճնց կարելի չե թագավորի սրբազան անվան ղիպչել:

Իսկ մշակները ցրվելով ձայն են տալիս.

Ռվ ե բարոնների առաջնորդը—

Նիկալայ Ռամանով յերկրորդը կայն:

7. ՆԱ ԳՐՎՈՒՄ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏ

Մեր տղան քաղաքից յեկավ և կարծում եր թե այստեղ առաջինը պիտի լինի, դուրս յեկավ ամենքի պոչի մեջ:

Ահա նրա դասընկերները, մինչև տնգամ քեռին, արդեն յերկու շաբաթ բանտ են նստել, իսկ ինքը դեռ նազայկայի համը չի տեսել:

Նա պետք ե առաջին կարգում լինի, ինչ ուզում ե՝ լինի:

Հիմի յեկ նրան դառնացրին մի հարց տալով.

— Դու սոցիալիստ ես:

Նա պատասխանում ե.

— Սոցիալիստ եմ:

— Գրքույկ ունե՞ս:

— Ի՞նչ գրքույկ:

— Վոր դու գրված ես սոցիալիստ:

— Ասել ե՞ պիտի գրված լինել:

— Անպատճառ:

— Վորտե՞ղ են գրվում:

— Մեր դավառական ուսուցչի մոտ:

— Յես նրան չեմ ճանաչում:

— Վճնց չես ճանաչում, այ եսպես միբուքավոր մարդ ե:

— Միտս չե. ախր յերկու տարի յե՞ եստեղ չեմ յեղել:

— Հա՛: Բաս գնանք, կըձանոթացնեմ:

Յեկ գնաց նա սոցիալիստ գրվելու:

Նրան մինչև տնգամ չըհարցրին այն մասին, թե հասկանում ե սոցիալիստն ինչ բան ե:

Յեզովիտները հարցնում այդ մասին: Դա 1905 թվին նախորդակն եր, փոթորիկները և առաջախաղացութեան տարին: Ով մտնում եր մարտիկների շարքը՝ սիրով ընդունվում եր, ինչ ծագում կուզի ունենար:

Իսկ նրա մասին են եր խոսվում, վոր քաղաքացի չի:

Այո, նրան սոցիալիստ գրեցին: Հիմի նա սոցիալիստ ե, իսկական սոցիալիստ:

Հիմի նա կըկովի:

Բան:

8. ՇԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉ ԿՈՄԻՏԵՆԵՐ

Տեղական գյուղացին կրկնակի ատում ե գերմանացուն: Գերմանացին այստեղ թե կալվածատեր ե և թե պետական իշխանութեան ներկայացուցիչ ե: Յեթե հարուստ գյուղացին ատում ե նրան ինչպես կալվածատերի՝ ապա մշակները նրան ատում են թե իբրև կալվածատերի և թե իբրև պետական իշխանութեան ներկայացուցչի: Ո՞վ ե բարձրագույնը դատարանը վարում: Գերմանացի բարոնը: Ո՞վ ե կառավարում յեկեղեցական դուլքը: Գերմանացի բարոնը: Ո՞վ ե ոգավում ձկնորսութեան, վորսի, արդյունաբերական և խմիչքեղենների հիմնարկների իրավունքով: Գերմանական բարոնները: Ո՞վ ե ձերբակալում, բանտ նստեցնում: Նույն գերմանական բարոնները: Ո՞վ եր անպատվում կնոջ կամ աղջկա պատիվը: Գերմանական բարոնները: Ո՞վ եր ճորտական կարգերի մեջ պահում հայրերին ու պապերին: Գերմանացի բարոնները:

Ո՞ւր ե բոլոր այս դժբախտութեանների արմատը:— Գերմանացի բարոնների մեջ:

Դե վոր եդպես ե՝ կորչեն գերմանական բարոնները:

— Կորչեն:

Յեզովիտները ատելութեամբ հորձանք տվեց, քչեց տարավ ցարական որենքի պատվարը, տակովն արավ այն ամենը, վորի անունն ե իշխող դաս ու իշխանութեան:

Ամեն տեղ միտինգներ, ամեն տեղ ժողովներ: Գյուղը քաղաքից առաջ ընկավ:

Բայց հա քաղաքն ել ցարին ստիպեց, վոր Հոկտեմբերի հրովարտակ տա:

Շարժվեցին: Դեմ տվին:

Ձոռ տվեք, ընկերներ:

Ձոռ տվեք:

Կորչի գավառի ստարշինան: Նա ցարի իշխանութեան նշանակածն ե:

Կորչի գրագիրը, նա ստարշինի աջ ձեռնն ե:

Կեցցեն բոլոր ժողովրդից ընտրված Հեղափոխական կարգադրիչ կոմիտեները:

Տեղական բարեգործական ընկերութեան դահլիճը լիփ-լիցուն ե ժողովրդով: Ճառախոսը բեմից հին իշխանութեան բժշկները յերկինք ե հանում:

Մեր տղան այդ շատ լավ ե հասկանում: Բայց այ այս կարգադրիչ կոմիտեների բանը չի հասկանում: Այդ ի՞նչ կոմիտեներ են: Ի՞նչպես պիտի կառավարեն նրանք:

Այստեղ ճառախոսը արդեն անցավ ընտրութեանների:

Ընտրում են տասյերկու մարդ: Նրանք պիտի նստեն առաջվա գավառական վարչության և ընտրածների ժողովի տեղ:

Բայց այստեղ ներկայի գավառական ստարչինան: Նա վնչ մի դեպքում չի յենթարկվի ապորինություններին: Վնչ մի դեպքում:

Այդպես, և հո՞:

Ապա, տղերք, դրա շլանքակոչիցը բռնեք: Թող բանալինիներն ու կնիքը տա:

Շնուտ:

— Դեսը տվեք դրան, — բղավում է մի շեկ յերիտասարդ ատրճանակը ձեռքին: — Յես նրան կապարե լորիներ ուտեցնեմ վոր:

Բայց անա թնդում է ճառախոսի ուժեղ ձայնը.

— Ընկերներ, ձեռներդ մի կեղտոտեք այդ զզվելի արարածին զիպչելով: Նա պետք է մեզ հանձնի փողի բանալիները, կնիքը, գործերը և ամեն բան:

— Ճմարիտ է:

Ստարչինան գունատ քաթան կտրած՝ վեր է կենում, գնում: Նրան տանում են շրջանային վարչության դուռը գործերը հանձնելու: Բազմությունը ազմկում, սոստում է:

Ամեն մեկը իր մաղձն է թափում և ստարչինային բերնին յեկածը կպցնում է:

Ահա և քաշ տվին, հասցրին տեղ:

Բայց ստարչինան քարացել է. տեղից չի շարժվում, չի խուսում, մեռնելու չափ գունատ է:

— Հանձնում ես, թե վնչ:

Ստարչինան լուռ է:

Վոստոտ մահակը իջնում է նրա լայն մեջքին:

Բայց ստարչինան դեռ լուռ է: Նա չի կարողանում վճռել բանալին հանձնելու: Յերկու կրակի մեջ է: Յեթե ցարական իշխանությունը հաղթե՝ նրան շամփուրը կըշարեն: Թե ժողովուրդը հաղթե՝ նրան կըվնասեն չքհանձնելու համար: Առաջինը ասենք դեռ ժամանակ կա, բայց անա մահակը նրա գլխին բարձրացել է:

Դե վոր այդպես է՝ լավ է հանձնել: Հանձնել, բայց ուժից ստիպված: Բազմությունը շրջապատեց նրան սեղմ ողակով, սպառնալի բռտեցքները քթին դեմ են անում: Իսկ մահակը կրկին իջնում է և ուշքի բերում ստարչինային:

— Առեք, ավազակներ:

— Մտիկ տվեք, տղեք, բոլոր բանալիները այստեղ են: Բաց մի թողնեք դրան: Բաց մի թողնեք:

Բայց ստարչինան արդեն դուռն սոստն է:

Հեղափոխական ժամանակավոր Կարգադրիչ Կոմիտեյի նախագահը անցնում է իր պարտականությունների կատարման:

Ուռում:

Կեցցե՛ ազատությունը:

Կեցցե՛ Կարգադրիչ Կոմիտեն:

9. ԲԱՅ ԹՈՂԵՔ ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐԸ

Ժողովրդի զայրույթը վտար դրեց անցավ իշխանության վրայով: Ամենազլխավորը կատարվեց: Հիմի էլ վոչ մի արգելք չըկա:

— Հիմի բարոնները կըտեսնեն...

— Ո՞վ պիտի պաշտպանի նրանց:

— Գյուղացիները, մշակները, արհեստավորները:

— Իրանցից վոչ մինը:

— Ապա ո՞վ:

— Տերտերները, պատորները, կալվածատերերի նոքարները:

— Հա՛, հա՛, հա՛...

Ասենք բարոնները իրենք էլ են զգում, վոր զրանցից պաշտպանություն չի դուրս գա:

Անցյալ կիրակի մի դեպք պատահեց, յերբ յեկեղեցում միտինգ արին, իսկ պատորի ձեռը կարմիր դրոշակ տվին: Ստիպեցին թափորի առջևից գնալ:

Վոչ, միակ հույսը զինվորների վրա յե:

Յե՛վ նրանք կանչում են զինվորներին:

Կալված չկա, վոր զինվորներով պաշտպանված չլինին:

— Եղպես, հա՛, — շվացնում են տղերքը:

— Տղերք, չիբուխը վառեք:

— Բաց թողնենք կարմիր աքլորը:

— Աքլորը:

Ժողովուրդը, ինչպես սարից պոկված քարաշեղջ՝ թափվեց կալվածատների վրա: Զինված՝ վորը գերանդով, վորը կացնով, վորը ձողավոր հրացանով, նրանք իրենց բազմությամբ սարսափ պցեցին զինվորների մեջ, և նրանք աճնատուր յեղան ամենուրեք, ուր զգացին վոր կտրված են արտաքին աշխարհից:

Յերևան յեկան առաջին հրացաններն ու առաջին մարտական զորամասերը:

Ապա հիմի տեղներդ պլինդ կացեք, աղա—պարոններ:

Բայց զենքը քիչ է դեռ: Պետք է զինաթափ անել անտառապահներին և կալվածների կառավարիչներին:

Յե՛վ անա խուլ կես-գիշեր ժամանակ, մի-մի անանգամ բոլորովին անզեն հեղափոխականները շրջապատում են անտառապահի կառավարչի տունը, խուղարկում են և վերցնում են բոլոր հրազենները:

Ինչո՞վ են նրանք հիմի պակաս զորքից:

— Բա՛. դե հիմա իմացեք, հարուստներ:

— Բաժանենք հողը, բաժանենք կալվածը:

Յե՛վ ամբողջ շրջանը հեղեղի պես թափվում է կալվածների վրա:

Առաջին գործը—վառել պետք է կալվածատուները:

Այդ պիտի անել առանց խղճալու: Աղայի բունը պիտի վոչնչանա: Մինը ձեռը տարավ սեղանների գզրոցներն ու ման է գալիս սենյակներում:

— Զըհամարձակվես, մենք կողոպտիչներ չենք: Թող վողջը վառվի:

Բայց զուր տեղը ինչո՞ւ փչացնել հարստությունը: Լավ չի՞ լինի աճուրդով ծախել ու փողը հասարակական գանձարանը մտցնել:

— Ա՛յ, դրուստ է, աճուրդով ծախել:

Յե՛վ անա սկսում է թխթխկալ աճուրդի մուրճը:

Կովերը, ձիերը, իրեղենները—բոլորը գնվում է գյուղացիների կողմից և շրջանների վրա բաժանվում:

Հասակավորները զբաղված են աճուրդով, իսկ յերեխաները քրքրում են այրված տան ավերակը և հանում են այրված դաշնամուրի պղնձե լարերը: Լարերը բոլորովին փափկել են: Լավ վոր հյուսես՝ հիանալի նագայկա կտացովի: Կառնես ու մի լավ կըշրխկացնես բարոնի մեջքին:

Չը՛, վրեժները կըհանեն նրանք, կըհանեն:

Սրտներումը ինչքան վոր քեն ունեն և սերնդից

սերունդ անցել է՝ այդ ամենի սիրտը հովանալ ե ուզում:

Ջոհված աղջկան համար, ստրկական աշխատանքի մեջ չորացած ծնողներին համար, անուրախ յերիտասարդութեան համար—բոլորի, բոլորի համար հատուցում կըլինի:

Դողացեք, հարուստներ, յեկավ ժամը վրեժխնդրութեան:

Յե՛վ անա զնաց կարմիր աքլորը շրջակայքում այրելու ամեն ինչ:

Հենց մի գլուխ բոցավառվում են հրդեհները մեկը մյուսի հետևից, և շուտով մի հատ կալվածատիրոջ տունը չըմնաց, վոր աղատվեր:

10. ԱՌԱՋԻՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարտական խմբերն արդեն մի կերպ զինված էյին: Մեր տղան ել մի շամփուրավոր հրացան ձարեց և հերոսի պես ման եր գալիս: Դուրսը սառնամանիք է, բայց նա կիսաբորեիկ, միայն ամառվա պիջակ հագին, ամբողջ որեք անց է կացնում արշավանքների մեջ: Վնչ քաղց է զգացվում, վոչ ցուրտ: Մարդիկ ապրում են միայն մի մեծ վոզկորությամբ: Ուտում են քայլելիս, քնում են քայլելիս:

Միշտ ժամանակ չըկա: Գործ պիտի անել: Հարևան կալվածում, գարեջրի գործարանում, իմացվում է, վոր դարան են մտել և ամրացել շրջակա բարոնները ավագ անտառապետների հետ:

Անհրաժեշտ է նրանց այնտեղից խուկել: Թշնամուն թողնել թիկունքում չի կարելի: Մարքում են մի արշավանք:

Գործը լուրջ է: Բարոնները զինված են կանոնավոր հրացաններով և դարան են մտել գարեջրի գործարանի հաստ պատերի հետևում:

Լուրջ կռիվ հոտ է գալիս, դրա համար ել մարտիկ խմբի մեջ ընդունում են միայն հասակավորներին:

Իսկ մեր տղան տասնըվեց տարեկան է միայն: Բայց նա այնպիսի մի հասակ է քշել, վոր տասնըյոթ տարեկան են կարծում:

Հրացանն ուսին, փափախը ծոծրակի վրա կոտրած, նա իր հերթին մոտենում է վառող ստանալու:

—Քանի տարեկան ես:

—Տասնըյոթը:

—Պարում ես... Չահել ես, անց կաց:

—Եդ վոնց կըլինի:

—Վառողը քիչ է, չի կարելի գուր տեղը փչացնել:

—Յես գուր տեղը չեմ փչացնի: Հարցրեք, թե վոնց զինաթափ արինք վոստիկանութեանը: Քանի հրացան, փամփուշտ ձեռ բերինք:

—Մի՞թե:

—Բա՛ս: Ա՛յ նրանց հարցրեք:

Խմբից ձայն են տալիս:

—Նրան կարելի յե: Նա վառող գուր չի փչացնի:

—Դե լավ, բուռդ դեմ արա:

Յե՛վ վառողը սև ցոլուն հոսանքով արդեն լցվում է բուռը:

Կես ժամից հետո նա արդեն անպիտան բեռնակիր ձիու վրա յե և խումբը ձամբա յե ընկնում:

Համախմբման վայրը շրջանային դպրոցն է, յերեք վերստի վրա այն կալվածից. այստեղից ուղարկվում են հետախույզներ, վորպեսզի հաստատեն զին-

վորները ներկայութիւնը և ամբարցած դիրքերը դըրութիւնը:

Քանի դեռ հետախույզները ճամբա յեն ընկել, խումբը մաքրում և դպրոցը: Այստեղ ինչպես և յեղել, կահավորումը ազատվել և վոչնչանալուց: Պատերից դեռ կախ են ցարական պատկերները:

— Ի՞նչպես կարելի յե սա:

— Կրակն ածեք: Կրակը:

— Ձե, ինչո՞ւ: Բերեք եղ արագիւնների աչքերը ծակենք:

— Դէնը կանգնեք, մի կրակեմ դրանց վրա:

— Խեղազարութիւն և,—բղավում և պառավ ծառայողը, բայց կրակոցի ձայնը խլացնում և նրա խոսքերը և Նիկալայ Զ-րդը խախալի պես ծակծկվում և:

— Եղպես դրան, եղպես:

— Իսկ յես մի կըհասցնեմ եղ սպիրտի տակսա Աղեքսանդր 3-րդին:

— Նրան կոտորակով չես վնասի, վերքը ճարպի մեջ կըկորչի վայրի խողի պես ու բան դուրս չի գա դրանից:

— Ասում են, տասնյերկու փութ եր քաշում:

— Ինչի՞ չեք քաշի, մեր ճարպի մեջ եր լողում:

— Ապա մի ծակի դրա աչքերը:

Իս ջահելների բանն և: Նրանք յեռանդով են աշխատում: Շուտով բոլոր պատերը մաքրված են և չարածիները նոր կատակներ են անում:

Տեղական դերձակը զգեստավորվում և վերմակով, և սկսվում և ժամերգութիւն, յերգիծանք տերտերների և կրօնի վրա:

Բայց ահա հետախույզներն յեկան:

Ձինվորները յերեկ հեռացել են, իսկ բարոնները իջել են գարեջրի գործարանը, պատուհանները ամբարցել են հողով լի պատկերով: Նրանք 20 մարդ են, բոլորը կանոնավոր հրացաններով:

— Դատարկ բան և, եղպիսիների հետ գործ ունեցել ենք:

Գիշերը անաստված խավար և: Շինութիւնների զանգվածների մեջ աչքդ բան չի ջոկում: Խումբը հանդարտ մոտենում և:

Կալվածը ամեն կողմից շրջապատվում և: Դեռ չեն պառկել պաշտպանված տեղերում, վոր գարեջրի գործարանից կրակել սկսեցին:

Խումբը առաջի հերթին գրավում և կալվածատիրոջ տունը, հանում և տելեֆօնը, վոր հաղորդակցութիւնը արտաքին աշխարհի հետ կտրի:

Մեր տղան շամփուրավոր հրացան ունի, դրա համար ել նրան հանձնել են կալվածատիրոջ տան գրավումը:

Ահա նրանք, գողեգող մոտենում են տանը: Գարեջրատնից կատաղի կրակ են բաց անում: Ձի յերևում վոչ կրակող, վոչ նշանակետ, բայց յերկու կողմի ել չեն ընդհատում կրակելը: Հենց մի գլուխ գիշերվա մթնում փայլատակում են հրացանների փողից դուրս յեկած կրակները:

Ուղում ականջ ծակող սուլուց և: Մի հարված և լսվում պողպատին հասցրած՝ և մեր տղայի ընկերը վեր և գցում յերկփողանի հրացանը:

— Կալվածատիրոջ տանից զնդակներ են գցում... այդ անցավ նրա մտքով: Նրա առջև ընկերը հայհոյում և:

—Ձեր հերն անիծած: Գնդակով տվին հրացանիս, մոտենանք լուսին: Չլինի՞ հրացանս փչացրին:

Բանից դուրս ե գալիս, վոր գնդակը տարել ե աջ կողմի շնիկը:

—Սատանան տանի, չէր կարող հրացանի վողի մեջ ընկնել գնդակը, հենց ասես պետք ե շնիկը տաներ:

Իբրև պատասխան լսվում ե խմբի մարտիկները միահամուռ ծիծաղը.

—Իու հրացանը դենը մի գցի. կախի անկյունում և աղոթք արա. շնիկի պողպատե պատյանի տակ պաշտպանված դու գլուխդ լավ պրծացրի:

Հրացանաձգությունը չի դադարում: Չորս կողմ յերկյուղալի յե, չես իմանում ով, վորտեղից ե կրահում: Իսկ այստեղ ծիծաղում են:

Ահա և նրանք արդեն կալվածատան մոտ են:

Շղթայված գամփոները կատաղի հաջոց են գցել: Սպանալի և տխուր ե հնչում դատարկ շինությունների մեջ այդ հաջոցը:

Հինգ ըոպե անց տունը գրաված ե:

Իսկ գարեջրի գործարանում հրացանաձգությունը չի դադարում:

Գնդակներով ծեփում են: Իսկ մերոնք ընդամենը մի քանի մատուցեր ունեն:

—Հանկարծ չըխեղճանանք:

Հենց այդ ժամանակ մի կողմից լսվում ե հրամանը.

—Կրակ գցեք տունը:

Մերոնք հենց դրան եյին մնում:

Այ եղ մինը արժեք. պոչները խուզենք:

Թե չե՞ գնդակը հիմար ե, իսկ կրակը կըհասնի նրանց:

Ահա կողմնակի շինությունից ծուխը բարձրացավ, հետո յել կալվածատունը, փայտանոցները:

Շուտով մյուս շինություններն ել կրակի ծովի մեջ կընկնեն:

—Թող խորովվեն:

—Հետ քաշվեցեք:

Խումբը հեռանում ե կալվածից: Ճանապարհները հիմա լուսավորվում են բոցավառ շինություններից:

Նահանջելը վտանգավոր ե. նշանակետը յերևում ե, իսկ նրանք գարեջրի գործարանից դեռ շարունակում են կրակելը:

Խումբը քաշվեց դպրոցի մոտ:

Իսկ լուսադեմին ընտիր հրացանաձիգներ կրկին շարժվեցին դեպի գարեջրի գործարանը, վոր բարոններին բռնեն:

Բայց նրանց հետքն ել չըկար:

Ե՛հ, հերերն ել անիծած: Կըվերցնենք նրանց կայքը:

Հետևյալ որը սկսվում են աճուրդները:

Ծախում են տակառներով լի գարեջուրը, դատարկ տակառները, ծախում են զանազան իրեր, մեռյալ ու կենդանի ինվենտարը:

Կապույտ բարոններին թողին անվարդիկ:

Իսկ խումբը, վոր տանջվել եր վատ ճանապարհներից, ցրտից և անքուն գիշերից, հազիվ քաշ ե գալիս տուն, քեֆները կոտրած նրանով, վոր կապույտ բարոններին ձեռից բաց թողին:

—Ձհանդամի՛ գյոռը: Թող փախչեն նախ ֆատերլանդի (հայրենիք—Գերմանիա):

Ճամբեն բաց:

11. ԿՅԱՆՔԻ ՅԵՎ ՄԱՀՎԱՆ ՄԻՋԵՎ

Կոմս Շերեմետևի կալվածքը պաշտպանելու համար կանչված էյին յերկու վաշտ զինվոր: Դա վատ զինված հեղափոխականների խմբերի հետ համեմատած՝ մեծ ուժ էր: Թողնել նրանց այստեղ, ապրատամբական շարժումների կենտրոնում՝ վտանգավոր էր: Իսկ նրանց քշելն էլ հեշտ չէր:

Փորձեցին նրանց հաղթել ազխտացիայով—ոգուտ չարավ: Արդեն չափազանց չար ու բթամիտ խալիս են:

Ստիպված յեղան զիմել զինաթափման:

Ընտրեցին ավելի լավ զենքեր և լավագույն կըւվողներ, վորոնք զինվորական շկոլա յեն անցել:

Բայց հակառակորդի հետախույզները հոտն առան պատրաստությունների և զինվորները վճռեցին թողնել կալվածքը՝ նահանջելով զեպի գավառական քաղաքը՝ Վենդեն: Իսկ այստեղ լուրեր տարածվեցին, թե գավառի վրա յեն շարժվում սև հարյուրյակները և զինվորները գնում են նրանց միանալու:

Բաց թողնե՞ս այդ սատանաներին:

Վոչ մի դեպքում:

Կտրեցե՞ք ճամբան: Կովենք ու զինաթափենք:

Յեղ ամբողջ գավառը ձիավորներ ընկան և կոչ արին հարձակվելու և պաշտպանվելու սև հարյուրյակներին:

Վեր կացան մեծ ու փոքր: Չենք են պատրաստում, ով ինչ կարող է:

Ահա դերձակը գոտկում խրել է մի սրած կացին՝ կոթին էլ կապել և մի պարան ձեռքի ողակով: Դա

նրա համար է, վոր թշնամու վրա հեռվեց կարելի լինի հարձակվել:

Ահա մտազործի վորդին գերանդուց և յերկար ձողից ինչ վոր մի բան է շինել յապոնական ավինի նման:

Իսկ ջահել տղերքը նագայկաներ են հյուսում պղնձե լարերից, վոր գտել են կալվածատիրոջ այրված տան մոխիրների մեջ:

Կեսորին արդեն բոլորը դուրս են գալիս, վոր խմբվեն հավաքատեղում—գավառավարչության շենքում:

Բայց զինվորները ավելի շուտ դուրս յեկան՝ քան սպասելի յեր: Ուստի և մի խումբ խիզախներ զիրք են բռնում ձխական դպրոցում:

Դա իսկական ամրոց է, վոր շինած է համարյա հարյուր տարի առաջ: Ներքի կիսանկուղային հարկը կամարավոր է: Պատերի հաստությունը արշինուկեա է: Բայց կիսանկուղային հարկի պատուհանները ցածր են: Թշ՝ մին հեշտ ներս կըմտնի: Դրա համար խումբը բաժանվում է յերկու մասի. վի մասը մնում է ներքին հարկում, մնացյալները բարձրանում են վերի հարկը:

Ահա զինվորները յեկեղեցու մոտն են: Ով վոր գանգը դարկեց, նշան տվեց:

Ձինվորները ուղղվեցին դպրոցի կողմը, պարզապես ցանկանալով գրավել այն, քանի դեռ ապստամբները ոգնության չեն հասել:

Սկսվում է:

Բայց ահա զինվորները կանգնեցին: Չորամասի կողմից գատվում են յերկու մարդ և ուղղվում են դեպի դպրոցը:

Յերևում ե վոր պարլամենտյորներ են:

Այդպես ել ե: Նրանք առաջարկում են հանձնվել:

— Դուք այստեղ խղճուկ մի խումբ եք, այն ել վատ զինված: Իսկ մենք հրացանավոր ենք: Ի՞նչ կարիք կա արյունահեղության: Հանձնեցեք զենքը ե ցրվեք տներդ:

— Խորամանկությամբ եք ուզում հաղթել: Եդ չե՞ լինի: Ավելի լավ ե ինքներդ ուշքի արեք: Ո՞ւմ դեմ եք կռվում:

Ժողովրդի դեմ:

Ո՞վ ե ձեր հայր ու մայրը: Անշուշտ այսպիսի գյուղացիներ: Իսկ դուք զենք եք բարձրացնում ձերոնց դեմ: Թե դ՛ուք չեք ուզում արյունահեղություն՝ զենքը հանձնեցեք:

Զինվորը տատանվում ե:

Ոգտվելով նրա շփոթությունից՝ մարտիկները նրան զինաթափ են անում:

Իսկ յերկրորդ պարլամենտյորը— սպան հետ ե փախչում՝ կրակելով:

Բանակցությունները չոգնեցին:

Կռիվն սկսվում ե:

Զինվորները զորաշարքի բոլոր կանոնների համաձայն՝ մոտենում են շղթա կապած ե շրջապատում են դպրոցը: Սկսվում ե հրացանաձգությունը:

Գնդակները հենց մի գլուխ, լուսամուտները ծակելով, խրվում են առաստաղի գաջի մեջ ե դժոխային փոշի յեն բարձրացնում: Վորսորդական հրացանները ավելացնում են վառողի ծուխն ու զարշահտը: Ծնչկուր դժվարանում ե: Իսկ կռիվը նոր ե միայն սկսվում:

Ահա կաղնիների հետեից, դեպի ներքնահարկն ե սողում սպան:

Մարտիկները նրան նշան են դնում: Պայթում ե զալլը ե սպան ընկնում ե՝ կոտորակով ծակծկված:

Իսկ նրա կողքին ընկնում ե զինվորը ե ձեռից ընկնում ե հրացանը:

Լավ հրացան ե:

— Զը՞գնանք բերենք:

— Զգո՞ւյշ միայն:

Բայց արդեն ուշ ե: Զինվորները նկատեցին խիզախին, ե նա արդեն հրացանը ձեռին՝ գնդակահար ընկնում ե գետին:

— Եդպես ե, հա՞,— բամբ ձայնով խոսում ե մի բաշիրուզուկ.— ինչ ուզում ե լինի՝ հրացանը կըբերեմ:

Յե՛վ նա խկապես դուրս ե գալիս պատուհանից, հանդարտ մտենում ե հրացանին ե առանց շտապելու վերադառնում ե իր տեղը:

Զինվորները չտեսան, թե նրա խիզախությունը նրանց հաղթեց, բայց նրանք վոչ մի գնդակ չարձակեցին: Խիզախի վրա:

Բայց ի՞նչ բան ե սա: Վճրտեղից ե այս ծուխը: Բոլոր շինությունը սկսվում ե լցվել դառն ծխով:

Շինության մյուս կողմից զինվորները կրակել են խրճիթն ու փայտանոցը, իսկ քամին բոցը բերում ե դպրոցի կողմը:

Ահա թե ի՞նչ բանի յեն: Ուզում են խուկել:

Պաշտպանելով հրդեհի տակ զինվորներն այսլած խանձողներով վազում են ներքնահարկի պատուհանների մոտ ե կրակ են գցում սեղանատունը: Այնտեղ այրեցիկ նյութեր շատ կան:

Մարտիկները կրակելով պաշտպանվում են, բայց դա քիչ ե ոգնում. զինվորներն արդեն պատի պաշտ-

պանութեան տակ են: Ներքին հարկում վտանգավոր ե
մնալը: Մարտիկներն անցնում են վերի հարկը: Բայց
այստեղ ավելի լավ է: Միտի միջից բան չի յերևում,
իսկ գնդակները հենց մի գլուխ զարկվում են աղյուսե
պատերին և այնտեղից թռչկոտելով դիպչում են հա-
տակին և առաստաղին:

Բայց մարտիկները կենդանի անձնատուր չեն
լինի:

Վճռի:

Ներքնահարկն անշուշտ զինվորների ձեռին պի-
տի լինի:

Իսկ դրան ավելացրու հրդեհը: Ուզում են կա-
քավների պես գնդակահարել:

Վոչ, սխալվում են. այդ չի լինի:

Նրանք շինությունը չեն լքի: Թող գան և ու-
ժով առնեն:

Բաջերի գժություն:

Թող գան և ուժով առնեն:

Հրդեհը սաստկանում է: Շնչել անկարելի յե: Իսկ
յեթե գլուխդ դուրս հանես—զինվորների գնդակը կը
առնի:

Վորտեղից վոր ե՛ լավում է.

—Ուռն, ուռն, ուռն:

—Պատրաստ, ընկերներ—թնդում է գլխավորի
ձայնը:

Ով վառողը պրծացրել է՝ հրացանի կոթով տվեք:

Կենդանի անձնատուր չըլինեք:

—Անձնատուր չենք լինի:

Բայց զինվորները չեն յերևում:

Ուռայի աղաղակները քանի գնում մոտենում են

և չեն լուում, իսկ հրացանաձգությունը, չես իմանում
ինչից՝ դադարում է:

—Ի՞նչ է, սվինային հարձակումն է, գնդակներն
ափսոսում են:

—Պատրաստ:

Բայց զինվորները չեն յերևում:

Մեր յերիասարդը վազում է պատուհանին: Ներ-
քըր զինվոր չի յերևում: Այստեղ-այնտեղ, այգու հե-
տև դեռ յերևում են նահանջողները: Նա շտապում է
ուրախացնելու.

—Զինվորները ուղ են լինում:

—Խարում ես, խոզի ճուտ:

—Դուրստ եմ ասում, ծղկվում են: Իսկ անտառի
կողմից մեզ են մոտենում մեր խմբերը:

—Մերոնք են, մերոնք են:

Հիմի բոլորը պատուհանների մոտ են:

Իսկապես, բոլոր ձամբաներով սև ժապավենի պես
գալիս է ժողովրդական զորքը ուռա կանչելով:

Մարտիկները մրկած, անձանաչելի դեմքերով դուրս
են գալիս իրենց ամբացած տեղերից:

Նրանք կենդանի յեն, կենդանի յեն:

Միայն մեկը չըկա: Նա զոհ գնաց հրացանին:

Բայց ինչքան մոտ եր մահը:

Ասենք հիմի ժամանակը չե դրա մասին մտածելու:

Պետք է զինվորներին հասնել: Պետք է վազ
վերցնել վառող. գնդակ ու հետևներից հասնել:

Պետք է նրանց ձամբան կտրել մի վորևե տեղ,
անտառի մոտ:

Հետապնդել:

12. ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆ

Դարձյալ վառող ու փամփուշտ են բաժանում:

Կես գիշեր է դառնում, յերբ խումբը պատրաստվում է ճամբա ընկնելու: Վտտով չես հասնի, պետք է ձիերով: Իսկ մինչ հարկավոր քանակով սայլեր կըճարես—ժամանակն անցնում է:

Մին ել անձ—տերտերը:

Հը, սա ինչո՞ւ յեկավ, ես յերկարամաղ սատանան:

Ուզում ե միջնորդ դառնալ հեղափոխականների ու զինվորների մեջ: Արյունահեղութունն չի ուզում: Նա այնպես կանի, վոր արյունահեղութունն չի լինի: Նա զինվորներին կըհամոզի զինաթափ լինել: Բայց մի պայման—վոչ մի բռնադատութուն զինաթափվածներին վրա:

Ի՞նչ է սա եղտեղ դուրս տալիս: Ճամբու՞ղ զրեք դրան:

Բայց տերտերը վրա յե կախում:

—Դեռ հայտի չե, թե ով կըհաղթի: Նրանք կանոնավոր հրացաններ, սրեր, սվիններ ունեն, իսկ դուք՝ վորսորդական հրացաններ: Ահա ձեզ որինակ—դպրոցը: Քիչ մնաց բոլորին փոռնին տեղնուտեղը: Յերբեմն բարի խոսքով ավելի շատ բան կարելի յե անել, քան զենքով: Ինձ հանձնեք այդ անել: Չեռներդ մի թաթախեք արյան մեջ:

—Կըխարի, անպայման կըխարի:

—Եդ յե՞րբ է յեղել, վոր տերտերը մեր կողմը պահի:

—Մի հավատաք դրան, կըծախի խաչագողը: Բայց տերտերն իրն է պնդում:

—Թող ձեզնից մեկն ինձ հետ գա, յեթե չեք հավատում: Յես մինչև զինվորների հետ քաշվելը, սպաների հետ խոսել եմ: Նրանք դեմ չեյին զինաթափ լինելու, բայց վախենում էյին բռնադատութունից: Հիմի յեթե դուք այդ կըխոստանաք՝ նրանք զինաթափ կըլինեն:

—Եղպես ե:

—Վկա աստված կենդանի:

—Եդ աստժուն մի կողմ թող:

—Իսկ ինչո՞ւ չըփորձել:

Հոգնած, չարչարված մարտիկները հակված էյին խաղաղ վերջացնելու:

—Լավ, թող եղպես լինի: Թող տերտերի հետ մեկ ամենից հավատարիմը գնա:

—Բոլոր զենքերը պետք է տան:

—Անպատճառ:

—Բայց վճրտեղ են զինվորները:

—Տասնըհինգ վերստի վրա:

—Ասել ե՞ պետք է շտապել: Ե՛նտ, հավաքվեցե՛ք:

Առավուտիս դեմ պետք է այստեղ լինեք:

Նրանք ճամբա յեն ընկնում:

Անցնում է գիշերը: Տերտերը չկա դեռ:

Մարտիկները սկսում են անհանգստանալ:

Անցնում է մի ժամ, յերկու—տերտերն ելի չըկա:

Ե՛դ է, խաբեց տերտերը: Նա պարզապես ձգձգեց, վոր զինվորներին ժամանակ տա հեռանալու:

Ել սուսելու կարիք չըկա: Պետք է կազմակերպել հետապնդումը:

Ու միանգամից գավառը կենդանացավ: Վորտեղից վոր եր հայտնվեցին նոր մարտիկներ, մինչև անգամ տանելի կերպով զինված: Զինվորներ ուղարկեցին սայլեր բերելու և առավոտյան ժամը 10-ի մոտերքը բոլորն արդեն սայլերի վրա էյին:

Մարտիկները վճռեցին նահանջող զինվորների ճամբան կտրել. նրանք գնացել էյին պտուտ տալով:

Մարտիկների թիվը աճում է: Արդեն սայլերը հերիք չեն անում: Իրա համար ել յերիտասարդները ֆուում են հետևակ, իսկ մյուսները շտապում են ճամբան կտրելու:

Զինվորների նահանջի լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ շրջանում: Մեր մարտիկները հենց մի գլուխ, քանի առաջ են գնում, հանդիպում են նոր զինված մշակներին, վորոնք միանում են ընդհանուր խմբին:

Բայց տերտերն իր նպատակին հասավ. զինվորները հաջողեցրին դուրս գալ փոստի ճանապարհը և հիմի գտնվում էյին քաղաքից վեց վերստի վրա:

Բարեբախտաբար ճանապարհն այստեղ մեծ շըրջան է անում և յեթե անտառով գնացվեր, դես կարելի կըլիներ զինվորներին հասնել:

Ահա յերկու զորամասերն իրար հանդիպեցին: Լսվում են առաջին կրակոցները: Գնդակները սուլելով կտրում, անցնում են խիտ անտառը:

Նրանց բանը լավ է իրենց կանոնավոր հրացաններով—իսկ մարտիկը չի կարողանում թշնամուն խոցել իր հրացաններով վերստ ու կես հեռավորությունից:

Խիզախները վագում են բլրի վրա, ճամբան կըտ-

րելու: Բայց զինվորները կովի չեն բռնվում և շտապով հեռանում են: Քառասուն վերստ ճամբից հոգնած մարտիկներն ել նրանց չեն կարողանում հասնել:

Մի քանի մուռզերներ յեռանդով աշխատում են, բայց զինվորները վատ են պատասխանում:

Չեն հասնի: Ուշացել են:

Այս բոլորի մեղքն յերկարամազ տերտերի վրա յե: Գոնե մի կես ժամ առաջ հասնեյին:

Մարտիկները կրկին դուրս են գալիս ճամբա:

Այստեղ, այնտեղ արյան շիթեր կան: Ասել է, ինչքան չլինի՝ գնդակ զիպել է:

Մոտենում են շրջակա բնակիչները:

— Շը, շատ էյին անցկացողները:

— Ել մի հարցներ... Ավազակներին պես անցան՝ ամեն ինչ վոչնչացնելով:

— Իսկ մեր գնդակներն հասնում էյին:

— Ո՞վ է իմանում: Նրանք վոր՝ ել գնդակ չունեյին: Մի քի՛ շուտ կըհասնեյիք, տնայեներ, Մեզ ավազակությունից կազատեյիք: Ա՛յ, ճամբին մեր դարբնին ու հարևան գյուղի մշակին սվինով տվին, սպանեցին:

— Վճնց թե սպանեցին:

— Ե՛նպես, չենց վոր իմացանք, թե դուք հետապընդում եք, վճռեցինք զորքի դեմ դուրս գալ և ճամբան կտրել: Բայց մեր գեներն ի՞նչ բան է վոր: Դարբինը իր համար խանչալի պես մի բան շինեց: Իսկ խանչալն ինչ կանի կանոնավոր հրացանի դեմ: Ես պեսով դարբինը մեջտեղը գնաց:

Ենտեղ, անտառի բերանում ընկած են:

Անտառի բերանում արդեն հավաքված էյին շատ

հետաքրքրվողներ. ճամբից յերեք սաժեն հեռու ընկած
և դարբնի դիակը: Նրա յերեսը թրով կտրած է, իսկ
կրծքին գնդակի և սվինի վերք է:

Մի քիչ էլ դենը մի ուրիշ դիակ է:

Սա ավելի յե այլանդակվել: Սառած աչքերը սար-
սուռ են ազդում:

Ահա թե ինչ բաներ են նրանք: Ավազակություն
անելով են անցել ամբողջ ճանապարհը:

— Բայց եղ ի՞նչ բան է վոր,— պատմում է հարե-
վանը.— այ, են սարի տակի ագարակում, ուր նրանք
գիշերեցին՝ կոտորեցին վողջ տավարը, բռնաբարեցին
բոլոր կանանց, թակեցին բոլոր ծերերին:

— Հերզ անիժած, տերտեր: Եղ ամենը նրանից
յեղավ:

— Դե, հիմի ի՞նչ ենք անում, հետ դառնանք, ըն-
կերներ:

— Հանգիստ վոսկորներիդ: Ուխտվում ենք հար-
յուրապատիկը վրեժ հանելու:

Իլխարկներն հանում են, և մթնշաղին լսվում են
վշտալի-սպառնալի թաղման յերգի ձայները:

Դուք գոհվեցի՞ք որհասական կովի մեջ...

Լուս ձգվում է մարտական խուճբը և հոգնաքայլ
քաշ է գալիս հետ, անհաջողության ծանր տպավո-
րությամբ:

Բայց մի կես վերստ ել չեյին հեռացել՝ վոր նը-
րանց դեմից սայլերով մարտիկներ են գալիս:

Ուտկենգուղի և Յակորչտատի գավառներից են:
Նրանք զինված են կանոնավոր հրացաններով և նման
են իսկական զորքի.—

— Հը, ուշացանք:

— Ուշացանք:

— Ասել է՝ հեռացան:

— Հ ե ո ա գ ա ն:

— Չի՞ կարելի հասնել:

— Յեթե ձիերը հոգնած չեն, ինչո՞ւ չե:

— Առնջ, տղերք:

Յեվ նրանք ձիերը քշեցին քաղաքի ուղղությամբ:
Իսկ մեր մարտիկները բարկացան:

— Այ մենք պիտի եղպես զինված լինեյինք: Մի-
թե կըզիջեյինք: Թե չե՞ ես բուրվառներով բան կարող
ես անել: Ես յեղանակին վառողն ել կըխոնավանա—
կրակել չե լինի:

Մեր տղան միայն այստեղ միտը բերեց, վոր
պետք է ստուգել լցրած հրացանը՝ հո վառողը չի՞ խո-
նավացել: Ընկերոջ հետ գնաց յեղենիների մեջ, նշան
դրեց ու բռնեց:

Մեկ—փուստ անցավ:

Յերկու—փուստ անցավ:

Տեսա՞ր բանը, ա՛յ թե ի՞նչ հրացանով եր դուրս
յեկել զինվորների դեմ:

Հիմի միայն դող անցավ նրա ամբողջ մարմնով:
Ի՞նչ կըլիներ իր բանը, յեթե իսկապես կոխվը տեղի
ուեննար:

Փռված կըլիներ այլանդակված դեմքով վորեն
տեղ, այս ճամբին, ինչպես այդ դարբինն է:

Հապա՞...

Քայց ինչո՞ւ էյին այլանդակում դիակները: Ին-
չացո՞ւ յեր այդ դաժանությունը, ծաղրը:

Լսվ, թող լսվ մտքներում պահեն:

13. ՍԵՎ ՀԱՐՅՈՒՐՅԱԿ

Շրջակայքում ել վոչ մի բարոնի բուն չըկա: Բուրը քանդված, այրված են:

Բայց բարոնները կենդանի մնացին: Նրանք ժամանակին կարողացան խուսափել զորքի պաշտպանությամբ:

Հիմի նրանք ուր վոր զինվում են, հավաքում են ինքնապաշտպանական խմբեր:

Գավառակի բնակիչներին և վոչ մինը դեռ այդ բանդաներին չի տեսել, բայց նրանց լուրն արդեն հասավ, և հասավ այլանդակված ձևով:

— Սև հարյուրյակը դալիս է...

Ի՞նչ սև հարյուրյակ է դա, իսկապես վճռտեղին դուրս յեկավ, վոչ վոք դրա մասին բան չի խմանում: Բայց սև հարյուրյակ անվան հետ կապված է ամեն մի դաժան, արյունարբու, սարսափելի բան:

Դեռ վոչ վոք այդ բանդաներին չի տեսել, բայց արդեն վախում են, արդեն պատրաստվում են դիմադրելու:

Ամենքը ինչ վոր զգում են, վոր այստեղ խոսքը կյանքի ու մահվան մասին է, վոր այստեղ միջին բան չըկա:

Վտանգն ամենուրեք զգացվում է. նա ողի մեջ սավառնում է: Իսկ թուլերի տատանումն ու տան-մեծերի նահանջը ստեղծում է մնացողների համար մի ծանր զգացում:

Դեռ ամեն բան հեղափոխական ալիքի ծառայման շրջանումն է:

Բայց ահա այդ ալիքը կիջնի: Այն ժամանակ Ինչպես կըլինի:

Մեր տղան—գյուղական պրոլետար է, իր բուրը ունեցածն իր վրա յե: Նա վոչինչ չունի կորցրնելու, բացի իր զուլիը: Դրա համար ել նա նրանց հետ է, ովքեր դեմ են սև հարյուրյակին: Նա յել նըրանց չի տեսել, բայց զգում է վտանգը: Նա հիմի ալիքի յե պետք, քան յերբևե:

— Նա պատրաստ է:

Յեվ ահա լավում է կոչը.

— Սև հարյուրյակի և բարոնների դեմ:

— Ընկերներ, ո՞վ է ձեզնից ուզում շան մահով վերջանալ սև հարյուրյակի նապայկաների հարվածների տակ:

— Վոչ վոք:

— Դե, բաս պատրաստվեցեք դիմադրության:

— Ո՞վ է ուզում զուլիը թանգ ծախել:

— Բոլորս:

— Զինվեցեք և յեկեք մեզ հետ:

— Ուռա...

— Համարձակ, ընկերներ, միաքայլ

Արիացեք հոգով՝ պայքարում...

Շարժվեցին ու գնացին: Հեղափոխական յերգերը չեն լուում: Վորոտում են բացականչությունները.

— Մահ սև հարյուրյակին:

14. ԽՂՃԱՀԱՐՎԵԼ ՉԸԳԻՏԵ

Նա վոչինչ չունի կորցնելու՝ բացի իր զուլիը: Բայց իր խնամքին է հանձնված իր ծեր մայրը: Ինչպես բոլոր զսոսմայալ մարդիկ, սա յել չի կարող միանգամից հասկանալ, թե շուրջը ինչ է կատարվում:

Նրա համար սուրբ է թե յերկնքի և թե յերկրի աստվածների պաշտամունքը: Իրա վրա հաշվիր և անհավատութիւնը, սրբապղծութիւնը, ցարական որենքների խախտումը, իշխանութիւնը չըհարգելը:

Դա սատանայից է:

Նա շատ բան է տեսել իր 80 տարեկան կյանքում, նա ամեն բան կարող է թույլ տալ: Բայց վոր իր վորդին գնար այդ դժոխքի ճամբով, այդ չեր կարող թույլ տալ:

Հիմի ի՞նչ է պատահել այդ տղայի հետ: Ամբողջ շաբաթներով կարդում է: Աստված դիտե ինչնով է ապրում, ինչնով է կերակրվում, իսկ իրան—հորը—բոլորովին մոռացել է:

Հայրը նրա համար գոյութիւն չունի: Թող վոչինքնըը նրան ուտեն:

Կարելի յե, դեռ ուշ չէ: Դուցե կարելի յե դեռ նրան ուղղել: Չէ վոր ինքը պիտի պատասխան տա իր վորդու համար:

Քույրը, պառավ ջադուն էլ մեջ է ընկնում:

—Ո՛ւր է քո ավագակը կորել վոտով-գլխով: Ուրիշներին է մորթում, թե իրան են մորթել:

«Քո ավագակը»:

Տես բանը ուր է հասել, վոր իր վորդուն ավագակ են անվանում:

Դե ապա թող մի յերևա:

Բայց ահա նա յեկավ, մի շաբաթվա բացակայութիւնից հետո: Սոված, պատըռուած, իսկ դեմքը փայլում է:

Ինչի՞ համար է նա այդպես ուրախ: Հոր վիճակի՞ համար, վորը լքված այստեղ վոշիլներէ կերակուր է դառել:

Ձեռը արդեն սեղմում է փայտը: Բայց, դուցե նա դեռ խելքի կըզա: Գուցե այս անգամ տանը կըմնա և աշխատանքի կըվարձվի: Հավ, այս անգամը կըհամբերի:

Բայց ահա կրկին ահազանգ է: Սև հարյուրյակը շարժվում է դեպի այս կողմ: Պետք է դիմադրել:

Ո՞վ պիտի դնա՞ յեթե վոչ նա: Տերերի վրա պիտի հույսը դնի:

Հայրը արդեն նկատեց նրա պատրաստութիւնները:

—Դու ի՞նչ ես ավագակ դառել:

—Վնչ, հայրիկ, յես ձեզ ավագակներից եմ պաշտպանում:

—Գտանք պաշտպանը: Մի կըհասցնեմ ես փետովը վո՛ր:

—Հայրիկ դու չես մտածում, թե ինչ ես ասում:

—Ձեմ մտածում: Հորդ վոշիլներն են ուտում, նրան մի կերակրելի: Ամա ի՞նչ, ինքը թրե է գալիս սոված, հորն էլ սովամահ է անում:

—Ավելի բարձր խնդիրներ կան: Բայց միկնույն է, դու այդ չես հասկանա:

—Խե՛ղդ սիրեմ: Դե, վոտդ դուրս չըդնես: Իմացար:

Տարրինակ բան: Մինչև այդ խոսակցութիւնը նրա գլխով չի յել անցել, թե նա ուրիշ պարտականութիւն էլ ունի, բացի հեղափոխութիւնը:

Հեղափոխութիւնը նրան ամբողջովին կլանել եր: Ել գոյութիւն չուներ վոչ անձնական կյանք, վոչ ընտանեկան պարտականութիւններ: Բոլորն ի մի խառնըվեց մի ամենազրավիչ խանդավառութիւն մեջ:

Բայց նա ծեր, անոգնական հայր ունի: Տանը մի կտոր հաց չունի: Իսկ դուրսը ցուրտ է:

Իրավունք ունի նա յեթեսի վրա գցել իր հորը յեվ լիովին նվիրվել հեղափոխության:

Ունի՞ նա այդ իրավունքը:

Այստեղ մի հանգչող կյանք է մի արդեն հասարակութայն անոգուտ մարդու: Այնտեղ՝ խաղաթղթի վրա յեն դրած հազարավոր մատաղ կյանքեր, վոր պետք են հեղափոխութայն, այնտեղ վճռվում է իրան— հեղափոխութայն բախտը:

Ինչպես վճռի այս հարցը:

Յեվ ժամանակ կա վճռելու:

Հնչեց կոչի նշանը— և նա մոռացավ այդ տանջող և դժվար բուժելի հարցերը: Վերցրեց իր յերկփողանի հրացանը և միացավ հեղափոխական կռվի ընդհանուր հոսանքի մեջ:

Այո, հեղափոխական կռիվը մարդկային խիղճ չըզդիտե:

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Գյուղը իր գործը տեսավ:

Դարավոր թշնամի կալվածատերը— գերմանացի բարոնը— վռնդված է: Գյուղացին հիմա հողի տերն է: Նա հիմի ինքն է և՛ դատը կտրում, և՛ կառավարում հասարակական գործերը: Նա ինքն է ընտրում և իշխանությունը:

Բայց Ռիգան, Լիբավան, Միտավան դեռ ցարական իշխանութայն ձեռին են, և վռնդված բարոնները այնտեղ ապաստան ունեն: Պետերբուրգից ոգնական զորք ստանալով՝ բարոնները գլուխ են անցնում պատժիչ զորամասերին և սկսվում է մահվան թափոցը...

Կրակով ու սրով նրանք նվաճեցին և տիրեցին այդ յերկրին յոթհարյուր տարի առաջ, կրակով, սրով և կախաղանով նրանք կրվեբահաստատեն հիմա իրենց վտանահարված իրավունքները:

Ախ ինչո՞ւ, ինչո՞ւ հաղթած ժողովուրդը այնքան մեծահոգի յեղավ և խնայեց այդ սուսերակիրների կյանքը, վորոնք իրենց համար հավերժական հուշարձաններ են կանգնեցնում տանջված գյուղացիութայն վոսկորներին:

Ինչո՞ւ նա մեծահոգութամբ հատուցեց գյուղացիութայնը հասցրած անարդարությունների համար: յերբ նրա պապերին և ապուպապերին շնեքի հետ եյին փոխում և հալածում եյին, ինչպես վայրի գազաններ—

ըի՝ զվարճացնելու համար «ազնվազարմ բարոններին»։
Ինչո՞ւ, ինչո՞ւ հաղթողի մեջ մտնում ե այդ թու-
լությունը, վոր կոնչվում ե մեծահոգությունը։

Անիծյալ լինի այդ ժամը։

Դա արժեց տասնյակ հազարավոր ամենալավ գա-
վակների կյանքը։

Պատժիչ զորամասերը սկսում են իրենց արյու-
նալի ընթացքը։

Կրակ, սուր, նազայկա և կախաղան—ահա նրանց
բռնադատության գործիքը։

Սկզբում անհասկանալի սև հարյուրյակը հիմի
ընդունում ե կազակների հարյուրյակի կերպարանքը՝
տեղական բարոնի առաջնորդությամբ։

Ո՛խ, գյուղացին գիտե, թե ինչ ե նշանակում բա-
րոնների առաջնորդությունը։ Նա չի մոռացել դեռ իր
հայրերի ու պապերի պատմածները այդ «արյան և
յերկաթի ասպետների» մասին։

Դրա մասին ո՞վ չըզիտե։

Բոլորը գիտեն։ Բոլորը հասկանում են։

Ո՛ւր ե փրկությունը։ Ո՛ւր ե յեկքը։

—Կովեւ մինչև վերջ...

Ինչո՞վ։ Դատարկ ձեռներով կանոնավոր զորքի
դեմ։ Վորսորդական հրացաններով՝ թնդանոթների դեմ։
Բայց գուցե այնտեղ քաղաքի մոտ դեռ կա ժո-
ղովրդական մի ուժեղ պաշտպանող զորք։

Գուցե զինվորներն ու կազակները կանցնեն ժո-
ղովրդի կողմը։

Վնչ, դրան ել հիմի վոչ վոք չի հավատում։ Ին-
չո՞ւ ապա նրանք չեն տեղափոխվում հարևան գավառ-

ները։ Ինչո՞ւ այնտեղ այրում, զնդակահարում են։

Գուցե կարելի կըլինի փախչել մի կողմ։ Խուսա-
փել սպառնացող վտանգից։

Միևնույն ե, բոլորը միասին չեն կարող փախչել։

Իսկ ինչպե՞ս ամենքը ուզում են ապրել։

Յեվ ամեն մեկը իր կերպ ե սկսում փրկություն
վորոնել։

Գավառային ստարշինան հիմի վերակենդանացել
ե։ Նա յել չի թագցնում իր ուրախությունը։ Հիմի
հերթը նրան հասավ։ Այն մահակի հարվածի համար
նա հարյուրպատիկը կըհատուցանի։

Ձգո՛ւշ, աղքատներ։

Բայց գավառային ստարշինան մենակ չե։ Բոլոր
խոշոր սեփականատերերը նրա հետ են։ Նրանք հիմի
հավաքվում են խորհուրդ անելու և ինչ վոր բան յե-
ռանդով քննում են։

Նրանց տակն ել մաքուր չե, բարոնների դեմ
նրանք ել են ձայն բարձրացրել։ Իսկ ավելի քիչ
զգուշները մինչև անգամ բարոնների կայքից աճուր-
դով մի-մի բան գնել են։ Այդ մեղքը պետք ե մաք-
րել։ Ինչո՞վ։

—Մասնությամբ։

Դա ամենից լավ ճանապարհն ե։ Նրանք կազ-
մում են բոլոր հեղափոխականների ցուցակը, վորոնք
գործոն աշխատել են այդ ժամանակ։ Նրանք այդ ցու-
ցակը կըներկայացնեն պատժիչ արշավախմբի պետին
և զբանով կըփրկեն իրենց կաշին։

Բայց ի՞նչ հիմարություն արին նրանք։ Հ՞ը։ Ա-
սա ի՞նչ բան ունեյին աղքատ գյուղացիների կամ
մշակների հետ։ Ինչո՞վ բարոնից վաստ եյին ապրում

վոր: Բարոնը պարտք ունեւր, իսկ նա բանկում փող էր շահացնում:

Ստանան գայթակղեց:

Բայց հիմի նրանք այդ սխալը կուղղեն:

Բայց ի՞նչ անի մանր-գյուղացիութիւնը:

Հենց այնպես ել վոչնչանաւ:

Վոչ, նա կըփորձի ելի մի անգամ ատամները ցույց տալ: Գուցե զինվորները այնքան ել սարսափելի չերևան: Գուցե զենքը կըհանձնեն: Կանցնեն ժողովըրդի կողմը:

Այսպես ելին մտածում բոլոր նրանք, վորոնք քիչ-շատ մասնակցել են հեղափոխական գործին:

Բայց մնացածները ավելի խոհեմ են. նրանք վոչինչ չըգիտեն, վոչինչ չեն տեսել: Նստել ելին իրենց տներում և սպասում ելին, թե յերբ վերջապես կըգա իշխանութիւնը և անկարգութիւններին վերջ կըտա:

—Այ թե ինչ, լավ, լավ, կըտեսնենք, թե բարոնը ինչպես շնորհակալ կըլինի:

Հինը մոռացել էք: Բաս հիշել կըտա:

Յեկ իսկապես. չե՞ վոր գնել են աճուրդով բարոնների ինչքը և զրանով հենց ոգնել են ուրիշներին թալանել: Այո, մեծ բան չե: Պետք է հետքերը կորցընել:

Յեկ ահա ուշ գիշերին հաճախ են յերևում գյուղական սայլեր՝ տնային իրերով: Թագցնում են մի վորևե տեղ անտառում կամ ճահճի մեջ: Իսկ լուսադեմին նրանք բոլորը դատարկ վերադառնում են: Նրանք թաղում են անմատչելի տեղերում բարոնների կայքը:

Նրանք իրենց համար իսկը ունեն: Հիմի թող գնան գետնից հանեն:

Իսկ այդ որվանից արդեն նրանք հավատարիմ հպատակներ են և ջերմեռանդ ժամասերներ: Հիմի կէքակի որերը ժամ են դնում և աշխատում են, վոր պաստորը կամ տերաերն իրենց տեսնի:

Ամենքը ծածկադմբոց են անում:

Բայց մինչև անգամ միջին-գյուղացիներից այնպիսիները կան, վոր ծածկադմբոց չեն կարող անել: Նրանք յեղել են կամ ընտրած պաշտոնների մեջ կամ դեկավարել են մարտիկներին: Յեթե նրանք ինքները չեն, իրենց զավակները յեղել են:

Նրանց համար նահանջ չկա:

Նահանջ չըկա նաև մշակների համար: Նրանց դեմ են թե կապույտ և թե մոխրագույն բարոնները: Չե՞ վոր մոխրագույն բարոնները չեն մոռացել մշակների պահանջները՝ ստացվածքը հավասար բաժանել:

Յեկ ահա դավաճանութեան, մատնութեան, թուլակամութեան և փոքրոգութեան կողքին, նրանք, այդ գյուղական պրոլետարները, խորհրդակցելով մի բուռն ուղեւից գյուղացի հեղափոխականների հետ՝ դիմադրութեան են պատրաստվում:

Մեր տղան այս վերջինների թվումն է: Չահելութեան կրակոտութիւնը, գաղափարով տարվածութիւնը, սկսած գործի ամուր հավատը—այս ամենը նրա մեջ մնացել է:

Տան-ոջախի հետ նա կապերը խզեց: Նա հիմի կյանքում մի խնդիր ունի միայն. հաստատել յերկըրում նոր և բարելավ կյանք:

Քամու պես ընկնում է նա ագարակից-ագարակ և ընդհանուր գործի համար համախոհներ է հավաքում:

—Ընկերներ, զենք հավաքեցեք:

16. ՆՐՈՎ ՈՒ ՍՐՈՎ

Ծնունդն անցավ: Անցավ նոր տարին...

Իսկ պատժիչ զորամասեր դեռ գավառի մոտակայքում չըկան:

Ուրիշ գավառներում արդեն վաղուց կախաղաններ են սարքված և գիշերները հրդեհված ազարակների լույսը յերևում է:

Այո, պատժիչ զորամասերը դեռ չըկան, բայց նրանք մոտենում են հետզհետե, իսկ լուրը վազում է նրանց առջևից:

Արդեն փախել է գավառային կարգադրիչ կոմիտեյի նախագահը, փախել է նաև նոր գրագիրը: Բայց մնացածները չեն լքում մարտական դիրքերը:

Միթե նրանք, ովքեր բարձրացրել են ապստամբությունը և ղեկավարել այն՝ իրավունք ունեն հասարակ մարտիկներին դժբախտություն մեջ թողնելու: Միթե ընկղմող նավի նավապետն իրավունք ունի առաջինը լքել նավը:

Վոչ, նրանք կըման, վորպեսզի վիճակակից լինեն ուրիշներին:

Անխուսափելին պիտի կատարվեր...

Մկրտությունն օրը հանգիստ, գյուղացիների սահանակներով, սահնակի ճամբով, գաղտագողի մոտեցավ գավառին պատժիչ զորամասը:

Յեկեղեցու գանգը այդ ժամանակ ժամբողջության վերջն եր իմացնում ծխական յեկեղեցու, հենց այն յեկեղեցու, վորի գանգակատնից յերկու ամիս առաջ նահանջող զինվորների մոտենալու նշանը տվին:

Նորից նշան են տալիս:

Զինվորները շարժվեցին:

Շրջապատեցեք յեկեղեցին: Պայթեցնել ողում յեկեղեցին, — հրամայում է սպան:

Բայց նրանք այս անգամ սխալվեցին. յեկեղեցում գտնվում էր միայն իրենց ակամա մեղքերը լացող փոքրոզի աղոթողների նախիրը: Պաստորը յեկավ ազատելու և աղոթողները ազատվեցին:

Բայց նրանք յեկեղեցին ուզում են պայթեցնել: այստեղից տրվեց հարձակման նշանը:

— Դիմաժիտը դրեք տակը, — լսվեց հրամանը:

— Տե՛ր Հիսուս-Քրիստոս, դու վողորմես, — պաստորը արդեն ծունկ է չոքել: Նա ուզում է ներողություն հայցել: Դա նրա սրտի մոտ գործն է: Ի՞նչ կըլինի, յեթե յեկեղեցին պայթեցնեն: Նա կըմնա առացն մի կտոր հացի: Յեվ դա էլ խոովարարների յերեսից:

Վոչ, յեկեղեցին թողեք: Նա ցույց կըտա իսկական հանցավորներին:

— Չե՛ս խաբում հո, սատանի ընկեր:

— Աստված վկա յե, — խաչակնքում է պաստորը:

Լավ, վեր կաց: Դե, ապա ո՛ւր են մեղավորները: Շշունջներ, սպային տրվող թղթերի խշխշոցներ, պաստուրաստություններ...

Արդյոք սա հեղափոխականների ցուցակը չե՞, վոր տալիս է սուրբ մարդը: Այո, դա յե:

Այդպես, նրանք հիմի ձեռքերին ցուցակ ունեն:

— Լա՛վ...

— Իսկ ո՛ւր է այն դպրոցը, վորտեղից կրակում եյին:

— Ա՛յ, ենտեղ է:

— Թ՛նդանոթով քանդե՛լ:

Ձինվորները մոտ են քաշում յերկու յերեք-դուռ-
մանոցներ կես վերստ հեռավորութեան վրա

Նրանք ճակտից պիտի կրակեն:

— Կրակ:

Բո՛ւհ...

Ռումբը կպավ կտրանը:

Մի անգամ ել... Ռումբը ճանկոտեց պատը:

Սա ինչ բան է... Կախարդված է: Ինչո՞ւ ուռե-
բերը չեն քանդում այդ շինութիւնը:

— Կրակ:

Բո՛ւհ, բո՛ւհ, բո՛ւհ:

Դպրոցը համարյա անվնաս է: Միայն մի պա-
տուհանն է տեղահանվել:

Կախարդանք է...

— Գնալ և գնդակոծել:

Յե՛վ անա զորամասը զգուշանալով շարժվում է
դեպի դպրոցը:

Քիչ բան կարող է պատահել: Հանկարծ նրանց
կըհանդիպեն կոտորակների զալպով:

Իսկ այդ լիցքից անպիտան բան չըկա:

Ով-վոր մեկը վազ է տալիս բակում, գոռում է և
ձեռքերը կոտրատում: Իսկ դեմից, գլուխը շարժելով,
գալիս է, ձեռքերը բարձրացրած, ոռս լեզվի ուսու-
ցիչը:

Վոչ, սա նման չէ հեղափոխականների:

Ձինվորները համարձակ են դառնում և քիպ մո-
տենում են ուսուցչին:

— Շը, շոն վորդի, հիմի վախեցանք, հա՞:

— Ձեր առջև հավատարիմ ծառա յեմ թագավորի
և հայրենիքի:

— Ի՞նչպես ես համարձակվում խոսել, անասուն:
Բայց պատուրը ինչ վոր մի բան է փսփսուտ
սպայի ականջին:

— Ախ այդպես. հակառակ եր հեղափոխականնե-
րին: Բայց այդ խոտվարարներին ինչո՞ւ ներս թողին
դպրոցը:

— Ուժով մտան, ձերդ բարեծննդութիւն:

— Ուժով: Տեսե՞ք հա՛, ձեզ ուժ ցույց կըտամ, վոր
մինչև գերեզման չեք մոռանա: Թոռներդ ու ծոռներդ
կըհիշեն:

Տակը դրեք դինամիտը: Պայթեցնել: Բարը քա-
րի վրա չըմնա:

— Ներեղութիւն ենք խնդրում, ձերդ բարեծը-
նընդութիւն: Մի թողնեք մեզ առանց ապաստանի:

Ո՛ւր գնանք այս ջրորհնեքի ցրտերին, ձերդ բա-
րեծննդութիւն:

— Գործի անցեք: Իսկ դուք շուտով դուրս բերեք
տան իրերը: Մա՛րչ:

Կես ժամ անց լսվում է խլացնող պայթիւնը:
Մարդու չափ քարերը թռչում են ողբ և շարժուվում
շինութիւնից կես վերստ հեռու:

Բայց, բանից դուրս է գալիս, պայթեցրեց մի-
այն մի անկյունը: Մինչև անգամ դինամիտի ուժը չի
պատում այդ հաստատ շինութիւնը քանդել:

Սպան կանգնել է տարակուսած:

— Դինամիտը խնայեցին:

— Վոչ, ձերդ ազնվութիւն:

— Ե՛, ջհանգամը: Տարեք մեզ գազառային վար-
չութեան տունը:

Շարժվում են...

Իսկ այնտեղ գավթի մոտ, վորտեղից վոր ե, ահա կանգնել են նախկին գավառային ստարշինան և գրագիրը: Տեսնելով գորամասը՝ նրանք գլխարկները ողն են նետում.

— Կեցցե որինական իշխանությունը:

Բայց շուրջը մնացյալ ամենքը լուռն են: Ի՞նչ պես կը համարձակվեն: Դեհ, նա նրանց ցույց կը տա: Հիմի ելի՛ նրա ժամանակը հասավ:

— Ո՞ւր ե գավառային ստարշինան, — հարցնում ե սպան:

— Յես եմ, ձերդ ազնվություն:

— Դ՞հու ինչ եյիր այստեղ մտիկ տալիս, սրիկն:

— Ուժի առջև զիջեցի, ձերդ ազնվություն:

— Ուժի՞, ի՞նչ ուժի: Ապա դեսը տուր դրանց:

— Համեցեք:

Յեզ ստարշինան գրպանից հանում ե ազգանուններով ցուցակը և տալիս ե սպային:

— Հենց բոլորը այստեղ են:

— Այդպես, այդպես: Ո՞վ ցույց կը տա ճամբան:

— Կը գտնվեն:

— Սայլերը պատրաստեցեք, ու մի գիշերվա մեջ ամեն բան պիտի մաքրվի:

— Գլխիս վրա:

Կես ժամ անց արդեն սայլերը բակումն են, զինվորները խումբ—խումբ նստում են և շուտով զանազան ուղղություններով գնում են գավառ:

— Դե հիմի վայ նրան՝ ով ստարշինի աչքին դուր չի գալիս:

17. ՍԱՐՍԱՓԵԼԻ ԳԻՇԵՐ

Գավառային ստարշինան յերկու չար թշնամի ունի. հեղափոխական կարգադրիչ կոմիտեյի նախագահը, վորը ժառանգեց նրա իշխանությունը և այն գյուղացին, հեղափոխական մարտիկների գլխավորը, վորը բանալիները խլելիս նրան մահակով խփեց:

Առաջինը նրանք պիտի պատասխան տան:

Նրանց մահապատժին ստարշինան ուզում ե ներկա լինել:

Սուկ կես գիշերվա ժամին զորամասը գաղտագողի մոտենում ե մարտիկների պետի տանը, վորպեսզի տեղնուտեղը վորսա հանցավորներին:

Մոտ գնալով տանը, զինվորներն իջնում են սահնակներից և շղթա կապած մոտենում են շինության:

Նրանք սպասում են դիմադրության:

Բայց տանը մեռելային հանգիստ ե: Անգամ բալի շներ չեն յերևում:

Զինվորները կոտորում, ներս են մտնում խրճիթը:

— Ձեռներդ վեր:

Անկողիներից ցատկում են մի զառամ ծերուկ պառավի հետ և մի քանի քնատ կնիկներ յերեխանսքի հետ թարժաժ յեղած, չեն իմանում բանն ինչումն ե:

— Ձեռներդ վեր, թե չե՛ կըսպանեմ:

Ծերերը կանգնած են, ձեռները բարձրացրած, ծնկները դողում են. նրանք նոր հասկացան. դա սև հարյուրյակն ե: Իսկ վորդին տանը չե: Ասել ե՛ վերջին ժամն հասավ:

Բայց ահա առաջ ե գալիս գավառային ստարշի-
նան.

— Հը, պառավ շուն, քեֆը պրծում:

— Վորտեղ ե ձեր վորդին:

— Ի՞նչ վորդի:

— Ձեր ավազակը:

— Յես ավազակ վորդիներ չունեմ:

— Ահա, դեռ սպառնում ես: Պարոն սպա, սա յե
ամենագլխավոր ավազակի հայրը: Վոր թափ տանք՝
կասի:

— Խուզարկեցեք չորս կողմը, կտուրն ել հետը:

Ձինվորները զգուշ անցնում են գործի:

Դռակները, բարձերը՝ բոլորը թափում են հա-
տակին: Փնտրում են ավազակ վորդուն և զենք: Իսկ
ստարշինան սպայի հետ ձերուկուց դուրս են քաշում.

— Ո՞ւր ե տղեդ, հ՞ը, ասա: Թե նազայկա յես
ուզում: Ահա քեզ:

Յեվ նազայկան կարմրացնում ե ձերուկի մերկ
մարմինը...

Բայց ձերուկը լուռ ե:

— Ո՞ւր ե տղեդ:

— Ձեմ իմանում:

— Ելի կերցրեք:

Յեվ նազայկան կրկին կաշում ե ձերուկի մար-
մինին: Նա չի դիմանում և վայր ե ընկնում: Բայց
ձպտուն չի հանում:

— Հասցրու դրան, հասցրու:

Ստարշինան կրքի յե գալիս: Նա նրա համառու-
թյունը կրկտորի:

Բայց ձերուկը համառ լուռ ե:

— Ձհանդամը սրա գլուխը, վառեցեք տունը:

Մինչ այդ հավաքվեցին տան մյուս բնակիչնե-
րը, և լսելով այրելու հրամանը՝ մոտ են գալիս աղա-
չելու, վոր խնայվի նրանց ունեցվածքը:

— Ի՞նչ: Ունեցվածքը խնայե՞նք: Այրեցեք բո-
լորը, տղերք:

Մի ձեղ չըթողնեք:

Մի քանի բոպե անց բնակարանը բոցերի մեջ ե:
Ստարշինայի համար դա քիչ ե:

— Վառեցեք գոմն ու հացատունը: Այրեցեք: Բո-
լորը թող վառի, անասունն ել հետը:

— Արժե միթե: Անասուններն ի՞նչ են արել—
հարցնում ե սպան:

Նա կարծում եր, թե իր գործատին կըհանդիպեն
զենքով, բայց այստեղ ամեն ինչ հանդիստ ե: Մինչև
անգամ խոսովության նման չե: Նա բարոնական ցե-
ղից չե: Ավելորդ արյուն պետք չե նրան: Իսկ այստեղ,
կարծես, անձնական հաշիվներ են մաքրում:

— Ի՞նչ են արել անասունները: Դուք, պարոն
սպա, չըգիտեք, թե նրանց հետ ինչպես պետք ե վար-
վել: Սրանք դևի ծնունդ են, սրանց պետք ե սրով ու
հրով վոչնչացնել:

Ահա բոցավառվեցին արդեն մյուս շինություն-
ներն ել: Ամեն բան, ինչ վոր ձեռք եր բերած յեր-
կար տարիների աշխատանքով, կրակը ճարակում ե:
Այրվում ե կայքը, այրվում ե անասունը, այրվում ե
այգին...

Վոչինչ բան չի խնայվում:

Բայց մարտիկների պետը դեռ չըկա:

Մեծեցին ձերուկին, ձեծեցին պառավ կնոջը. չեն
իմանում, չեն իմանում:

Հրացանի ձայն ե լսվում: Մեկին բերում են,
այնտեղից, ճամբով:

Մթթե սա նա յե... Այո, դա նա յե:

Յերկու զինվոր բերում են նրան:

—Այս մարդուն բռնեցինք գենքը ձեռին: Տես-
նում ենք՝ մի մարդ գողեգող առաջ ե գալիս, իսկ նրա-
հետևը մի բան սևին ե տալիս խմբի նման: Նա գա-
լիս ե սարայի վրա, իսկ մենք ոձիքից բռնում ենք-
փախչում ե, մենք գնդակը բաց ենք թողնում... վիրա-
վորված ե...

Ստարշինան առաջ ե գալիս.

—Բարի իրիկուն, պարոն կարմիր զորապետ:
Մենք քեզ ետեղ վաղուց ենք սպասում: Վոնց վոր
տեսնում ես՝ կրակ ենք չաղացրել, վոր տաքանաս:
Սառած կըլինես ճամբեքում թրե գալիս:

—Սա նա յե,—հարցնում ե սպան:

—Հենց ինքն ե:

Սկսվում ե քննությունը:

Մեր ե քո զորամասը:

Դժբախտը տեսնում ե—ազատում չըլիս Ե՛հ, գոր-
ծը վատ տարավ նրա մարտական խումբը: Հիմի յեկ
ի՞նչ, վոր մեռնելը յեկել ե, լավ ե պատվով մեռնել:

—Դուրս յեկա վոր ձեզ հանդիպեմ, բայց դժ-
բախտաբար ուշացա: Հիմի այս հրաշալի խարույկով
մարտիկները կըտեսեն ճամբան դեպի ձեզ:

—Շատվճր եք դուք:

—Մի վախենաք. ձեզ հետ գլուխ կելնեն:

—Կարգին խոսի, թե չե՛ գնդակը բաց կըթող-
նեմ ճակատիդ:

—Դուք ընդունակ եք դրան, այդ գիտեմ: Բայց

դուք առանց իմ պատմելուն ել կանեք:

—Դու գլխի ընկար: Տարեք սրան սյան մոտ:

Հաստատ քայլերով նա մոտենում ե սյանը, բայց
չի թողնում ձեռքերը կապեն:

—Թողեք գոնե մեռնեմ ազատ ձեռներով, կյան-
քում բավական սրտուկ յեղել եմ:

—Առաջին վըզվող: Հաշվել տասը քայլ:

Բայց նրանց վնչ այնքան այս մարդու մահն ե
պետք, վորքան շարժման թելերը: Վախեցնենք գու-
ցե, կըպատմի: Այսոր այդ ձևով կարելի յե նրան
կյանք շնորհել, իսկ հետո բոլորին միասին վերջա-
ցընել:

—Դե, ընտրիր գնդակը կամ կյանքը: Յեթե
կասես, թե ուր են թագնվել շարժման դեկավարները՝
կյանքդ կը շնորհենք քեզ:

—Դուք սխալվեցիք. ձեր առջև վնչ թե Հուդան ե,
այլ աղնիվ հեղափոխական:

—Ապա մի տաքացրեք դրան նագայկով:

Ծեծը ողուտ չի տալիս: Նա համառ լռում ե:

—Լսում ես: Կրակիր:

Զինվորները նշան են բռնում: Լսվում ե հրա-
ժանը.

—Մեկ, յերկու...

Սպան չի վերացնում հրամանը. գուցե կըվախենա,
կըխոսի:

Զինվորները սպասում են հրացանները պար-
զած:

—Լսում ես, ուշ կըլինի:

—Կեցցե հեղափոխությունը: Կըզա որը...

—Մեկ, յերկու... Կրակ:

Հսկում ե գալալը:

Ել այստեղ անելու բան չըկա: Ստարշինան շտապում ե ուրիշ տեղ: Մանավանդ վոր, ստանան դիտե, ո՞վ ե իմանում, ուր ե մարտիկների խումբը: Հանկարծ վրա կըտա: Ավելի լավ ե մոտ մնալ պատժիչ արշավագործի հիմնական գործամասին:

— Հետներդ վերցրեք ձերուկին, — հրամայում ե ստարշինան:

— Անխիղճ գազաններ — կանչում ե պառաւլը:

Փերուկին, համարյա մերկ, արդեն քաշեցին սահնակների մոտ ե կապում են ձեռները:

Նրանց հետևում մնում ե մինչև տակը այրված ագարակը ե տանի չափ անտուն մնացած բնակիչներ:

Այդպես ել պետք ե, — ասում ե այն կողմը աչք ածելով ստարշինան:

Ճամբին նրանց ուղին լուսավորում են վառվող ագարակները. յերևում ե մյուս խմբերը նրանցից վատ չեն աշխատում:

Ահա նրանք կարգադրիչ կամխտեյի նախագահի ագարակի մոտն են:

Սակայն այնտեղ ել միայն ջահելներն են, կնիկներն ու ձերերը:

Այստեղ ել սկսում են ձերից:

— Ո՞ւր ե տղեդ:

— Յես նրան պահակ եմ կարգած, ի՞նչ ե:

Նագայկան սուլում ե, ողում:

— Դու կասես:

Բայց ձերուկը չի խոսում:

Դարձյալ առաջվա տեսարանը: Միայն վորդին

չի գտնվում: Նա արդեն հաջողել ե խուսափել այստեղից:

Ստարշինան գոհ չե: Նա իր գլխավոր թշնամուց վրեժ չառավ: Պետք ե մեկնումեկից բարկությունը հանել:

— Գնանք մարտիկների վորջը:

Սպան հոգնել ե: Նրան սաստիկ ձանձրացրել ե այն ամենը, ինչ վոր նա այստեղ տեսավ լիովին:

Նա ուզում ե ստարշինային զսպել:

— Բայց, գուցե, արդեն շատ ե հեռու:

— Վոչ, վեց-յոթը վերստ ե:

— Զինվորներն հոգնել են, պետք ե հանգստանան:

— Ի՞նչ եք ասում, մի՞թե կարելի չե: Մարտիկներին վորջ կըթողնենք՝ մեզ կաքավների պես կըմորթեն:

Յեվ նրանք գնում են այն բլրակի ագարակը, ուր զինվորները նահանջելով այնքան սարսափներ կատարեցին: Այն ժամանակից հետո այստեղի բնակիչները ամենից չարացած, ամենից մարտական են: Նրանք իմացել եյին, թե ինչ ե ցարական կոշիկը: Ագարակից կես վերստ հեռու անտառից զալլ լսվեց:

Հարձակում:

Մի րոպե շփոթություն...

Կովի բռնվել գիշերվա մթնում, ոտար մի տե՞ղ:

Վոչ, պետք ե ծլկել:

— Բշի՛ ձիերին:

Յեվ պատժիչ գործասը արշավից դեպի կալվածքը:

Բայց ահա կալվածքի հենց մոտը՝ ճամբին յերկուտղամարդ կան զինված:

— Ի՞նչ է, պահապան եք:

— Բռնել, զինաթափ անել:

Բայց դուրս ե գալիս, վոր անցորդների ուսին փայտեր են ծայրին կապոցներ:

Վայրկենաբար կալվածքը շրջապատված ե ու գրաված:

Բայց այստեղ ել վոչ վոք չըկա, բացի կնիկներից, յերեխաներից ու ծերերից:

— Իսկ տղամարդիկ ո՞ւր են կորել:

— Գործի յեն գնացել:

— Խաբում եք, շան վորդիք, հիմի ի՞նչ գործի ժամանակ ե:

— Քիչ բան կա. փայտ են պատրաստում, բեռնակրուկթյամբ են պարապում:

— Ձեզ ցույց կըտանք բեռնակրուկթյուն: Դեսը բերեք բռնվածներին:

Նրանց բերում են խրճիթը: Դուրս ե գալիս, վոր այս տավարածները շուկայից են գալիս, այստեղ գիշերը վրա յե հասել: Վորոշել են խնդրել գիշերելու տեղ: Մենակ այդքանը:

Բայց նրանց չեն հավատում: Միթե պարզ չեմի անգամ վոր մարտիկները դարանել են անտառում՝ սրանք այստեղ հետախույզ են: Ե՛հ, ճարը կըզտնեն սրանց խոսեցնելու:

Բայց տավարածները վոչինչ չըզիտեն: Նրանք մինչև անգամ ծանոթ չեն քաղաքականության: Ճիշտ ե, մի քիչ զլուխները գինով ժամանակ յերգել են հեղափոխական յերգեր: Բայց ել ուրիշ վոչինչ չըկա:

Զինվորները գնդակահարման պատճառով գազազած են: Վրան ավելացրու ե այն, վոր վախում են անհայտությունից: Հանկարծ մարտիկների զորամասը այստեղ մի վորեւ տեղ ե: Յեվ, հարձակում...:

Վոչ, պետք ե այս անձոռնիներից դուրս քաշել բոլորը, ինչ վոր գիտեն:

— Ե՛, ասելու յեք թե վոչ:

— Ասովանձ վկա, բան չըզիտենք:

— Հիտուն հարված ամեն մեկին:

Սուկեց նազայական: Հարված հարվածի-հետեից իջնում ե դժբախտների փետացած մարմին: Յեթե իմանային ել, գրանից հետո չեյին ասի:

— Հո հիմի կասեք:

— Վճչ: Վոտները բորկացրեք: Ձեռներից կախեք առաստաղին:

Խեղճերի ձեռները կապում են, առաստաղի գերաններով պարան են անցկացնում, և սրանք բարձրանում են ողբ:

— Տակը դարման գրեք... Այդպես:

— Կրակ տվեք... Այդպես:

Դարմանն այրվում ե և բոցը տալիս կախվածների վոտներին:

Դրան ասում են «խորովել» մինչև վոր կըխոսեն: Բայց դժբախտները չեն խոսում: Նրանք ուշաթափ են:

Պարզ ե դառնում, վոր նրանցից բան չի կարելի դուրս քաշել:

— Թողեք, ջհանդամը դրանց զլուխը: Պահապան դնել ու սպասել առավոտյան:

Դիշերը նրանք վախենում են ճամբա ընկնել: Նրանք այստեղ կըզիշերեն:

—Տունը կրակ գցենք,—հարցնում ե սաարչինան:
—Վոչ, թողնել մինչև առավոտ: Պետք է մի տեղ քնել:

Բայց առավոտվա դեմ հրդեհվում ե նաև այդ ագարակը:

Վոզլ գիշերը չի կարում հրդեհների լույսը: Զորամասերը յեռանդով աշխատում են: Նրանք ուր վոր շտապում են: Ինչ վոր բանից վախենում են:

Ուր ել գնում են, վոչ մի տեղ հասակավոր տղամարդիկ չըկան:

Ասել ե, ինչ վոր մի տեղ ուժեր են հավաքվում: Դրա համար ել պետք ե շտապել, վորպեսզի քանդել բները:

18. ԻՆՉ ԱՆԵԼ

Այդ գավառի հեղափոխականները հանկարծակիի յեկան: Բոլորը գիտեցին պատժիչ զորամասերի շարժվելը, բոլորը սպասում եյին, թե զա ինչ կըլինի: Բայց ինչպես պատահեց, վոր համենայն դեպս հանկարծակիի յեկան:

Շատ հասարակ կերպով:

Մարտական խմբերը ցրվում եյին: Ել չըկար առաջվա միաբանությունը: Տատանվողները հեռացան, դավաճանները թագնվեցին: Պետք եր ամեն ինչ նորից հավաքել: Այստեղ ել դուրս յեկավ, վոր խիստ կարգապահության յենթարկված մարտական խմբի մասին շատ քչերն եյին մատածում: Վոզևորության ժամանակ գնում եյին ամենքը՝ մեծից փոքրը: Հաղթությունն ել իրեն հերթին՝ հեշտ եր լինում: Վոչ վոք

կազմակերպման մասին չեր մտածում: Իեռ հետևներում դառն փորձը չըկար: Խակ հիմա մնացին առանց հարվածային բուռնցքի: Մարդիկ կային, բայց ցրվվ վիճակի մեջ: Միթե կարող ես հիմի այս խորը ձմռան նրանց հավաքել:

Պատժիչ արշավախումբն ել այստեղ վրա հասավ: Մարտիկները ցրված են ամբողջ գավառում փոքրիկ խմբերով: Նրանցից վոչ մինը չի կարող կովի բռնվել. մաս-մաս կըջարդեն:

Մնաց միակ յեղքը—թագնվել մի առ ժամանակ:

Մեր տղան ստիպված եր սեփականատիրոջ ձիով գինվորներ տանել: Նա տեսավ այդ բոլոր սարսափների պատկերն ու գիտեր, վոր հիմի շոկ-շոկ գործելը անողուտ եր, վոր պետք ե ստեղծել մասսաների նոր խանդավառություն:

Յերեկ նրան փոքրիկ տղայի տեղ դրին ե ուշ չը դարձրին, իսկ գավառային ստարչինան ուրիշ սահնակի վրա յեր ե նրան՝ շնորհիվ այդ բանի, վոր նա փաթաթեց եր, չըճանաչեց: Բայց սրանից ավել ոխակ անել չեր կարելի: Ախր նրանք գործում են ցուցակների համաձայն: Վաղը կըզա նրա հերթը: Ուստի ե պետք ե ժամանակին թագնվել:

Յեվ անա նա յերկու մարտիկների հետ թողնում ե տունը, ե միասին ուղևորվում են հարևան գավառը՝ Ֆանոթ առջիկների մոտ:

Նրանք չեն ել յերեցնում, թե փախչում են: Յերեկոն անց են կացնում հեղափոխական յերգերով, իսկ գիշերվա մոտ կատակով խնդրում են գիշերելու թուլլատվություն. դե, կես գիշերին ուր պիտի գնան:

Պառկեցին: Բայց անա կես գիշերին գյուղացի-

ները գալիս են հարևան միկիտանից և հաղորդում են, վոր շրջակայքում հրդեհներ լույս և յերևում: Տնեցիք հուզված են: Նրանք սկսում են գլխի ընկնել, թե ովքեր են իրենց հյուրերը:

Իսկ հյուրերը քնի մեջ լսում են և քունները չի տանում:

Ինու լույսը չըբացված նրանք վեր կըկենան և կանցնեն իրենց գավառը, անտառները:

Պետք է հանդիպել ղեկավարներից վորևե մեկին և ցուցմունք ստանալ:

Մինչև լուսադեմը նրանք պետք է անցնեն սյուներ ցցած ճամբան: Դրա համար շտապում են: Իսկ ձյունը ծնկներից վեր է: Չարչարվեցին, հոգնեցին, վտտները հազիվ են շարժում, բայց գնալ պետք է:

Արգեն կեսորին մտա նրանք հասնում են պայմանական տեղը—անտառի թավուտի սարային: Սաբայի շուրջը հետքեր կան: Ասել է՝ մարդիկ կան: Բայց այնտեղ շփոթ բարձրացավ. յերևում է, վոր մոտեցողներից վախեցան:

Իսկ սարայում, խոտի մեջ թաղված պառկել են՝ տեղական ագիտատորը, ուսուցիչը և գինեպանը: Յերկրորդ որն է, նրանք այստեղ են: Հարցնում են, թե ինչ նորություն կա:

—Կոտորում են և ագարակներն այրում իրար հեռակից:

—Իսկ մեր կողմից խմբեր չեն յերևում:

—Ձե, չեն յերևում:

—Տգերք, այս բոլորը դատարկ բան է,—ասում է ագիտատորը: Յետ դառնանք, մերոնց հավաքենք և մտածենք, թե ի՞նչ ենք անում:

Նրան համոզում են, թե պետք է դեռ ելի սպասել: Յերեկոյան դեմ քույրը ընթրիք կըբերի, նրանից կիմանանք, թե ուր ուղղվեց խումբը: Ամենից ուղիղըն այդ է:

Վճռեցին սպասել:

Բայց այստեղ սպանիչ ձանձրութ է:

Պետք է ժամանակը մի կերպ կարճել:

Յեկեք գոնե զենքը փորձենք:

Յեկեք:

Յեվ սկսվում է նշանառությունը:

Ագիտատորը կրակում է նագանը, իսկ ուսուցիչը միջին բրաունինգը:

—Ոհո, դույմանոց տախտակ ծակեց: Ե՛հ, մենք դեռ կըկռվենք:

Յեկավ լրաբերը.

—Պումբը միայն յերկու որ գործեց ու հեռացավ:

Ասում են, թե սպաններից մեկը ինքնասպան է յեղել: Չի դիմացել սարսափներին, վոր բարոնները կատարել են:

—Ի՞նչ էք ասում:

—Այո, ինքնասպան է յեղել: Նրանց մեջն էլ յերևում է մարտիկներ կան: Նրանց ի՞նչ կա. բարոնների կալվածները պիտի պաշտպանեն: Նրանց համար հաշիվներ ունենալ:

Ահա, ձեռները թափ տվին ու հեռացան:

Այ քեզ նորություն:

—Ե՛, ախպեր ջան, մեր գործերը լավ են գնում:

Պետք է վորջից դուրս գալ և գործով զբաղվել: Պետք է դիմադրությունը կազմակերպել, հավաքել ցրիվ յեկած ուժերը:

- Ճիշտ է:
- Հայդան:
- Յեզ գնացին:

19. ԶԵՆՔԸ ԶԸՆԱՆՁՆԵՂ

Հասան տուն, և ի՞նչ, արդեն կոչնագիր է յեկել ստարշինայի ստորագրությամբ:

— Հանձնեցեք զենքերը:

Այ, թե բանն ինչու՞ն է: Ստարշինան արդեն անցել է իր իրավունքներին:

Թոչունը արդյոք վաղ չըսկսեց յերգելը:

Ո՞ւմ վրա յես հուշող դրել: Պատժիչ զորամասը հեռացավ: Թե՞ իր մարտական խումբն է ստեղծել:

Մարտական խումբ չե, բայց ստարշինան ունի իր կողմնակիցների զորքը— մոխրագույն բարոնները: Իսկ ժողովուրդը պատժիչ զորամասի սարսափներից վախեցած, շարժվել չի համարձակվում: Ստարշինան հասկանում է, վոր հիմա իսկ ժամանակն է: Զենքը խլելը— ամենագլխավոր բանն է: Մնացած ամեն բանը ինքն իրան կըհարթվի:

Բայց այդ հասկանում են նաև հեղափոխականները:

Զենքը խլել:

Վոչ, այդ չի կարելի թույլ տալ: Վնչ մի գեպըում:

— Ընկերներ, զենքը չըհանձնեք:

— Հրամայված է:

— Դո՛ւք ինչ եք ասում, խելքներդ գլուխներդ չի՞: Ուզում եք հանձնել զենքը, վոր հետո ձեզ, անզեններից ցարական սատրապները իրենց կրունկները տակ ճլխեն:

Կոչը չի ոգնում: Ամեն միսն իր գլխի համար վախում է:

Հրամայված է բոլորին յերկուշաբթի լինել գազառային վարչատանը և զենքը հանձնել: Ով չի յենթարկվի՝ կըհանձնվի արդարադատության ձեռք:

Իսկ դա ի՞նչ է նշանակում՝ հիմի ամենքը գիտեն:

Ի՞նչ կարող ուժ կա հիմի ստարշինայի այդ մի թղթի մեջ: Բայց մի՞թե վաղուց է, վոր հենց այդ ժողովուրդը աքացում եր խթանի դեմ: Դատարկ ձեռներով հարձակվում եր զենքի վրա:

Ի՞նչ յեղավ այդ ժողովրդին:

Քննություն չըբռնեց: Դա ստրուկների խոտովություն եր և վոչ թե ցարական ամբողջի գիտակցական հարձակումն: Միայն նրանք, ովքեր գնում էին գիտակցաբար՝ դեռ միաբան դիմանում են:

Բայց նրանք մի բուռն են, վոր ընդհանուր, անկամ վախկոտների բազմության մեջ կորչում են:

Այո, նրանք մի բուռն են: Բայց նրանք դեռ հուշաները չեն կորցնում վառելու նորից ապստամբության կրակը և կտարել թշնամու այդ ճնշումը:

Յերկուշաբթի բոլոր ճամբաները ժողովրդով լցված է: Բոլորը շտապում են զենքը հանձնելու: դեռ կուշանաս ու քեզ կըհաշվեն անհնազանդները թվին:

Մեր տղան ել պատրաստովեց: Ազիտատորը, ուսուցիչը և նա, մի բուռն համակրողների հետ միասին են կանգնած: Ազիտատորը հուշա ունի համոզել այդ անկամ ամբոխին, ուզում է վառել ապստամբության կրակը և այդ հավաքույթը դարձնել կարգադրիչ կոմիտեյի ուժի աղբյուր:

Կես-ճամբին նրանց հանդիպում են վերադարձող գյուղացիների սահնակները:

— Ի՞նչ կա: Ինչո՞ւ յետ դարձաք:

— Պատժիչ զորամաս ե գալիս: Ատում են, վոր հարևան զավառում գիշերել ե և առավոտվա դեմ պատրաստվում ե շարժվել այս կողմը:

Մարդու հավատալը չի գալիս, ի՞նչ դատարկ բաներ են: Նրանք հեռանում են: Բայց դեմից յեկող սահնակներն ավելանում են: Նրանք ավելի ստույգ տեղեկություններ են տալիս: Հեռախոսով հայտնել են, վոր զորամասը մոտենում ե գինետանը:

Ի՞նչպես անեն: Հե՞տ դառնան: Իսկ յեթե զորամասը գինետան մոտ ե, այն ժամանակ հետ շուռ տալը ուշ կլինի—կըբռնեն ճամբին: Ուրեմն՝ լաջն այն ե, գնան պտույտ գործելով:

Յեվ նրանք առաջ են գնում, նպատակ ունենալով զավառային վարչության մոտով անցկենալ և խուսափել՝ պտույտ գործելով:

Ախր պետք ե նաև վարչատուն գնալ, և մի քանի սրտապնդիչ խոսք ասել, իրայիններին հանդիպել:

Նրանք մոտենում են բարեգործական ընկերության: Այստեղ դահլիճը լեփ-լեցուն ե ժողովրդով:

Ագիտատորը շտապում ե թուուցիկներ բաժանել և մի քանի խոսք ասել: Այդ նա դեռ ազատ կանի, քանի դեռ պատժիչ զորամասը չի հասել:

Ամբոխի մեջ դժվար ե ճամբա բանալ: Բայց նա արդեն բեմի վրա յե:

— Ընկերներ, Սառնասրտությունը մի կորցնեք, մի կորցնեք տղամարդությունը: Դեռ վոչինչ կորած չե: Միայն զենքերը մի հանձնեք: Անցյալին հո չենք կարող վերադառնալ: Բարոնն ու ուրյադնիկը հո չըպետք ե նորից գլխներիս տեր դառնան:

Ամբոխը ծափահարում ե: Ինչ հեշտ ե նրան տաքացնել: Ագիտատորը հրապուրվում ե և մոռանում ե, վոր ժամանակ ե հեղանալու, վոր պատժիչ զորամասը մոտենում ե, իսկ մարտիկների պետք, վոր կազմակերպել եր պատժիչ զորամասին դիմադրելու՝ ել կենդանի չե:

Մեր տղան մոտենում ե ագիտատորին և շտապեցնում ե նրան, վոր հեռանա:

— Հիմա, հիմա, — ասում ե սա, բայց կրկին հրապուրվում ե ինչ վոր գործով:

— Ժամանակ չըկա: Իսկ դու այստեղ մնալ չես կարող:

— Գնում եմ:

Յեվ նրանք գնում են դեպի դռները:

Բայց նա ի՞նչ բան ե՞ Չե՞ն թողնում:

— Ճամբան տվեք, ընկերներ: Ճամբան տվեք:

— Զինվորները, գինյուրները:

Տեսնո՞ր բանը:

— Փախչե՛նք հետևի դանից:

Բայց ճամբին նրանք նկատում են, վոր սուռը շրջապատված ե: Պատուհանների մոտ կանգնած են պահապանները: Յելք չըկա ել: Նրանք թակարդի մեջ են:

20. ՇԱՐՔԵՐԻ ՄԻՋՈՎ

Առաջին պատժիչ զորամասերի բռնությունները բարոններին հերիք չարավ:

Ե, ի՞նչ արին վոր. փոթորկի պես անց կացան և մենակ այդքանը: Իսկ զավառի բոլոր խուլ անկյուն-

ները ազատվեցին: Ձենքը մնաց բնակչության ձեռքին:

Յեզ անա հիմա տեղ հասավ յերկրորդ գործարար բնակչությանն լիովին զինաթափ անելու: Իսկ գործարարի գլխավորը հարևան կալվածքի բարոնն է, հենց այն գարեջրի գործարանինը, ուր տեղի ունեցավ կռիվը: Բարոնը շատ հին հաշիֆներ ունի գյուղացիների հետ: Հիմի ժամանակն է նրանց սրբելու:

Ահա կանգնած է նա դռների մոտ լղար, բարձրահասակ և սպառնալի:

Առանց նրա թույլտվության՝ հիմի այստեղից վոչ-վոք չի կարող դուրս գալ: Վոչ, բոլորը—այս հազար մարդը նրա ամուր ձեռքերի մեջ են: Նրա կամքն է՝ սպանել կամ վոդորմել:

Ապա թող փորձեն դիմադրել. նրա տրամադրության տակ մի վաշտ զինվոր կա:

Իսկ ձեռքի տակ ունի գավառային ստարչինային և գրագրին՝ գնդակահարվելու յննթակա մարդկանց ցուցակով:

Բարոնը կանգնեցնում է զինվորներին դռների մոտ յերկու շարքով:

Ինքը ստարչինայի հետ կանգնում է առաջին տեղը, և լավում է հրամանը.

— Մեկ-մեկ դուրս արեք: Գավառային ստարչինայան պետք է ամենքի համար վկայություն տա:

Յեզ անա սկսվում է...

— Մոտ արի: Ի՞նչպես է ազգըդ: Ինչպե՞ս:

— Գավառային ստարչինա, այսպե՞ս է արդյոք:

Այո:

Ինքն էլ է նայում, թե այդ ազգանունը կա՞ ցուցակի մեջ: Ազգանունը ցուցակում չըկա: Բայց նրա համար դա քիչ է:

— Խուզարկել:

Յեզ զինվորները ուշի-ուշով խուզարկում են:

Ցուցակում չըկա, գենք չունի—անցիր:

— Հետևյալը:

Միևնույն գործողությունը հետևյալի հետ:

Բայց բարոնի գործը լավ չի գնում: Նա արդեն կես ժամ է աշխատում է, իսկ ցուցակով դեռ վոչ չի գտնվել:

Նա վերջապես գլխի ընկավ բանն ինչու՞ն է, մեղավորները թագնվում են հետին պլանում և թագցրնում են գենքը:

Նա դրան վերջ կրտա:

Ներս են բերում զինվորների մի լրացուցիչ վրզվոդ և շարում են դահլիճում:

— Նայեցեք վոր գենքերը չըթագցնեն: Խուզարկեցեք վառարանները, հատակը, առաստաղը:

Դահլիճում սկսվում է իրարանցում:

Ազիտատորը հաջողացրել է իր ատրճանակը թագցնել վառարանում: Այդ կողմից նա հանգիստ է: Բայց արի տես, վոր ցուցակում կա: Հիմի վո՞նց անի: Վո՞նց անի հիմի:

Հենց այնպես սպանվի:

Սպանվի: Ի՞նչ հիմար բան. Ի՞նչ հիմար բան...

Ասենք, պետք է սպասել մինչև մեր բարոնը կը ձանձրանա այդ յեռանդից: Գուցե կըհաջողվի ծլկել: Բայց վերջին սպասել էլ չի կարելի. վերջիններն անշուշտ կընկատեն:

Ուստի և պետք է բախտը փորձել այս գործողության մեջտեղը:

Նա գնում է ստուգման տեղը:

—Ազգանձննդ:

—Սալում:

—Արդյոք այդպէս ե, ստարշինն:

—Այդպես ե:

—Ձեռք չըկա:

—Չըկա:

—Սուզարկել: Վոչինչ: Անցիր:

Նա թուլանում ե հուզմունքից: Ահա, ահա նա դռների մոտ ե, վոր հանկարծ լսվում ե ձայնը.

—Սպասիր... կանգնեցրեք դրան: Ազգանունդ ինչպես ե: Ինչպէս:

—Հենց սա յե մեզ պետք: Մի կողմ տարեք:

Ի հարկե... Ի հարկե... Ի հարկե...

Մնաս բարո՛վ կյանք, մնաս բարո՛վ հեղափոխություն:

Ուսուցիչը դեռ վազվզում ե իր բրաունինգով: Ափսոս ե այդպիսի լավ զենքից բաժանվել: Գուցե մեկն ու մեկը կըթագցնի կոշիկների հետքերում կամ հըրտթի մուշտակի ուսերի հետևը: Ախր ատրճանակն այնպիսի չնչին և զլխավորը՝ տափակ ե:

Բայց խիղախներ չեն ձարվում:

Ուսուցիչը դիմում ե մեր տղային: Նա կաններ, բայց դա կատարելապես անհույս բան ե: Նրան անշուշտ կըբռնեն: Ախր նա վրայից հագել ե բարոնի վորսորդական պիջակը և բարոնի կոշիկներ: Միթե դեն պիտի ձգի այդ շորերը: Միևնույն ե, այն ժամանակ յերևան կըհանեն այդ հագուստը և նրա անձնավորությունը կըպարզեն: Շորը չըհանած կըգտնի—եկի կորած ե, բարոնն իր արանքը կըճանաչի:

—Ասա՛ կորանք ելի՛:

Այդ ել այս բարոնի հնամաշի յերեսից, վոր վերցըրել եր կովի ժամանակ՝ ցրտից չըփետանալու համար: Այդ հնամաշի յերեսից ծաղիկ հասակի կյանքից զըրկըվել: Հետը ցարական սատրապներից մեկին չըտարած:

Ահա մի կամ յերկու ժամից հետո նա կենդանի չի լինի յել: Ձինվորների մի վզվողը, շնիկները հեքաշած հրացաններ, փամփուշտների չոր ձայթյուն, ահա բոլորը, ինչ վոր նա կըտեսնի և կըլսի...

Մնաք բարո՛վ, ընկերներ: Մնաք բարո՛վ, բարեկամներ: Մնաս բարո՛վ, սիրելի, չավարտած գործ:

Քանի վոր կյանքում շատ բան չի կատարել, ահա իր մահով արիության որինակ կըտա:

Թող տեսնեն, թե ինչպես են մեռնում հեղափոխականները:

Դա կըլինի նրա վերջին գործը:

Նա հանգիստ ե, բոլորովին հանգիստ: Նա փորձում ե մինչև անգամ կատակ անել: Դա շատ լավ ե ազդում շրջապատողների վրա: Նրանք ել թողնում են իրենց թմրությունը, և դահլիճը դղրդում ե ուրախ ձայներից:

Մեկը խիստ աշխատում ե թագցնել իր ծխամորճը: Յերևում ե, վոր ափսոսում ե զըկվել, բայց վախենում ե մտաը պահել:

—Ասացեք, ծխամորճը կարելի յե մտաը պահել, ծխամորճը:

—Ի՞նչ ե, կրակո՞ւմ ե քոնը:

—Վոչ:

—Այն ժամանակ համարձակ պահի մտաը:

—Ապա ինչո՞ւ մյուսները դեն գցեցին:

Իսկապես հտտակին թափված են հիսուսի չափ ծխամորճեր, սովորական հին ծխամորճնր:

Իսկապես վոր՝ չալ ոձ տեսածը չալ չաթուից կը վախենա:

Բայց այդ ծխամորճի դեպքը նրան կատարելապես զվարճացրեց: Նա հոհրուում է արտասովելու չափ և մյուսներին ծիծաղացնում է: Մինչև անգամ զինվորների հետ զրույց սկսեց:

Բայց հանկարծ հիշեց ուսուցչին: Ո՛ւր է նա: Անցանկ, թե վոչ:

Յե՛վ ահա տեսնում է դռան մոտ, աջկողմը, ազիտատորի հետ նստած է նաև ուսուցիչը: Իսկ նրանց հետ տասնի չափ ուրիշներ:

Ի հարկե... Ի հարկե... Ի հարկե...

Լավ, այդպես լինի թող, միանգամից անենք՝ պրծնենք: Ել ի՞նչ սպասել: Նա կերթա և հերթի կը կանգնի: Ինչ կըլինի՝ կըլինի:

Մնաք բարո՛վ... մնաք բարո՛վ... մնաք բարո՛վ...

Ահա նա արդեն բարոնի կողքին է:

— Ազգըդ:

Նա զիլ ձայնով պատասխանում է:

— Այդպես է, ստարշինա:

— Ինչ վոր միտս չի գալիս... Հն, հն, դու ժամի յերեցփոխի տղեն էս: Նա լուում է, բայց յերեցփոխը վոզևորված է և, պատասխանի չըստասելով, հաստատում է իր տեղեկությունը գավառի բնակիչների մասին: Այո, այո:

Այո, նա չի պատասխանում, Խարի: Ասի, թե նա այն տղան չէ: Ի՞նչ է, միևնույն անգամ ունի: Ինչ՞ու համար: Լավ, յեթե կրկին կըհարցնի—այդ ուրիշ բան է:

— Յեկեղեցու յերեցփոխի—հարցնում է բարոնը.— դե, անց կաց:

Յե՛վ նա անց է կենում: Ահա նա արդեն դռների մոտ է: Այստեղ յերկու զինվորներ կան: Արդյոք բարոնը հետևից չի կանչի, ինչպես քիչ առաջ ազիտատորին, չի ճանաչի իրա իրերը: Ե՛նտ մի դռների հասնի: Ե՛նտ:

Ահա նրան դռներից ել բաց են թողնում: Յետ չըկանչեցին: Յետ չըկանչեցին: Յե՛վ նա ազատ է:

Քիչ մնաց բացականչեր: Հարբածի պես իջնում է բարձր սանդուխներից և ներքևը կանգ է առնում:

Հանկարծ մեկը բռթում է նրա թևը:

Սա ի՞նչ բան է: Բռնվեց:

Դուրս է գալիս, վոր հարևանն է:

— Խելքդ կորցրել ես: Ի՞նչ էս տնկվել փեախ պես: Չես մտածում, թե հագիդ շորերն ինչ է:

Այո, պետք է ամբոխի մեջ կորչել: Տուև, միևնույն է, չի գնա: Նա ուզում է իմանալ, թե ի՞նչ կըլինի 26 ձերբակալվածների վիճակը:

Չէ՛ վոր այնտեղ մնաց իր կուսակցության կընքահայրը և սոցիալիզմի ուսուցիչը—ազիտատորը:

Նա ուզում է իմանալ, թե ինչ կըլինի նրա վերջը:

— Ճամբա սվեք:

Ձերբակալվածներին դուրս են բերում: Նրանց տանում են վարչատուն: Ամբոխը շունչը պահած հետևում է իր ղեկավարների գողգոթայական յերթին:

Մրանք չըփախան մյուսների պես, վտանդն զգալով, նրանք մինչև վերջին ըոպեն իրենց հետ մնացին: Հերոսներ են, հերոսներ:

Բայց ի՞նչ յե ժողովուրդը ձեռները ծալած կանգ-

նել: Ինչո՞ւ չի հարձակվում զինվորների վրա, չի ազատում:

Ինչո՞ւ:

Անցավ այդ ժամանակը: Մակընթացության տեղ՝ սկսվեց տեղատվությունը: Ամեն մարդ իր կաշին և փրկում...

Կարճ ձևական քննությունը, դատարանի խըղճուկ մի նամնությունը՝ վերջացավ: Այդ ամենը նախավճռած եր ցուցակները կազմելիս:

Ամբոխը դեռ ելի սպասում և: Մի՞թե նա մի բան կըվճռի: Մի՞թե:

Ահա դուրս բերին ագիտատորին:

Բարեկազմ, գունատ, շիկամորուք՝ նա քայլում և զինվորները վզվողի մեջ դեպի իր գողգոթան:

Նրանք առաջներով անցնում են... Ժողովուրդը լուռ գլխարկները հանում և: Դատապարտվածը սպասում և, թե գուցե մեկն ամբոխի միջից հրաժեշտի խոսք կասի:

Բայց ամենքը լուռ են: Այն ժամանակ ինքն և ասում.

—Մնաց բարով, ընկերներ: Վերջացրեք սկսած գործը:

Ամբոխի մեջ, մի տեղ, մեղմ լավում և.

—Դնաց բարով, կըկատարենք:

Արդյոք լսեց նա: Արդյոք լսեց: Պետք և բարձր գոռալ: Այդ կանի մեր տղան, մեր տղան կանի այդ:

—Չենք մոռանա քո ուխտը:

Նրան կըկին յետ հրեց հարեանը և ուժով քաշ տվեց սահնակի մոտ:

Զինվորներն սկսեցին ամբոխին քշել և փնարել

մեղավորին: Բայց նա արդեն սահնակի վրա յև և ընկնում և ճամբա:

Նրանք բարձրանում են բլուրը, դեպի դպրոցը, ուր ճամբան անցնում և անտառակի միջով:

Այնտեղ են տանում ագիտատորին:

Նա ուզում և տեսնել նրա վերջին բոպեները:

Զինվորները ճամբից դուրս են գալիս: Նրանցից մինը տասը քայլ և հաշվում փոթորկից կտորած կեչից, մյուսը նրան կապում և ծառից. լավում և հրամանը.

—Մեկ, յերկու...

Բայց նա սկսեց խոսել.

—Յես պատրաստ եմ: Դահիճներ: Կարող եք կրակել: Իսկ հեղափոխության կենդանի կրակը ձեզ չի՞ կործանի:

—Կրակ:

Կրակոցի չոր ճայթյուն, և նա յել չկար:

Սայլապանը ձիերի սանձերը թափ տվեց, և նրանք շարժվեցին դեպի տուն:

Շուտով այդ շավղով կըգան նրանք, ովքեր այնտեղ մնացին...

Շուտով... Շատ շուտով: Կըլավի կրակոցների չոր ճայթյունը, կըկարմրի սպիտակ ձյունը, և նրանք ել չեն լինի...

21. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՊ Ե ՊԱ- ՀԱՆՋՈՒՄ

Մի՞թե քիչ հեղափոխականներ են սպանվել այս ամբողջ ժամանակ պատժիչ գործամասերի ձեռքով:

Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ յերբեք մարդու սիրտը այնպես չեր ցավում, ինչպես հիմա: Ինչո՞ւ ծանոթ աղջիկների ու մայրերի աչքում չեն ցամաքում արցունքները: Ինչո՞ւ յեն դեպի քաղաքականությունն ամենից անտարբեր մարդիկ անգամ բուռնցքները սեղմում:

Ինչո՞ւ:

Մի՞թե չըգիտե՞ք: Մի՞թե այդ կարելի չե չիմանալ սպանեցին վոչ միայն մի մարդու, վոչ միայն մի հեղափոխականի,—սպանեցին ընկերոջ և բարեկամին, սպանեցին յերիտասարդ բանաստեղծին, սպանեցին շարժման սիրտն ու հոգին:

Ահա թե ինչո՞ւ:

Դեռ չեյին տեղափոխել նրա դիակը հայրական տունը, արդեն բոլոր շրջակա ագարակների բնակիչները շարժվեցին սգավոր տունը, վոր վերջին անգամ նայեն իրենց ուսուցչին և բարեկամին:

Մեր տղան հինգ վերստ հեռավորության վրա յե նրա տանից:

Բայց ի՞նչ ասել ե հինգ վերստ հեռավորությունը, յերբ սիրտը քաշում, քաշում ե այնտեղ:

Նա մեռնելու չափ հոգնեց ու ուժասպառ յեղավ այդ սարսափների յերկար որվա ընթացքում:

Նա վոտով ճամբա յե ընկնում այնտեղ:

Արդեն մթնում ե, վոր նա մտնում ե սենյակ:

Հանգուցյալի դիակը դրված ե տախտի վրա: Նա հենց նոր ե բերած: Ինչպես վոր եր նա վերջին բուպեյին՝ այնպես ել հիմա նա դեռ ելի մուշտակը հագին ե, մորթի գդակը գլխին, կոշիկներով:

Մուշտակի միջով են խփել: Նրա վրա մի տեղ արյունը լերդացել ե:

Կողքին նստած ե մայրը: Նա չի լալիս: Նա կույր հատել ե աչքերը հանգուցյալի կրծքի կողմը մի փոքրիկ ձեղքի վրա:

Հենց այստեղ, այստեղ ե խոցել գնդակը, վորը կանգնեցրել ե իր վորդու կյանքը, ստիպել ե լուել նրա սիրտը:

Քսանհինգ տարի յե, վոր սկսեց տրոփել այդ սիրտը: Նա լավ ե հիշում այդ: Շատ լավ... Բայց այն ժամանակ կարո՞ղ եր նա մտքով սրա նման մի բան անցկացնել: Կարո՞ղ եր նա մտածել, վոր այսպիսի մի վախճան կլինի:

Իրայինը իրայինին... իրայինը իրայինին.— մոմոում ե նա ինքն իրան:

Մայրիկ, գուցե պետք ե ոգնեմ քեզ, հանվեցնենք նրան, ասում ե մեր տղան:

—Վո՛չ, վո՛չ, թող պառկած մնա: Կենդանի լինի կարծես: Մի՞թե չեք տեսնում, թե նա ինչպես կենդանի յե: Հենց այդպես նա պառկած եր յերեկ այստեղ, անտառից վերադառնալով:

Նա շուրջն ե նայում. ժողովուրդը դեռ գալիս ե ու գալիս: Սենյակը լիքն ե արդեն: Բայց նրանցից վոչ փոք չի լալիս:

Մի՞թե հիմա լացի ժամանակ ե:

Դիշատիչը ճանկերը խրել ե ժողովրդի սրտի մեջ և հոշոտում ե նրան:

Ձրալիտի լաց լինել, պետք ե մաքառել:

Մի՞թե սա յե մենակ ընկած: Սրանք տասնյակներ են, հայրուրներ, հազարներ

Մեր շարքերը նոսրանում են, իսկ նորերը, նորերը, նրանց տեղը բռնողներ դեռ չկան:

Ո՞վ պիտի սկսած գործը հասցնի մինչև վերջ:

Ո՞վ:

Մեր աղան մտիկ և տալիս իրենց դեկավարի աճույնի մոտ կանգնած մարդկանց յերևաներին: Նրանցից ո՞վ կարող է վերջացնել նրա գործը: Վոչ, նրանց մեջ զեկավար չըկա: Դրանք հետևակներ են, վոր ուժեղ են, յերբ տարված են հեղափոխական պիլքով: Բայց տեղատվության որերում նրանք մենակ չեն դիմանա:

Ահա նրանք հիմա չեն լալիս: Նրանք չարությունից գազազում են: Նրանք պատրաստ են կռվի մտնել, հենց վոր հրամանը կըլսվի:

Բայց հիմա ո՞վ կըտա այդ հրամանը:

—Ախ ինչո՞ւ, ինչո՞ւ յես չըկարողացա ծնվել հինգ տարի առաջ, — մտածում է նա: Ահա կանցնի հեղափոխությունը, և այդ պայքարի մեջ դուրս կըգա, վոր նա մի յերեխա յեր, վորին մինչև անգամ վառողը մերժում են:

Անհանգիստ մի լինի, անըզնտտ կրկնում էր նրան ուսուցիչը: Քո ժամանակը դեռ առաջիկ է: Յեզ լուրջ կռիվներն ել առաջներիս է: Կարող կըլինես դեռ կռվել ու քեզ ցույց տալ:

Այո, գուցե, դեռ այս գործի համար փոքր ես:

Մեծացիր, աղամարդ դառիր և ուժ հավաքիր:

Այդ է պահանջում հեղափոխությունը:

Այդ էր պահանջում հանգուցյալ ուսուցիչը և բարեկամը:

Իսկ խրճիթում ավելի ու ավելի սպառնալից աճում և ծավալվում են թաղման յերգի ձայները.

Կընկնի բռնություն, կելնի ժողովուրդ,

Կարող, մեծագոր, ազատ հավիտյան,

Գնացեք, ընկերներ, դուք պատվով անցաք

Ձեր ուզին ազնիվ և հերոսության:

22. ԱՆՏԱՌԻ ՅԵՂԲԱՅՐՆԵՐ

Բարոնները միայն այս գոհերով չըհանգստացան: Կրկին բողավաւեցին տները, այրվեցին կայքերը, թողտանգվեցին ու ձերբակալվեցին մարդիկ...

Վորպեսզի թոռները ու ծոռները հիշեն, թե խոսվարարները հետ ինչպես ելին վարվում:

Հիմա վոչ վոք իր կյանքի համար յերաշխավոր չեր:

Վրա կըթափվեն գիշերն ու կըսրբեն, կըտանեն: Հետո յել առանց դատի, առանց քննության: Միայն լքագրերում մի նկատողություն կերևա.

—Փախչելու փորձ անելիս՝ զնդակահարվել են:

Իսկ կյանքը ամեն մեկին պետք է:

Հիմա հեղափոխության գործին մասնակիցներից վոչ վոք տանը չի գիշերում: Ով ուր կարողանում է՝ թաղնվում է, վորը ծանոթների մոտ, նրանց մոտ՝ վոր չեն արատավորվել, վորը՝ անտառում, վորը՝ ուղղակի ձնակույտի մեջ:

Մեր աղան վոչ մի դեպքում չի ուզում փախըստական լինել:

Բայց մի՞թե ուժի առաջ կըկանգնես: Մալ ուղղակի տանը, սպասել, թե ինչ կըպատահի—դա նշանակում է ինքն իր ձեռքով ընկնել նրանց ձանկը: Բայց վոչ, այդ դեպքում ավելի լավ է թափառել և փորձել յեղենուտում այդ անգղներից վորեւ մեկին ուղարկել հանդերձյալ աշխարհը:

Յեզ նա պատրաստվում է ձամբա ընկնելու:

Նա այս բանում մենակ չէ: Նրանք յերեք հուլի յեն: Միասին պիտի լինեն:

Այսօր նրանք կըփորձեն ծանոթների մոտ գիշերելու: Գիշերն այնքան ցուրտ է, վոր մարդու շունչը կտրոււմ է: Իսկ նրանց հագներին բարակ վերարկուներ են:

Արդյոք միշտ այդպես ճնշող է ձմերային գիշերը:

Շուրջը հրդեհների լույսն է: Հեռվից հազիվ լսվում է ինչ վոր դղրդոց: Ծները ձայները ձգած վռոնում են, աչքերը մեխելով հրդեհների լույսի վրա: Ինչ վոր մի տեղ կայծակի պես թռչում է ընկնող աստղը: Իսկ լուսինն այնպես պայծառ է լուսավորում, կարծես վճռել է անտուններին մատնել հետապնդող հրեշի ճանկը: Յե՛վ յերկնքում մի հատ ամպ չկա:

Կարծես գիտամա՛ր է գիշերը այսպես:

Այսպիսի գիշերը ճամբով գնալը վտանգավոր է:

Նրանք թափառում են ճամբաներից դուրս, աշխատելով անտառով գնալ: Մի ժամ անց նրանք արդեն ծանոթների մոտ են: Սրտագին դիմավորում են: Բայց նրանց դեմքին ել նույն վախն է, ինչ վոր ուրիշների:

Ճիշտ է, նրանք վոչ մի արարքի չեն մասնակցել, բայց, ո՞վ է իմանում, աստանի բան է:

Կերակրեցին փախստականներին և տանտիրոջ անկողնում պառկեցրին:

— Բնեցե՛ք, քնեցե՛ք իրիկվանից, աստված է իմանում, թե գիշերն ինչ կըլինի: Յեթե ստիպվելու յեք անտառում թագնվել, այս ցրտին չեք կարող քնել:

Տանտիրուհին ճիշտ է ասում, ո՞վ է իմանում գիշերը ինչ կըլինի:

Նրանք աշխատում են քնել: Բայց քները չի տանում: Ծները հաջում են, կարծես նախազգալով վրտանգը, իսկ պատուհանից յերևում է հրդեհի լույսը:

Տանտիրուհին նախազգուշանալով փակում է պատուհանը: Բայց ինքը թեղ կարճո՞ղ ես խաբել: Միաքո՞ աշխատում է իր կարգին և մրափած ժամանակդ ել լսվում է շների հաջոցը և հրդեհի ճարճաթյունը:

Ձե, քնել չի լինի: Ինչ վոր մի աղոտ նախազգացում... Մի անգամ արդեն կյանքերը սիսկի յենթարկեցին այն ժամանակ, այն յերկուշաբթի ուրը, գինաթափման ժամանակ:

Ավելի լավ է թողնել հյուրասեր տանտերերին և անցնել անտառ:

Նրանք պատրաստվում են և դուրս յելնում:

Դուրսը սառնամանիք է: Կամթում է ականջներդ, հասնում է վտոներիդ, իսկ նրանք մինչև ծնկները ձյան մեջ ուղղվում են դեպի անտառ: Այնտեղ ճամբից յերեք վերստ հեռու մի խոտի մարագ կա: Սոտի մեջն էլ նրանք կըգիշերեն:

Ահա և մարագը: Ձյան մեջ թաղվել է: Շուրջը ճամբան չըկա: Սատանան անգամ չի համարձակվի մտիկ տալ այս կողմը: Նրանք մարագն են մտնում վերի դռնից: Մի քանի քայլ ել չեյին փոխել, վոր թափվեցին գետին:

— Վայ ձեր հերն անիծած: Չլինի թակարդ է:

Բայց դա ուղղակի խորամանկ տերն էր խոտը մարագի հետևից դուրս տարել, սխայն թողնելով դռների մոտ, վոր դուռը չըբացվեր և դժվար լիներ դողանալը:

Բայց դա բոլորովին հարմար վորջ չե մեր արջերի համար: Յերկու ժամում կըսառչեն: Բայց հոգնածությունը իրն անում է: Նրանք կըմնան այստեղ: Ինչ կըլինի՞ կըլնի:

Մտան խոտի մեջ ու պառկեցին:

Առավոտը, զարթնում են՝ չեն կարողանում տեղ-
ներից շարժվել:

Սա ինչ բան է:

Սառել-կպել են պատին: Յեվ նրանք ստիպված
պիտի անցկացնեն ձմեռվա յերեք ամիսները:

Կըդիմանան վոր:

Առանց սնունդի, առանց տանելի հագուստի,
հրազենների սակավ պաշարով,—այսպես, նրանք, ան-
տառի յեղբայրները սկսում են իրենց թափառական
կյանքը:

Յերեք որից հետո նրանցից մինը գնում է մո-
տակա ագարակը՝ կերակրի և նորությունների:

Նա առաջ դուրս կըգա ճանապարհը, շուտ կըգա
հակառակ կողմը, իսկ ապա թագնավելով կըմոտենա ա-
գարակին:

Այսպես ապրում են նրանք յերկրորդ շաբաթը:

Բայց միթե նրանք յեկան այստեղ, վոր թագնը-
վեն, և վոչ թե նրա համար, վոր ժամանակին սղա-
սեն ու կրկին գործեն:

Շուրջը մի փոքր հանդարտվեց: Պատժիչ գորա-
մասը անցավ ուրիշ կողմ: Կարելի յե գործել:

Առաջին գործն է խրատել մատնիչներին: Դա
վրեժի համար չէ, վոչ, այլ նրա համար, վոր մյուս-
ները լեզունները իրենց պահեն:

Դա կարևոր և անհետաձգելի գործ է:

Պետք է ընկերների կյանքն ազատել:

Այդ գործի համար յերեք մարդով չի կարելի գը-
նալ: Դրա համար նրանք միանում են ուրիշ անտառի
յեղբայրների հետ, անցնում են անտառի ավելի խոր-
քերը և սկսում են գործել:

Նրանք հիմի տասյերկու հոգի յեն: Նրանցից կե-
սը մատուցել ունի, մնացածները՝ յերկփողանի կոտըր-
վող հրացաններ և յերկու կանոնավոր հրացաններ:

Նրանք հիմի կարող են պատվավոր կովի դիմա-
նալ:

Առաջին գործը պիտի լինի խրատել գավառային
ստարշինային: Պետք է նրան ել թողնել առանց շապ-
կի այնպես, ինչպես նա թողեց մեր խալխին:

Այդ գործի համար ճամբա յեն ընկնում վեց հոգի:

Ահա նրանք թագնավեցին ձնակույտերի հետևե
Մնացածները խարույկ վառեցին և սպասում են,
թե յերբ անտառի հետևից կըփայլի հրդեհի լույսը:

Կես ժամ չանցավ, վոր ցայտեց լույսը: Չի կա-
րող պատահել, վոր մերոնք այդպես արագ տեղ հաս-
նեն: Այստեղ ամբողջ վեց վերստ է: Անշուշտ լուսինն
է դա, գուրս է գալիս:

Բայց վոչ, լույսը մեծանում է հետզհետե և ամ-
պերում ցցվում է կրակի սյունը:

Դա հրդեհ է:

Ի՞նչ է նշանակում սա:

Չըլինի մերոնք թակարդ ընկան: Թե չէ՝ դա պատ-
ժիչ գորամասն է, դարձյալ գործում է:

Պետք է սպասել մերոնց վերադարձին:

Անտառում ինչ վոր մի բան է ճոճուում: Կարճ սու-
լոց... Պատասխանում են կրկնակի սուլոցով:

Մերոնք են:

—Չը, ի՞նչ կա. ելի՞ բարոնը քեֆ է անում:

—Վոչ, մերոնք են քեֆ անում: Ստարշինի ազա-
րակի մոտ կարմիր աքլորը բաց թողին:

—Ի՞նչ էք ասում:

- Մեզնից ճարպիկ գտնվեցին:
 —Սուս, լոբր:
 —Մեր ընկերներից անտառը լիքն են: Հիմի դու
 քեֆին մտիկ:
 —Բայց եդ վճռտեղից ճարեցիր բրաունինդը:
 —Ուրյաղնիկին պատահեցինք: Տեսնեմ կաշվից
 կախ ե ընկած, դուր յեկավ, յես յել առա:
 —Իսկ իրան միթե բաց թողիր:
 —Անհանդիստ մի լինի: Սոված շների համար նը-
 բանից ընթրիք պատրաստեցի:
 —Լավ բան ե: Ապա մի դեսը տուր, տեսնեմ:

Հիմի հաճախ են այրվում մոխրադույն բարոն-
 ների ագարակները: Վոչ մի մատնիչ չի կարող խու-
 սափել պատժից: Դա խիստ ոգնում ե լեզուներն ի-
 բենց պահելու, և ձերբակալվողների թիվն որեցոր նը-
 վազում ե:

Ասել է՝ նրանք իրենց ժամանակը գուր չին անց-
 կացնում այստեղ:

Բայց իշխանութունն ել քնած չե:

Կանչվում են բոլոր բնակիչները հետապնդման,
 իսկ զինվորներին կանգնեցնում են ճանապարհներե-
 վրա:

Ահա սկսվեց հետապնդումը: Բնակիչները գնում
 են մեծ գզուռությամբ: Նրանք ձեռներին կոտորակի
 հրացաններ ունեն, իսկ կեսը նրանցից մահակից բացի
 բան չունի:

Ահա նրանցից յերկուսը մոտենում են մեր խըմ-
 բակի բնակարանին:

Մերոնք թագնվեցին թփերի մեջ և հրագեններե-
 փողերն ուղղեցին հետապնդողների դեմ:

- Կանգնեք,—լսվում ե զսպված մի ձայն:
 —Գնացեք ձեր արևի ձենն ածեք և մտքերումդ
 պահեք, վոր դուք այստեղ բան չեք տեսել: Իմացա՞ք:
 —Իմանցանք:
 —Դե, ասել ե մի մոռանա՞ք, թե չե մենք կընիշե-
 ցընենք:
 Հետապնդողները լեղաճաք հեռանում են:
 Տեսնե՞ք նրանք լեզուներն իրենց կըպահե՞ն:
 Բաս չե: Նրանք գիտեն, թե դրանից ինչ հոտ ե
 գալիս:

Բայց իշխանութունն այդ հետևանքից չի հան-
 գըստանում: Վաղը նրանք զինվորներ կուղարկեն: Պետք
 ե մի ստուգել, թե չորս կողմ ինչ կա, ինչ չըկա: Յե-
 թե պաշարումը չեն վերացնում՝ ասել ե, պետք ե հե-
 աանալ այստեղից:

Իրիկնադեմին նրանցից յերկուսը գնում են հե-
 տախուզության: Պաշարումը չի վերացրած: Պատ-
 րաստվում են առավոտյան նոր հետապնդման և ար-
 դեն զինվորների ոգնությամբ:

—Ե՛, ախպեր ջան, պետք ե աթոռանխտը տե-
 դափոխել ուրիշ անտառներ:

Նրանք հավաքում են իրերն ու հեռանում են:

Հեռանում են արքունական մեծ անտառները,
 ուր ավելի շատ ազատ-արձակ ե և ավելի քիչ վտանգ:

Բայց այստեղ ել մոտիկ մարդ չի բնակվում:
 Ստիպված են լինում կերակրվել համարյա միայն վոր-
 սով: Պատուոված, բրդոտած, նրանք վայրենիների յեն
 նմանվում:

Մեր տղան դրան չի դիմանում:

Այսպես յերկար չես ապրի: Ապրուստի հնար չը-
 կա, ստիպված են դուրս գալ մեծ ճանապարհները:

Այն ժամանակ ինչով կըտարբերվեն սովորական սովազակներէն:

Իրան ավելացրու ե այն, վոր այստեղ ել սկսվեց հետապնդումը:

Ահա յերրորդ որն ե նրանցից ամենալավ մարտիկի հաղորդակցութեան կապը կտրեցին:

Կտրեցին ու սպանեցին նրան:

Նա այս բանը հետո՞ իմացավ գյուղացիներէն:

Այդ ընկերը թագնավել եր խոտի դեղի մեջ: Նրաստել եր յերկու որ առանց կերակրի: Զորս կողմը ձյուն եր մաղել, հետքերը կորցրել: Պաշար լինե՞ր՝ նա յերկար որեր կապրեր այստեղ:

Բայց ի՞նչ պայմաններում:—Ինչպես բանտում: Ավելի վատ ե քան բանտում:

Ընկերը չըհամբերեց ե վճռեց ճամբա դուրս գալ մի բան աշխատելու կամ մի ազարակում բան-ման խնդրել:

Բայց հետքը մնաց: Այն ժամանակները յեղանակը պարզ եր, իսկ ինքը հո հետքը չեր կարողանա կորցնել:

Չենց այստեղ ել հետախուզող շների ոգնութեամբ գտան նրան:

Յերկար չըպաշտպանվեց կրակելով: Տղան լավ նշան առնող եր. սպայիրոսի գիլզուն քսան քայլի վերա մատուցելից խփում եր: Այո:

Ահա նա գետին փռեց չորս հրացանաձիգների:

Բայց խոտի դեղը յերկու բացվածք ունի նշան բռնելու համար: Զինվորները մոտեցան չըպաշտպանված կողմից ե այրեցին զեղը:

Ընկերը դեռ ելի անձնատուր չի լինում: Բայց այդ-

վելու յել ախորժակ չունի: Վառեց բոլոր փամփուշտները: Միայն յերկուսն իր համար թողեց, վոր կենդանի անձնատուր չըլինի: Այդ յերկու փամփուշտներով նա դուրս ե թռչում դեզի միջից:

Բայց արժե՞ իր համար փամփուշտ փչացնել:

Ավելի լավ չե՞ դրանցով այն աշխարհն ուղարկի մի զույգ կտրիճների, իսկ ինքը փախչի:

Բախտը կըբանի—աղատված ե: Զի բանի՞ փախչելիս մի՞կնուլն ե՞ նրան կըսպանեն:

Նշան ե բռնում զինվորին:

Մեկ,—մինը ընկավ:

Յերկու,—մյուսն ել ընկավ:

Յե՞վ սկսեց փախչել:

Բայց այստեղ նրան կսպառնա հրացանաձիգի գընդակը:

Բայց լավ ընկեր եր: Ամենալավ հրացանաձիգը:

Այսպես ընկան նրանք մեկը մյուսի հետեից...

Հիմի յերեք հոգի յեն մնացել նրանցից: Հետքերից արդեն զինվորներ են ընկել, վորս են անում նրանց՝ ինչպես վայրի գաղաններ:

Այսպես մարդ սպանվի... Թաղվի մի վորեւ տեղ, անտառի բերանում առանց բարեկամների, առանց յերգերի...

Զե, սա արդեն կյանք չե:

Մեր տղան սրտապնդվում ե, հրաժեշտ ե տալիս ընկերներին ե—նրանք յերեք հոգի յեն—ամեն մինը գնում ե իր կողմը:

Նա գնում ե ուղղակի իր հին բնակարանը: Մի-

թե նրան կըմատնեն: Նա գյուղացիներից վոչ վոքի վոչ մի վնաս չի արել:

Վատ դեպքում—միթե նա չի կարող այնպես վարվել, ինչպես այն ընկերը դեզի մեջ. մի գնդակ իր համար թողնել, իսկ յեթե իր համար պահանջ չի գգացվի—հասցնել արյունարբունների ճակատին:

Ինչ կըլինի, կըլինի:

Նա ուղիղ իր նպատակին կըդիմե:

Իսկ այդ նպատակի մասին նա յերկար մտածեց այս յերեք ամիսը: Ապրել իբրև անտառի յեղբայր՝ դա կենդանի մեռյալի կյանք է:

Միթե նա դրա համար է ստեղծված:

Վոչ, մարդը ստեղծված է ավելի լավ կյանքի համար:

Նա կըգնա ինքը կատարելագործվելու, վոր ուսուցանի ուրիշներին:

Նա պիտք է դառնա հասկացող հեղափոխական, ընդունակ բռնելու շարքից դուրս ընկած զեկավարի տեղը:

Նա այդ կամենում է:

23. ՄԵՌԱՎ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՅՅԵ՛ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հիմա նրանց ձեռները ազատ են, այդ ցարական թիկնապահներին: Մեմյոնովյան գունդը կտարեց Մոսկվայի ապստամբությունը և սուրը մխեց շարժման սրտի մեջ:

Ել ինչո՞ւ չըզվարճանան ապստամբած գավառով: Դա նրանց համար դատարկ բան է:

Կազակները իրենց ուտեստը քաշում են ընակչությունից. նրանք վարերով սովոր են այդ արհեստին:

Պաշտոնյաները հարստանում են, դուրս քաշելով «արձակուրդի և փրկանքի» փողերը:

Միայն յերկիրը դատապարտված է ավերածության:

Ամեն բան, ինչ վոր մեկի մյուսի մոտ կար սե որվա համար պահած—փող, կտոր, լավ ձի, մինչև անգամ թաղման շոր,—այդ ամենը գնաց կազակներին լապլասական շալվարների խորունկ գրպանները:

Թող հարբեն, թող կողոպտեն, թող բռնաբարեն, միայն թե վերջացնեն հեղափոխությունը:

Այդպես է գաղտնի հրամայված պատժիչ զորամասերի պետերին:

Նրանք յեռանդով աշխատեցին, այդ դահլճները: Հիմի նրանց գործը պրծնելու վրա յե:

Հեղափոխականներից ով վոր չեր հաջողեցրել յերկրից փախչել—մոխրագույն բարոն մատնիչները մատնել էյին և գնդակահարել:

Տեղ-տեղ դեռ իրենց հիշեցնում են միայն անտառի յեղբայրները: Բայց նրանք էլ, ով սպանված չե, անցնում են աշխատանքի,—սարքվելով կեղծ անցաթղթերով:

Բայց հարվածը դուր չանցավ և իրենց, գյուղացիների համար, վորոնք հիմա ծավեցին դեպի հակահեղափոխության բանակի կողմը: Բարոնները նրանց չեն հավատում և հին հաշիվներ են մաքրում: Ռիզայի և Ռեվելի բանտերը նրանցով լիքն են:

Վերադառնալով իր թափառումներից անտառի թավուտներում՝ մեր տղան գնաց ծանոթ կոշկակարի մոտ:

—Հը, բարեկամ, դո՞ւ ինչ ես եղպես բարակ աշխատանքի տվիլ քեզ: Պսակի՞ կոշիկներ են:

—Վոչ, պարահանդեսի տուֆլիններ են:

—Վհնց թե պարահանդեսի: Մի՛թե բանը արդեն պարահանդեսների յե հասել:

Այն ժամանակվանից, յերբ այստեղ բնակություն են հաստատել շտաբի սպաները՝ համարյա ամեն յերեկո պարահանդես ե:

— Ե վհնց ե, իրենց դամաներն ունեն, հեռները բերած:

—Իրենցը վորն ե: Բոլորը մեր աղջկերքն են: Հենց ուղղակի վզներովն են ընկնում: Չես իմանա, ուր փախչես նրանցից:

—Չորս կողմը արյուն, գերեզմաններ, անվերջ գերեզմաններ,—իսկ եստեղ պարահանդեսներ, անբարոյականություն...

—Վոնց վոր տեսնում ես...

—Հըմ, իսկ մեծերը, մեծերը վոնց են:

—Նրանց ինչ կա վոր: Ուրախ են. իրենց ազջիկները վոսկե ուսադիրներով փեսացուներ ունեն:

Այ թե ինչ...

Սպանված հերոսների վոսկորների վրա, հարբած անխահարության մեջ նոր դաշինք ե կազմում մոլորագույն բարոնի, այդ գյուղական բուրժուազիայի ե կապույտ բարոնի՝ մերձբալթյան ազնվականության մեջ:

Այդ դաշնակցությունը հիմա կռիվ կըհայտարարի գյուղական չքավոր դասին ե պրոլետարիատին:

Մեր տղան հիմա հիշում ե մի ժամանակ կարդացած մի գիրքը:

Այնտեղ կես առ կես ֆրանսական հեղափոխության համար ասված եր հենց նույն բանը, ինչ վոր հիմա կատարվում ե նրա աչքի առաջ:

Լավ: Թող այդպես լինի: Թող լինի այդ նոր դաշինքը:

Նա կաշխատի ստեղծելու դրա հանդեպ դուրս գալիք ուժը, ստեղծելու հզոր պրոլետարական զորք: Նա հիմա իր խնդիրը հասկանում ե:

—Հեղափոխությունը մեռավ: Կեցցե՛ Հեղափոխությունը:

24. ՊԵՏՔ Ե ՀԱՍՍԱՏ ՀԻՄՔ ԴՆԵԼ

Այն ժամանակից, յերբ նա վերադարձավ անտառի թափառումներից՝ նրա բանը հաջող եր գնում:

Չորս կողմ խուզարկություններ են, ձերբակալումներ համարյա ամեն օր: Իսկ նրան վոչ վոք ձեռք չի տալիս: Մինչև անգամ նա չի թագնվում:

Սկզբում նա դեռ պատուհանից դուրս եր մըտիկ տալիս, թե արդյոք գլխավոր ճամբով ձիավոր չի՞ անցնում, վորպեսզի ժամանակին թագնվի: Բայց հիմի այդ ել մի կողմ թողեց: Նա մինչև անգամ հանեց բարոնի պիջակը ե կրկին թաշախուստ ե բանեցնում, ինչպես առաջ: Դա արդեն նման եր հանդգնության: Բացի այդ նա վարձվեց մեկ միջին-գյուղացու մոտ ե այստեղ արտասանում եր ուղղակի միտինգի ճառեր, չըխնայելով վոչ յերկնային վոչ յերկրային թագավորներին:

Պատահում ե վոր գնում ե բակով ու յերդում.

Մեզ սնող մայր յերկիրն առատ

Ամեքիս ել հաց կըտա

Մեր ու ծաղիկ, մրտենի, վարդ

Քաղցր սխտե՛ շատ շատ կա:

Քաղցր սիսեռ մենք կըճարենք
 կճեպներն ել կըմաշկենք,—
 Իսկ դրախտը մինչքաշ կանենք
 Հրեշտակներին, ծտերին:

Յե՛վ դա գուր յեկավ, այդ միջին գյուղացիներին, վորոնք տառապել եյին և՛ տերտերներինց, և՛ կազակներինց, և՛ իշխանություննինց:

Բայց ամենից շատ նրանց դուր եր գալիս այդ պատանու հանդգնությունը. ահա մյուսները թագնը՝ վեցին, կորան, դավաճանեցին, բայց նա նստել ե իր տեղը, կարծես վոչինչ չի պատահել, և շարունակում ե քարոզել յերկնային ու յերկրային կուռքերի տապալումը:

Առայժմ նրա այդ քարոզը չեր սպառնում վնչ նրանց կայքին, վոչ ազատության: Ուստի և նրանք դեպի նա մինչև անգամ սիրալիր եյին վերաբերվում. հաճախ հարցեր եյին տալիս—ինչ կըլինի սոցիալական հեղափոխության յերկրորդ որը:

Իսկ նա յերբեք չեր արդարանում իր անգիտությամբ, այլ շարունակում եր բացատրել՝ ինչպես հասկանում եր:

Դրանով նա տեղական բնակչության մեջ դեպի ինքը մեծ հարգանքի արժանացավ:

—Համմա թե գլուխ ունի ես տղան: Այ՛ թե ո՛վ պիտի գնա ուսումնարան,—ասում եյին նրանք:

Յե՛վ ահա չորս կողմ ձերբակալում են մինչև անգամ ապստամբության հետքաշված մասնակցողներին, իսկ նրան ձեռ չեն տալիս:

Ինչո՛ւ:

Շատ հասարակ կերպով:

Նրան պաշտպանում են: Վոչ վոք նրան չի մատնում, իսկ իշխանությունը նրան դեմքով չի ճանաչում: Քաղաք գնաց բոլորովին յերեխա, գյուղ վերագարձավ արդեն հասակավոր պատանի: Դժվար ե հիմա նրան ճանաչելը:

— Իսկ շրջապատողները չեն մատնում:

— Այո, այստեղ կարելի յե աշխատել,—վճռեց նա և սկսեց ապրուստ սարքել, մինչև թեկերը կըբուսնեն, վոր նորից թոչի քաղաք:

Նա որերեցոր զգում եր իր անհասկանալի խընդիրները քաղաքական հարցերում: Արդեն շատ անգամ գյուղացիներն ու բանվորները նրան դժվարն եյին լծում իրենց հարցերով: Նա մի կերպ տակից դուրս եր գալիս, բայց ինքը զգում եր խզի խայթոցը:

Չե, սա բանի նման չե: Պե՛տք ե սովորել: Պե՛տք ե ամուր հիմք դնել իր աշխարհայացքին: Յե՛վ վոչ միայն իր, այլ և բոլոր շրջապատողներին, վորոնք ընդունակ են հեղափոխական գործին:

Առանց այդ հիմքի բոլոր գործը հիմնված կըլինի ավազի վրա:

Դա գիտեր անցյալի փորձից:

Հենց վերցրու ասենք այս ապստամբությունը: Ո՛վ ասես սկզբում հեղափոխական չեր: Համարյա բոլորը: Բայց բավական եր մի քիչ վախեցնեյիր նագայկայով, վոր հոգիները տապ անեյին ու գառների պես հեզ դառնային:

— Ինչ վոր հեղափոխություննինց ե գալիս՝ սատանայից ե:

Այո, հիմի նրանք այդպես եյին դատում:

Ահա հենց նույն կանայք, վոր նրա հետ միասին

կարվածքներ եյին հրդեհում, հիմի նրան կշտամբում ենւ
— չը՞, ի՞նչ ես աստծուն ծաղրում, բաշիրողուկ:
Չե՞ս տեսնում ինչպէս նա պահպանեց, գլխիդ մի մա-
զին չըդիպան, իսկ դու խելքի չես գալիս:

Նրանք այնպէս են հաշվում, թե պատահածը մեծ
սխալմունք էր: Դա մի հանցանք էր, վոր պետք է
քավել:

Իսկ ինչիցն էր այդ հեղաշրջումը, աստծու վո-
ղորմութեամբ:

Եկոնոմիկայի մասին այբբենական գիտելիքների
բացակայութեանից, ծայր աստիճան խավարից, ազի-
տութեանից: Նրանցից վոչ վոք չեր իմանում, թե ի՞նչ
բան է դասակարգը և դասակարգային կոիվը, նրան-
ցից վոչ վոք մի փոքր գաղափար չունեն, թե անխուսա-
փելի յե պրոլետարիատի հաղթանակը կապիտալի դեմ:

Նրանք բոլորը հեղափոխութեան ուղեկիցներն
եյին, — վոր յերագում եյին մի փոքրիկ գումարի տեր
լինել բարոններին և ուրյադնիկներին ճնշելու գոր-
ծում: Իսկ մի մասն էլ պարզապէս հրապուրվեց դեպ-
քերի նորութից և գնաց մեծամասնութեան հետ՝ հո-
սանքից տարվելով:

Նրանք հիմքեր չունեյին:

Սրանումն էր ամբողջ դժբախտութեանը: Յեթե
լինեն այդ հիմքը, շատերը, հասկանալի յե, մեզ հետ
կը գնային: Նրանք կը տեսնեյին, վոր տերը բանվորի
ընկերը չէ, վոր նրանց ճամբաները վոչ թե բաժան-
վում են, վոր նրանց ցանկութեանները կատարելա-
պէս հակառակ են: Նրանք մեզ հետ չեյին գնա:

Բայց դրա փոխարեն մյուսները, — ով մեզ հետ
մի ճամբով է գնում, — նրանք այդպէս շուտ չեյին հե-

տանա շարժումից՝ յեթե նրանք հիմքեր ունենային:

Պետք է ամուր հիմք դնել քաղաքական գիտե-
լիքների. — ահա այն դասը, վոր նա առավ այդ տա-
նուլ տված հեղափոխութեանից:

Բայց հիմա յեկ նա ամեն ինչ կանի, վոր այդ
սխալն ուղղի:

Այո, պետք է հաստատ հիմք դնել:

25. ՆՐԱՆՔ ՉԻՄՔ ԵՆ ԴՆՈՒՄ ԱՆԼԵԳԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Այդ պարզ էր. պետք է հիմք դնել:

Յեով դա պետք է շտապել: Չի կարող պատահել,
վոր ռեակցիան այնքան յերկար տևեր: Իսկ այդպիսի
մեծ ցնցումից հետո ժողովուրդը չի հանգստանա: Նա իր
գոյութեանը կը զգացնի և իր պահանջները կը դնի:

Նոր հեղափոխութեանը շատ էլ հեռու չէ:

Այսպէս եյին մտածում բոլոր վողջ մնացած հե-
ղափոխականները:

Ասել է, պետք էր աշխատել, վոր յերկրորդ ան-
գամը բանը չըփսորի:

Յեով սկսվեց հին գվարդիայի ցրված ուժերի հա-
վաքումը:

Ի՞նչպէս պիտի անել գո՞:

Առաջ պետք է հավաքել շրջապատողներին և կա-
պել կուսակցական խմբակների հետ: Բայց դա զաղտ-
նի, վտանգավոր գործ է: Բոլորին մի խմբակ հավա-
քելով՝ դա կը դառնա իսկական ժողով:

Վոչ, դա չի կարելի. իսկույն կընկատեն և կը
սրբեն: Ամեն քայլափոխին մի լրտես կա:

115 - 116

Պետք է խմբակ ստեղծել աշնպիսի չափերով, վոր նրա հավաքույթները կասկած չընտրուցանեն: Ին վոր այդպես է, ապա ուրեմն հինգից, վեցից վոչ ավելի կարելի յե միացնել մի խմբակում: Հիմի ամառ ժամանակ է, կարելի յե թույլ տալ մինչև տասը մարդ, բայց վոչ ավելի: Իսկ ձմեռը ստիպված կըլինեն խմբակները բաժանել յերկու մասի...

Լավ, հետո ինչ: Ի՞նչ պիտի անել խմբակներում: Իրանց այդպես ցրված չի կարելի թողնել:

Նրանց պետք է միացնել զավառական կազմակերպութեան սեջ: Մասսայական ժողովներ կազմել հիմի անկարելի յե, թող պարզապես խմբակների ղեկավարները հավաքվեն ընդհանուր գործերը վճռելու համար:

Իսկ նրանք իրենց հերթին պատգամավորներ կուզարկեն մասնակցելու զավառական կազմակերպութեան:

Վոչ--բոլորովին դեմոկրատիկ է,--բայց գոնե ապահով է կազմալուծումից: Այդպիսի կազմակերպչական ծրագրի վրա յեկ նրանք կանգ են առնում:

Հիմա սկսվում է ամենալուրջ գործը: Բայց դարձյալ մի հարց.

Ո՞վ պիտի ղեկավարե խմբակի գործը:

Մի մասը քիչ փորձված, մի մասը վախենում է: Յեվ խմբակի ղեկավարութեանը պցում են նրա վրա:

Հեշտ է ասելը՝ լինել խմբակի կազմակերպիչ է ղեկավար:

Պետք է զլխիդ մեջ մի բան լինի, պետք է, վոր դու լինես աշնպիսի մարդ, վորին հավատում են բացարձակ կերպով, պետք է, վոր դու անձնական որև

նակ տաս յերիտասարդներին և կարողանաս պակասացնել հին անդամների ամբարտավանութեանը:

Առնվազն այսպիսի պահանջներ եր դնում նա խմբակի ղեկավարի վրա:

Իսկ նա յերեկ չէ մեկել որն է, վոր կուսակցութեան մեջ է:

Վոչ, նա հանձն չի առնի. նա դեռ տոնա է, թող այդ գործը հանձն առնեն մեծ ընկերները:

—Դո՛ւ ինչ ես վրայիցդ թափ տալիս--վախենում ես:

Նրանք խորամանկութեամբ հաղթեցին: Մի՞թե կարող եր նա այդքան հանդիմանութեանից հետո չըրաժարվել:

Հանձն է առնում: Միևնույն է: Բայց տեսեք,--պետք է հարգանք լինի դեպի ինքը: Նա խիստ կըլինի, պահանջկոտ: Մի անգամ վոր նրան ընտրեցին--պետք է յենթարկվին: Դա ավելի չէ, քան հարգանք դեպի ինքը:

—Համաձայն ենք:

Այդ ինչ հեշտ են համաձայնվում նրանք:

Համաձայն ենք:

Լավ, կըտեսնենք, կըտեսնենք, արդյոք այդպես հեշտ կըկատարեք կուսակցական պարտականութեանները:

Ահա նա գործի մեջ է:

—Ընկերներ, փող է պետք կուսակցական զրահանութեան համար:

—Փող է պետք կազմակերպութեան համար:

—Դուք հետևյալ անգամ զեկուցում պիտի տաք ապագա պետութեան մասին:

— Իսկ դուք պատրաստվեցեք խոսել դասակարգա-
յին կուլի մասին...

Հը՛, սառտնա չե՛: Գործի թունդ ժամանակն է,
իսկ նա յեկել խեղդում է իր գրականությամբ ու գե-
կուցումներով:

Գլխներիս խաթա ընտրեցինք այս ջանել տղին:

Իսկ կուսակցական գիտցիպլինան ստիպում է կա-
տարել նրա պահանջները:

Յեվ ահա այժմ ամեն կիրակի մի ժողովանդան-
տառում կամ կղզում կամ հենց ուղղակի լճի վրա
մակույկում նրանք խմբակի նիստեր են գումարում:

Այստեղ էլ հենց սկզբից անախորժությունն յե-
ղավ, յերկու անգամները խմբակը չեկան: Այդ գիտ-
ցիպլինան նրանց սրտովը չե. մի որ ունեն հանգստա-
նալու, կիրակի որը, այդ էլ ուզում են նիստի համար
գնա:

Վոչ, նրանք համաձայն չեն դրան:

Տեսար բանը:

Արդյոք այստեղ մի ուրիշ «և» չկա: Հը՞: Ովքե՞ր
են նրանք:

— Մոխրագուլյն բարոնի վորդի, ապագա ժառանգ
հոր կալվածքի՝ 70 դեսյատին, մյուսը՝ աշակերտ քա-
ղաքային դպրոցի, նույնպես մոխրագուլյն բարոնի
վորդի:

Այդպես, այդպես: Ե՛, հիմի հասկանալի յե:

Ընկերներ, առաջարկում եմ նրանց դուրս անել
խմբակից: Իրանք ապագա բուրժուաներ են: Մեր ճամ-
բան նրանց հետ չե:

Ապագա բուրժուաները հեռացվում են միաձայն:

Բայց ահա և դժբախտությունը. նրանք կարող

են մեզ մատնել: Նրանք գիտեն և խմբակի կազմը և
հավաքությունը տեղը:

— Թող մի փորձեն: Այդպես էլ իրանց կասեք.
Թող մի փորձեն:

Պարտադրաբար կուսակցությունը պետք է կանգնի
ամուր վրաների վրա: Ով մեզ հետ չե՛ նա մեր դեմ է:
Ով սկսել է տատանվել, ավելի լավ է ժամանակին ա-
զատվել նրանից: Ավելի լավ է զրկվել մի անդամից,
քան թե վարակել բոլոր կազմակերպությունը:

Մոխրագուլյն բարոններին—բարի ճանապարհ:

26. ԿԻՆԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՉՄԸ

Նրա առջևն է Բեբելի գիրքը՝ «Կինը և սոցիա-
լիզմը»:

Նա յերկու շաբաթ նստեց այդ գրքի վրա և հի-
մի վրակել է և մտածում է:

Վոչ այնքան գրքի վրա, վոչ այնքան այն մա-
սին, թե Բեբելն այնտեղ ինչ է ասում: Վոչ:

Նրա հեղափոխական գործունեությունը մեջ և ընդ-
հանրապես նրա կյանքում կինը վոչ մի դեր չի կա-
տարել: Դեռ ավելի—նա գոյություն չի ունեցել:

Պարզապես գոյություն չի ունեցել:

Յեվ յեթե այս գիրքը ձեռքը չընկներ՝ նա հազիվ
թե այդպես շուտ այդ միտը կըբերեր:

Բայց արդեն նրա 18 տարին լրացավ: Նա ան-
դամալույծ չե, վատաուղջ չե, այլ՝ փարթամ, առողջ:

Ի՞նչպես կարող էր այդ պատահել:

Պետք է դա վորոշել. կարելի յե այստեղ ինչ
վոր մի բան կարգին չե... Իսկապես:

Յեվ անա կրկին թաղվում ե մտածմունքի մեջ...
Նա մին-մին միտն ե բերում իր բոլոր անցյալ
կյանքը.—

Ահա նա բոլորովին յերեխա յե: Իր մոր հետ նա
թափառում ե ոտար մարդկանց մոտ, ուր մայրը ծա-
ռայում ե իբրև բանվոր: Ամառը նա խիստ մեծացավ,
Յերբ ձմեռնադեմին մոր հետ նրանք յետ են դառնում
իրենց տունը՝ նրան շփոթում ե տանտիրուհու առա-
ջին նկատողությունը.

— Ե, փեսացու, մենք քեզ համար այստեղ հարս-
նացու յենք պահել:

Աստվածածնա տոնի որերը կարող ենք հարսա-
նիքը կատարել:

Նա չի հասկանում այդ խոսքերի իմաստը, բայց
տանտիրկինը յերբ շոյելով նրան աշխատում բարձրա-
ցընել ողը՝ նա ինչ վոր զգվանք ե զգում և պոկ ե գա-
լիս նրա ձեռներին:

— Տես ինչ հերստան ե, ե: Լավ, լավ, մենք հարս-
նացուն հարևանին կրտանք: Եղպես ել իմացի:

Նա մորն ե դիմում.

— Մայրիկ, եղ ինչ ե ասում:

— Դու յել մի լսի: Եղ հասակավորների համար
են հարսնացու ջոկում: Յերբ հասակ կառնես՝ կըհաս-
կանաս: Իսկ հիմի եղ հիմարություններին դու ավելի
լավ ե ականջ մի դնի: Եղ լավ չե:

Նա աղջիկներին թշնամի չեր, բայց նրանց ար-
ժեքը տղաներից ցած եր գնահատում:

Վերցնենք՝ որինակ՝ աշխատանքը. այ տանտի-
րուհու աղջիկը առավոտները վոչ մի կերպ չի վեր
կենա արևը դուրս յեկած ժամանակ, այլ պարտավո-

բարբար քնում ե մինչև նախաճաշ: Կամ այ, մի ճիպոտ
ուտնդել, վոր նա լակի չի կարողանում. այն-
պես անշնորհք կանի, վոր ծիծաղը կըգա: Իսկ մի քար-
խփել սյանը հո՛ նա դրանում կատարելապես անըն-
դունակ ե: Բայց դրա տեղ՝ վորքան կամակոր ե նա:
Այ հենց այդ ուսուցած ճիպոտի համար եր, վոր նրան
դնքսեցին: Նա ուսուցեց ճիպոտը, իսկ աղջիկը պըն-
դում ե, թե ինքն ե արել ու իրանն ե ճիպոտը: Նա
պաշտպանում ե իր իրավունքները, իսկ աղջիկը՝ իրեն—
վորպես տանտիրուհու աղջկա, և դրանով ել հաղթում
ե տղային և սա ծեծվում ե:

Յեվ այդ ամենը այդ աղջիկների պատճառով:

Ահա թե ինչպես են նրանք:

Մյն ժամանակ նա գլխի չեր ընկնում, վոր այդ
աղջիկները, վորոնց հետ նա հանդիպում եր՝ տանտի-
րուհիների աղջիկներ եյին:

Հիմի վերցնենք ավելի հասուն հասակը, յերբ նա
արդեն հոտաղ եր և դպրոց եր հաճախում:

Հիմի նա հասկանում ե, վոր կարող են լինել աղ-
ջիկներ, տղաներից ել արժանավոր: Թեկուզ հենց գի-
տությունների մեջ արած հառաջադիմություններով
դատենք: Բայց նրանք ելի ինչքան չըլինի՝ մատիտ-
ներ չեն կարողանում սրել: Ուղղակի կարում են ճի-
պոտների պես, նայելիս ամոսոսը գալիս ե:

Բայց այստեղ, դպրոցում ել նա սառն ե մնում դե-
պի աղջիկները: Ինչո՞ւ չըպիտի իմանան դասերը. ա-
զատ ժամանակը հո գործի չեն ուղարկում, ինչպես
իրան:

Բայց ապա թող փորձեն նրա պես անել: Ամառն
աշխատեն, միջոցներին աշխատեն, իսկ գիտություն-

ների մեջ հասնեն մյուսներին, փորոնք ամբողջ ժամանակ գրքի հետ են:

Նա Հափազանց զբաղված է և ժամանակ չունի դատարկաբանություններով տարվելու, ուստի և նրան անհաճո կերպով դարմայնում է տանախրուհու աղջկա նկատողությունը:

— Բեզ սրբի տեղ մի ծախի: Բոլոր աղաները հարսնացու ունեն, իսկ դու— փոչ: Կեղծավոր:

Այ թե ինչ: Այս հիմարությունները դպրոց ել են բերել:

— Լոխ: Մի ձեռ առնի: Դա լավ չէ, — պատասխանում է նա մոր խոսքերը կրկնելով:

Դա լավ չէ:

Հենց մոր այս խրատով էլ նա քաղաք է գնում:

Նա հարսնացու չունի, դրա միտքն անգամ գըլխում չունի: Ժամանակ էլ չունի դրա մասին մտածելու... Նա առջևը դժվարին խնդիր կա— ազատվել հարուսանների լծից:

Քաղաքն էլ նրա մաքրությունը չբիջացրեց... Իսկ ի՞նչ ասես այնտեղ չկար:

Ապա գիշերը նրա սենյակն է ընկնում հարբած դոնապանը:

— Դ՞ն է ինչ ես սրափում: Վեր կաց, աղեն սպասում ե:

— Ի՞նչ սատանա չե մտել փորդ:

— Մի հարցնի: Աղեն ուղում է, ասել է, պե՞տք է գնալ:

— Ո՞ւր:

— Աղջիկներ բերելու:

Նա հիշում է հանգուցյալ մոր խոսքերը. դա լավ չէ...

— Կորբ գնա: Հիմիսկեթ ուզ յեղի եստեղից, անախտան:

Վերցնում է փայտն ու գոռում է.

— Ռադ կընես եստեղից թե՞ չէ:

Դոնապանը վախեցավ փայտից ու դուրս յեկավ: Տղան վազեց դռներին և փականքը քաշեց: Իսկ պատուհանի մոտ լավում է փեղկերի թխկոցը և լավում է աղայի ձայնը.

— Տեսնում ես դուռումսաղին: Աղայից խելոքն է այ:

— Չարկ փեղկերին:

Բայց փեղկերը դիմանում են:

— Վազի, կացին բեր: Կոտրենք փեղկերը:

Մարսափելի գիշեր... Նրան փրկեց գարազավոյր:

Յեթե ընդհանրապես այդ քաղաքում ցոփություն, դայթակղություն կար, — ապա հիմի, այդ գիշերից հետո, այդ էլ չէր լինի: Ցոփության և բռնության դեմ իբր շրջապատողների կողմից նա դեմ կըհանի իր բարոյտկան ույժը:

Դործողությունը առաջ բերեց հակառակ գործողություն:

Յե՛վ դա նրան ազատեց:

Հենց այդ ժամանակն էլ սկսվեց նրա ծանոթությունը սոցիալիստ վարպետի-ոգնականի հետ, և նրա բոլոր մտքերը ուրիշ ուղղություն ստացան:

Բայց հեղափոխության ժամանակ, միթե հեղափոխության ժամանակ, կանանցից վոչ մինը նրա ուշադրությունը չի գրավել:

Դեղքերի ընթացքը կատարվեց այնքան կայծակնալի արագությամբ, հենց իրենք ղեկավարն այն-

քան անսպասելի վրա հասան, վոր հազվադեպ յեղավ, վոր մի կին կարողացավ տղամարդուն հասնել:

Իսկ հեղափոխութեան ժամանակ հրապուրում ե միայն ճարպիկութունը, գիմացկանութունը, ուժը և խելքը:

Այդ բանը մեր գյուղացի կանանց մեջ դեռ ևս չըկար:

Ճիշտ ե, գաղազած ժամանակը նրանք մինչև անգամ հրդեհ եյին գցում բարոնների կալվածները, բայց այստեղ մի առաձին բան չըկար:

Միակ բանը, վորով նրանք աչքի եյին ընկնում՝ դա նրանց յերգն եր և վիրավորներին խնամելը:

Բայց նա վոչ մի անգամ վիրավոր չեղավ և կարմիր քրոջ հոգածութունն ու անձնուրացութունը իր վրա չըտեսավ, ուստի և այդ ամենից նա չեր զգացվում: Նա ապրում եր գործով, նա ապրում եր հեղափոխութեամբ: Դա նրան ամբողջութեամբ կլանում եր՝ չըթողնելով մի փոքրիկ մասնիկ նրա անձնական կյանքի համար:

Չէ վոր նա մինչև անգամ թողեց իր զառամ հորը:

Բայց յեթե լիներ մի կին, պայքարի ընկեր, վոր գնար նրա հետ ձեռք-ձեռքի տված, համարձակ, նախաձեռնող, հասկացող, ընդունակ հրաժարվելու անձնական կյանքի նեղ իրձերից ..

Հա, այն ժամանակ նա յեւ նրա վրա ուշադրութուն կըդարձներ: Բայց նա այդ չեր նկատում:

Ասեմք, այդպիսի կանայք կային, բայց նա չե՛ վոր շատ կանանց չեր ճանաչում, իսկ ինքը դեռ այնքան շահել եր, վոր չեր նկատում:

Իսկ հասարակ կնոջով հետաքրքրվելու յեւ նա ընդունակ չեր:

Յեվ անա հիմի այդ գիրքը... Նա բաց ե անում նրա աչքերը նրան միանգամայն անհասկանալի հարցի մասին:

Բերելը ճիշտ ե ասում: Կինը պետք ե ձեռքի ձեռքի՝ գնա տղամարդու հետ: Հիմի նա ավելի մեծ սարուկ ե քան տղամարդը, և սոցիալիզմը նրան կազատե վոչ թե միայն ստրկական վարձու աշխատանքից, այլ և յեկեղեցուց, յերեխայից և խոհանոցից: Կինը կըզառնա հասարակութեան իրավահավասար անդամը և վոչ թե հասարակ կնիկ, ինչպես հիմա, վորը պետք ե միայն յերեխաներ ծնի, նրանց տատմերութունն անի և խնամի ամուսնուն:

Մինչև անգամ ավելին. առանց կնոջ ոգնութեան մենք չենք կտրող նվաճել սոցիալիզմի թագավորութունը: Նա կազմում ե բնակչութեան կեսը, վոր ամենից շատ կարիք ունի կապիտալիստական կազմից ազատվելու:

Ախր կինը—սոցիալիզմի գործի համար բոլոր՝ պայքարողների մայրն ե: Նա մեզ վոչ թե կյանք ե տալիս միայն, այլ և առաջին դաստիարակութունը: Նրա մարմնի ամբողջութունից ե կախված մեր ամբողջութունը, նրա զարգացումից՝ մեր զարգացումը:

Ազատ մարդը չի՛ կարող ծնվել ստրկուհուց:

Անբարոյականութուն, պոռնկութուն—դա կապիտալիզմի ծնունդն ե, պետք ե վերջ տալ դրանց, ինչպես և կապիտալիզմին:

Նրա մայրը այդ բոլորը չեր իմանում, բայց նա իր հոտառութեամբ հասավ դրան, յերբ ասում եր.

Դա լավ չէ:

Մեր տղան հիմի նրանից շատ դիտե, ուստի և պարտավոր ե ավելի շատ անել:

Ահա, նորերս նա կարդաց խրեատոմատիայում մի հողված ծառերի բազմանալու մասին:

Մի քանի ծառեր ծաղկում են 80 տարի հետո: Ութնասուներ տարի նրանք ուժ են հավաքում նրա համար, վոր սերունդ առաջ բերեն:

Պտուղ են տալիս իրենց սերունդը շարունակելու համար:

Յեվ դրանից հետո — մեռնում են:

Բնութիւնը շատ անգութ ե նրանց վերաբերմամբ. ծաղկելուց հետո նրանց համար վիճակված ե վոր պիտի մեռնեն:

Բայց առողջ և ուժեղ սերունդ առաջ բերելու համար ուժեր հավաքելու խնդրում՝ ժամանակ չե՞ վոր մենք — մարդիկս մի վորեւե բան փոխ առնենք բնութիւնից:

Իսկ նրանց կուսակցական խմբակում վոչ մի կին չըկա: Դա բանի նման չէ: Պետք ե կնոջն ել շարժել:

Անպատճառ:

Կինը պետք ե տղամարդու հետ ձեռք-ձեռքի գնա մարդկութիւնը կապիտալիստրկութիւնից ազատելու համար:

27. ՍՈՑԻԱԼԻՍ

Մեր տղայի համար սոցիալիստը պարզապես մի մարդ չէ, վորը գրվել ե կուսակցութիւն մեջ և վճարում ե անդամավճարները:

Սոցիալիստը նրա պատկերացմամբ հասարակ մարդ չէ, այլ ապագայի մարդն ե, բարձր բարոյականութեան մարդն ե, մարդ ե, վորին ոտար են թուլութիւններ ու արատներ:

Սոցիալիստը նրա պատկերացմամբ՝ չըպիտի ծխի, չըպիտի խմի, թուղթ չըպիտի խաղա, նա իրավունք չունի կանանց գայթակղելու և հեզնի նրանց, նա չի կարող հավատալ աստծուն, դավաճանել իր խոսքին, ապրել փարթամութեան մեջ, յերբ ուրիշները սոված են...

Նա այդպիսի պահանջներ ե դնում սոցիալիստի առջև և առաջին հերթին իր առջև. նա, ինչպես խըմբակի ղեկավար՝ պետք ե ուրիշներին որինակ տա:

Բայց այդ ամենը վերապից սովորեց նա: Վճիբ կանոնադրութեան մեջ ե գրած այդ:

Այդ ինքն ել չըպիտեր:

Նա սոցիալիստ դառավ վոչ թե գրքի միջոցով, այլ՝ կյանքի: Այն միջավայրը, վորի մեջ նա մեծացավ իբրև սոցիալիստ, նրա վրա դրեց իր կնիքը, և կնիքը հենց իսկ և իսկ նման եր նրա հասկացողութեան՝ սոցիալիզմի մասին:

Այն սոցիալիստները, վորոնք նրան դաստիարակել եյին՝ չեյին խմում, չեյին ծխում, կանանց չեյին հեզնում, չեյին հավատում աստծուն: Նրանք սիրով ոգնում եյին ուրիշներին թե խորհրդով և թե նյութական ոժանդակութեամբ: Գործի շահի համար նրանք հրաժարվում եյին իրենց անձնական կյանքից, գնում եյին տաժանակիր աշխատանքի, կախաղան:

Յեվ այդ ամենը մեծ գաղափարի սիրուն, մարդկութիւնը կապիտալի լծից ազատելու համար:

Ահա դուք խորհուրդ եք տալիս հավատացող բան-

վորին հրաժարվելու աստծուց: Բայց դուք ի՞նչ նոր բան եք տալիս հնի տեղակ: Նա մինչև հիմա գիտեր մի բարոյականություն, վոր դրված է աստվածաշնչի պատգամներում: Նա հասկանում է, վոր առանց բարոյականության որենքների վոչ մի մարդկային հասարակություն չի կարող ապրել:

Ուրեմն ի՞նչ նոր բարոյականության որենքներ եք տալիս նրան:

Դուք նրանց պետք է այդ տաք: Առանց դրան կուսակցություն մեջ դուք կըստանաք հասարակության թափթփունքներ: Իսկ այդ ժամանակ դուք դատապարտված եք վոչնչանալու:

Ուրեմն ի՞նչ եք տալիս:

Դուք ասում եք.

Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման:

Ո՞ւմ դեմ: — Թշնամի դասակարգի դեմ:

Լավ: Այդ հասկանալի յե:

Բայց ահա գժտություններ են մեր մեջավայրում: Ունե՞մ արդյոք իրավունք սպանել թե վոչ:

Բանվորական գործին դավաճանելու համար՝ այո: Բայց վոչ անձնական ցանկության համար, այլ ընկերական շրջանի, կազմակերպության վորոշման համաձայն:

— Ասել ե՛ այն պատգամը. — «մի սպանաներ» գոյություն չունի:

— Գոյություն չունի:

— Իսկ շրջանակներ պիտի տամք, շրջանակներ: —

Պետք է:

— Դե տվեք:

— Դուք ասում եք. ազատ սեր:

— Ի՞նչ չի նշանակում անբարոյականություն, բազմակնություն, ընտանիքի դարանկումն:

— Վոչ:

— Դե ուրեմն տվեք սպառիչ պատասխան: Առանց դրան նոր ճանապարհներ վորոնողները չեն համարատանու:

Դուք դատապարտում եք բուրժուազիայի կենցաղը: Իսկ ինքներդ, ինքներդ թույլ եք տալիս հարբեցողություն:

— Դա մարդկային թուլություն է:

— Թուլություն է, լավ: Բայց պետք է այդ թուլության դեմ մաքառել: Այ, ատենք, դուք խմել եք և թմած ժամանակ մեր գաղտնիքները գուրս եք տվել, ինչպես այդ հաճախ պատահում է: Չե՞ վոր դուք գուրս եք գալիս ակամա դավաճան, մտտնիչ:

Այ՛ ձեզ թուլություն: Իսկ որդանիզմին պատճառած վնասը, ընտանեկան գժտությունները:

Ասել ե՛ դուք պետք է կովեք հարբեցողության դեմ:

— Այ հիմի այդ ծխելու անմիտ սովորությունը: Եթե ծիծաղելի և վնասակար չէ, վոր հասակավոր ժողովը իր բերանը շինում է ծխի խողովակ և յերկինքը հիս է անում, շարտելով մեր կուսակցությանը հարկավոր փողերը, այդպես անսպասակ, այդպես վնասակար իր առողջության համար:

— Ի հարկե, լավ չէ, բայց դա փոքր թուլություն է, վոր կարելի յե թույլ առ առանց մի առանձին վնասի:

— Լավ թուլություն է: Մտածեցեք միայն, թե ինչ կըստացվի վերջիվերջո ձեր նոր մարդուց: Նա հենց մի գլուխ թուլությունից է բաղկացած:

Յեվ այդ դուք առաջարկում ենք հնի՞ փոխարեն: Շատ շնորհակալ եմ: Դրանով արդյոք շատ համակրողներ կունենաք:

Ձե, դա հիմար բան է: Սոցիալիստ ասածդ ապագայի մարդն է: Նա պետք է ոտար լինի այդ թուլություններին: Այն ժամանակ միայն նա անշուշտ և ամենակարճ ժամանակում կըհաղթե կապիտալին:

Այսպիսի վիճաբանություններ խմբակում հաճախ եյին լինում:

Ճարեցին կառուցելու՝ «Նտիկա»-ն և սկսեցրն անցնել այն:

Բայց այնտեղ ել հարցերին ուղիղ պատասխան չկա: Պետք է մարդ իր խելքով մոտենա:

Ինչ ուզում է լինի, ինչպես ուզում է լինի նոր բարոյականությունը՝ բայց նրա համար պարզ է:

Սոցիալիստը պետք է բոլորի համար որինակ լինի:

Դրա համար նա իր պահանջներից չի հրաժարվում:

— Դուք սրա հետ համաձայն չե՞ք, ույժ չունե՞ք կյանքում անցկացնելու սա: Թող այդպես լինի:

Բայց նա իր բարոյական որենքներից յետ չի կենա:

28 ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒՎՆ ԱՐԾԱՐԾ-ՎՈՒՄ Ե

Տեղ-տեղ դեռ գործի վրա յեն անտառի յեղբայրները: Հենց մի գլուխ այրվում է այս կամ այն մոխրագույն բարոնի կալվածքը, մարագը...

Ամառ ժամանակ է: Նրանց հետ մաքառել համարյա անկարելի յե:

Բայց իշխանությունը դառնում է շատ հնարագետ: Վորպեսզի ապահովե իրան հարձակումներից՝ նա հրամայում է գյուղացիներին ձամբաների շուրջը անտառը մաքրել: Ամեն տեղ ձամբից 50 սաժեն հեռավորության վրա ծառերի բոլոր ճյուղերը մարդու հասակի չափ պնտք է մաքրվեն, բոլոր թփուտները պիտի կտրավեն, վոր վոչ վոք չըթագնվի:

Յեվ դա հենց դաշտային աշխատանքների յեռքամանակը: Առաջ գյուղացիները կըզայրմանային, կը հուզվեյին, իսկ հիմի ջանասիրությամբ կատարում են պարտականությունը:

Նրանք հասկացան, վոր նրանք մի ընդհանուր թշնամի ունեն—դա բանվորն է:

Ինչպես նրանք առաջ այդ չեյին հասկանում: Այդ ինչպես կարողացան վեր կենալ այն իշխանութան դեմ, վոր պաշտպանում էր իրենց սեփականությունը, ինչպես կարողացան գրվել սոցիալիստ, վորը իրեն նպատակ է գրել վոչնչացնել մասնավոր սեփականությունը:

Հիմարներ եյին և ուրիշ վոչինչ:

Իսկ հիմա—եւ հերիք է:

Պատժիչ զովամասից հետո առաջի ամիսները կուսակցության մեջ դեռ մնում եյին բավականին սեփականատերերի վորդիներ և մինչև անգամ սեփականատերեր: Այն ժամանակ ընդհանրապես մտածում եյին, վոր նոր հեղափոխական ալիքը շատ շուտով հորձանք կըտա և կըհաղթե:

Ավելի խոհեմություն էր սպասելը: Բացի այդ դեռ ամենքը չեյին սթափվել «հորթի հրձվանքից»—

ինչպես հետագայում մոխրագույն բարոններն սկսեցին անվանել հեղափոխական խանդավառությունը:

Բայց հիմա, հիմա ամեն բան պարզ է:

Նրանք կողմնակից են սեփականության, վորին տեր են, իսկ սոցիալիստները՝ դեմ են մասնավոր սեփականության:

Այդպիսիներին վոչ թե պետք է պաշտպանել, ընդհակառակը՝ անհրաժեշտ է վոչնչացնել:

Ահա ազիտատորի գնդակահարման տեղը...

Ամեն ոք կտորած կեչու վրա, ուր նրան գնգա-կահարեցին՝ յերևում եյին կարմիր ծաղիկներ: Ուր-յադնիկը ամեն ոք վերցնում էր, բայց ծաղիկները կրկին յերևում եյին:

Դա արդեն հանդգնություն է:

Նրանք բարեպաշտ քաղաքացիների աչքը ծա-կում են:

Յե՛վ ահա ծխական վարժապետը կաշառում է իր նախկին աշակերտին, վոր սա կեչին արմատահան անի:

Հենց արմատով, վոր ել հետքը չմնա:

Իսկ նրա մյուս աշակերտը, մոխրագույն բարո-նը, վոր հեղափոխության որերը հանդես յեկավ բո-ցավառ ձուռքով իշխանության դեմ՝ հիմի ինքն է աշխատում դառնալ գավառային ստարշինա:

Բայց դա նրա համար չէ, վոր իշխանությունը խորամանկությամբ սոցիալ-դեմոկրատների ձեռք գցի, ինչպես դա գործադրվում է հեղափոխականացած գա-վառներում: Վոչ, նրա համար, վոր ավելի հաջող կըն-վեն սոցիալիստների դեմ. չէ՛ վոր նա նրանց սովո-րույթը գիտե: Ինքը սոցիալիստ էր:

Այդպես, այդպես... դիմախները հանեցե՛ք:

Հիմի գոնե իրայինը յերևում է:

Բարիկադի մի կողմը իշխանության բոլոր ներ-վառացուցիչներն են, բոլոր խոշոր սեփականատերերը— «մոխրագույն բարոնները» և գյուղացի-ուճևորները, բոլոր վաճառականները և մինչև անգամ ուսուցիչները: Բարիկադի մյուս կողմը— բանվորները, մշակնե-րը և մանր արհեստավորները և հազվադեպ ուսուցիչ-ները:

Մշակների տգիտության պատճառով, վոր չեն հասկանում իրենց դասակարգային շահերը՝ ծանրու-թյունը թեքվում բարոնների կողմը և առաջնակարգ Բեքումը:

Շրջանում մի սեփականատիրոջ ընկնում է չորս մշակ:

Մեկին՝ չո՛ւրը: Իսկ սեփականատերերը գոռում են մշակներին:

Գիտակցություն լինել, գիտակցություն և գոր-ծը կարգի կըգար:

Բայց մշակների հին սերունդների հետ զործ չես կաշոռոց տեսնել: Այդ սերունդները պետք է ընկնեն խառատացյալ յերկրի ճանապարհին:

Յըհասնեն ջահելները:

Հենց նրանց վրա յեւ պետք է ուշադրություն դարձնել:

Իսկ նրանց ո՛վ է դաստիարակում: Մոխրագույն բարոնները իրենց դպրոցներում:

Դա թանի նման չէ: Դաստիարակության գործը պետք է մեր ձեռքն առնել:

Իսկ ի՞նչպես անել այդ:

Պետք է ընտրել մեք ուսուցիչներին:

Բայց դրանց վճարողից ճարես:— Պետք է նորե-
րին պատրաստել: Ուրիշ ճամբա չկա:

Լավ, նրանք այդպես ել կանեն: Կըպատրաստեն
նորերին:

Նրանց խմբակում մի ուսուցիչ կա և յերեք թեկ-
նածու ուսուցչության, այսինքն՝ նրանք հեշտ կըհաս-
նեն ուսուցչին: Նրանք բոլորը վերադարձել են ծխա-
կան դպրոցը: Մի-յերկու տարի ջանասեր ուսում և
ահա նրանք պատրաստ են:

Նա յեկ այդ յերեքի թվումն է:

Իեպի գործ:

29. ՈՒՍՈՒՑՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ

Վորոշումն ընդունված է և ի կատար է ածվում:

Այն սեփականատերը, վորն սիրում եր ուրիշնե-
րի առաջ պարծենալու, թե ինքն որինակելի ծառա ու-
նի, հիմի լուում է: Մի՞թե նա կարող է քաջալերել իր
ծառայի վարմունքը, վոր աշխատում է ազատ ըոպե
ճանկել՝ նստելու և քիթը կախելու գրքի վրա:

Վոչ, այդպիսի ծառայից ոգուտ չկա. արորը
սրելու տեղը թվաբանությունն է սերտում: Իսկ գրա-
նից տերը ֆլասավում է:

Գրքի տեղը գյուղը չէ: Տերը այդ բանը հաստատ
վճռեց: Բայց վորպեսզի ուրիշ սեփականատերերի ա-
ռաջ չխայտառակվի՝ նա դիմում է խորամանկության:

Վոչ, յես նկատում եմ, վոր իմ ծառան արորի
համար չի ծնվել,— ասում է նա հարեաններին:— Նրա-
նից բան դուրս կըգա, բայց վոչ հողի համար:

— Ահա թե ինչ: Իսկ առաջ ինչ էյիր ասում:

— Շատ բան ել ասում էյի՛ հետո՞ ինչ:

Սեփականատերը ուրախ է. նա ծնված է վոչ հո-
ղի համար: Բայց չե՞ վոր չորս տարի առաջ մեր տղան
հեռացավ, գնաց քաղաք այդ մտքով: Միայն հեղափո-
խությունը նրան կրկին զցեց գյուղ:

Բայց հիմա հեղափոխության ժամանակն անցավ,
նա դեռ փորփրում է գետինը: Նրա գլխում ուրիշ
մտքեր են: Իրագործել այդ մտքերը այստեղ տաժա-
նակիր աշխատանքի մեջ, չսահմանած բանվորական
ժամանակամիջոցում՝ անկարելի չէ: Սովորելու համար
անհրաժեշտ են ուրիշ պայմաններ: Նա դարձյալ քա-
ղաք կըգնա:

Ամառն աշխատած փողերն գրպանումն է: Դա
յերկու ամիս հերիք կանի: Մի յերկու ամսի համար
ել կողմնակի կըվաստակի և ձգի, կըհասցնի մինչև գար-
նան քննությունները:

Մնաք բարո՛վ, մոխրագու՛լն բարոններ: Մնաս
բարո՛վ, գյուղ:

Ահա նա կրկին քաղաքումն է:

Բայց քաղաքն ել առաջվանը չէ: Գործ ձեռք բե-
րել առանց լավ վկայության անհնարին է: Վճրտե-
ղից է նա վկայություն ճարում:

Վոր բարոնների կալվածներն է կրակ տվել, Վոր
անառային յեղբայր է յեղել: Զինվորնե՛ր է վորսացել:

Լավ վկայությունն է:

Զի հաջողվում տեղ գտնել:

Ե, ջհանդամը քաղաքը:

Նա գնում է գավառ՝ ծանոթ ուսուցչի մոտ. այս-
տեղ նրա մոտ թե ոգնական է, թե աշակերտ:

Ամբողջ գիշերներ նա հիմա նստում է դասագիրք-
քը ձեռին: Գննությունին քիչ ժամանակ մնաց: Մին-
չև հետևյալ տարին քաշ տալու յեւ միջոց չունի:

Մերտել, սերտել, սերտել:

Գիրքը ձեռն առավ սեպտեմբերին, իսկ մարտին
արգեն քննություն եր տալիս ժողովրդական ուսուցչի
իրավունք ձեռք բերելու:

Վհնց թե. դա ծխական դպրոցից հետո: Այո, ուս-
ման չորսամյա դադարից հետո:

Անխելքությունն չէ: Իսկ ակներև անհաջողու-
թյան կըհանդիպի:

Այդպես են մտածում ամենքը, յիբր նա քաղաք-
է մեկնում քննություն տալու:

Բայց յերկու շաբաթ անց նա գյուղ է վերադառ-
նում ուսուցչի վկայականով:

Բախտը բանում է, այդ տղայի բախտը ուղղակի-
բանում է:

— Բաղդավո՛ր, — ասում են նրան ամենքը:

Իսկ նա նրանց պատասխանում է Սուլթորովի
խոսքերով.

— Այսօր բախտ, վաղը բախտ, միշտ բախտ...

Տվե՛ք գոնե մի քիչ խելք:

Այո, մի քիչ խելք տվեք գոնե:

Այդպես է այդ տղան:

Իսկ հիմա նա ուսուցիչ է:

Կարծես ամենագլխավոր բանը արված է: Նա դե-
մում է ուղղակի նպատակին:

Նա արդեն բոլորովին մոտ է նպատակին: Նրա
տրամադրության տակ կըլինեն 60—90 յերեխաներ, և
նա նրանցից կըկերտե նոր յերեխաներ, ապագայի
մարդիկ, հեղափոխության զինվորներ:

Նա բոլորովին արբեց գոհունակությունից և մին-
չև անգամ մոռացավ, վոր ինքը ուսուցիչ է միայն
վկայականով, բայց առանց տեղի:

Չէ՞ վոր դպրոցներն ուսումն սկսում են աշնանը,
իսկ հիմա միայն գարուն է: Ի՞նչ անել ամբողջ ա-
մառը:

Նա կըգնա իր ընկեր ուսուցչի մոտ, վոր նրան
սժանդակում էր այս ամիսները և կոգնի խոտհարքն
անելու, վորպեսզի նրան յերախտահատույց լինի ոգ-
նության համար:

Նա այդպես էլ արավ: Իսկ ազատ ժամանակը կը
գրադվի պրոպագանդով և իր գիտելիքները լրացնելով:
Յեւ ինքը նորից գյուղումն է:

Իսկ այնտեղ նա բոլորովին հերոս է:

— Տարորինակ տղա յե. ուսուցչի աստիճան ունի,
բայց լծվել է ամենասե աշխատանքի, ինչպես հասա-
քակ ծառա: Այ դա բնավորությունն է: Մեր ուսուցիչը
չլինի. — արոստով ման է գալիս ու քարերի հետ թաղ
անում:

Նրանից բան դուրս կըգա:

Բայց համա թե հանդուգն է:

Մի անգամ հերկ եր անում, այդ ժամանակ նրան
և մոտենում մեր վարժապետիկը:

— Աստված ոգնի:

— Վատ ոգնությունն է: Չէս ուղի մի ինքդ արի
արթորի հետ անցիր, իսկ յես հանգստանամ:

— Չեմ կարող, շատ թեթև եմ, արորը ինձ մի
գողմ կըշարտի:

— Ձերդ քնոր անձ — ծանր կըլինես:

Ձեզք քնոր անձ, հա՛, հա՛, հա՛... Այ հանաքչի:
Այո, այդպես են խոսում նրա մասին, այդ տղայի:

Իսկ նա ինքն իր մեջ ծիծաղում է և մտածում.

— Վատ չի լինի այսպիսի վկայություններով աշխատել: Բի՛ն մտիկ կըտան իր ձեռքերին, իսկ նրան այդ ել պետք է, վորպեսզի դպրոցում անցկացնի իր ծրագիրը:

Ահա և աշունը:

Իսկ նա տեղ չունի: Ի՞նչպես նա անհոգ է: Հիմի մի ուսուցչական տեղի համար վախժուկ թեկնածու կա: Տեղ ստանալը ուղղակի բախտ է:

Իսկ նրա իսկի յեկ պետքը չէ:

Գնաց յերկու ուսուցչական ընտրության, յերկու տեղ հայհոյեց ուրիշ ուսուցիչներին, վորոնք աճուրդի մեջ պակասեցրին ոտճիկը, ստորություն չարեց ու հեռացավ:

— Մի՛թե նրանց համար միեռնույն է, թե ո՛վ է կրթում իրենց զավակներին, հարցրեց նա մի անգամ կուսակցական գրագրին:

— Բայց մի՛թե նրանք այդ ուսուցիչներին իրենց զավակների համար են ջոկում: Վո՛չ, նրանք իրենց զավակներին ուղարկում են քաղաքային դպրոցները կամ անային ուսուցիչներ են հրավիրում: Բայց այս դըպրոցները մշակների զավակների համար է:

Այդպիսով պարզապես գաղտնիքը հասկացվում է...

Այդ ուսուցիչները պետք են վո՛չ նրանց զավակների համար...

30. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴՊՐՈՑԸ

Նրա գործը հաջող է գնում. նա հայտարարություն կարդաց լրագրներում և առաջարկեց իր ծառայ-

յությունը: Մի շաբաթ հետո պատասխան է ստանում, վոր ծխական դպրոցի ուսուցչի ազատ տեղը տրվում է նրան:

Մնչորում են շտապով գնալ:

Այսպիսով նա հիմի դիպլոմ ու տեղ ունի:

Ծխական դպրոցը վեցամյա դասընթաց ունի, ուստի աշակերտները հարուրից ավելի են:

Դա ավելի յե, քան թե նա յինթադրում էր:

Նրա տրամադրության տակ կըլինեն 100 յերեխա, վորոնց նա պիտի մոտեցնի սոցիալիզմին: Ըստ մեծի մասին դրանք աղքատների զավակներ են: Նրանք հարմար են նոր ուսմունքին: Նրանց նյութական դրությունը հակառակ չէ այդ ուսմունքն ընդունելու: Ուստի և հաջողությունը ապահովված է:

Նա այդ դպրոցը կըդարձնի սոցիալիզմի դպրոց: Բայց ուսուցիչը մտադրվում է, իսկ իշխանությունը տրամադրում է:

Ցեվ հայտնվեց, վոր բավական իշխանություններ կային:

Առաջին իշխանությունը ավագ ուսուցիչն է, վոր միաժամանակ յեկեղեցական պաշտոնյա յե: Իր մտավոր կազմով նա հավատացող է և իշխանությունը հարգող, ավելին և՛ իր տեղի համար դողացող:

Ցերկրորդ իշխանությունը՝ պատուրն է: Նա հրակում է յերեխաների կրոնական դաստիարակության վրա: Կրոն, կրոն և հավատ հանդանակ: Մնացած ամեն բան— դատարկ բան է:

Ցերրորդ իշխանությունը ժողովրդական դըպրոցների տեսուչն է: Նա հետևում է պետական ծրագրի իրագործման: Ռուսաց լեզու, ուղղափառություն և ուսաց պատմությունը նրա համար ամեն ինչ է:

—Սովորեցրեք հարդել թագավորին և սիրել մեզ ուղղափառ հայրենիքը:—Ահա նրա ծրագիրը:

Չորրորդ իշխանությունը՝ ծնողներն են: Նրանք պահանջում են գործնական գիտելիքներ: Հենց միայն գործնական:

Դե, արի ու ամենքին սրտաշահիր:

Ավագ ուսուցչի հետ լավ չլինել անկարելի յե—
նրան և պատկանում իրան ընդունելն ու արձակելը: Նրա հետ պետք է խաբելու տաքտիկ ընդունել. քրտաշահել, գովել, ցույց տալ կույր կամքը կատաբող, բայց իսկապես իրն անել:

Պետք է պատուրի աչքին յերևալ և վորքան կարելի յե հաճախ:

Տեսչին... Սա տարին մի անգամ է դալիս, սասայնքան էլ սասափելի չէ: Նրա համար ուսաց լեզուն պատրաստելը մինչև անգամ պետք է: Միայն թե այ, թագավոր-հայրիկի և ուղղափառության բանը... Ե, ինչքան կարելի յե անկյուններում շատ պետք է կտխել թագավորների պատկերները և այդքանն էլ հերիք է:

Իսկ ծնողների հետ նա յուր կըզնա՝ վորին կը խաբել, վորին կըսրտաշահի, վորին խելքի կըբերի...

Դա նշանակում է՝ խղճի հետ առևտուր անելը: Ուրիշ ճար չկա: Ամեն ինչ կախված է նրանից, թե ում կըխաբել վերջիվերջո:

Յեվ անա սոցիալիստը կեղծ-բարեպաշտ քղամիտով, հեղափոխական լսուկ ծառայի դիմակի տակ ձեռնարկում է հին կարգերի տապալման, քանդելով նրա վտանատակի հողը, նոր տեղը բննող, մեծացող սերունդը:

Ամբողջ ծխական շրջանում նա միակ կուսակցական մարդն է: Այստեղ կուսակցության մեջ ուրիշներ կային, բայց նրանք ցրվել էյին: Նրանցից մինը հիմա բժիշկ է, մինը՝ գրագիր, յերրորդը՝ ուսուցիչ: Բժիշկը իրեն շատ փոքրհոգի յե պահում, իսկ գրագիրը ընտանիքի տեր է դառել և իր պաշտոնի վրա դողում է. ուսուցիչը իր յերիտասարդ կնոջ՝ մոխրագույն բարոնի աղջկա ազգեցուցյան տակ ընկնելով...

Իսկ մշակները... մշակներին մի անգամից չես կարող ճանաչել:

Արի ու այստեղ աշխատիր:

Բայց նա յել դարձյալ վորձում է խմբակ կազմակերպել նաև մեծերի շրջանում, վորպեսզի նրանց մեզ նեցուկ գտնի իր դպրոցական գործի ձեռնարկության մեջ:

Առանց դրան, նրան կուտեն այստեղ:

Նրա տրամադրության տակ որական վեց ժամ է: Նրանցից յերկուսը դասացանկի համաձայն՝ գնում են ս. գրքի, թագավորի և հայրենիքի վրա և մինը՝ թվաբանության: Յերը գրադվի իր գործով:

Պետք է ժամանակ շահել դասերից դուրս: Պետք է դասավանդման ժամերին կամ արձակուրդներին սարքել գրույցներ, գրական յերեկոներ:

Նա այդ էլ անում է:

Սկսում է մի հետաքրքիր պատմվածքով և ապա անցնում է կարգացածի բացատրության: Յեվ այստեղ նա արդեն կատարելապես ազատ է:

Վերջերում նա հնար է գտնում ոգտագործելու նաև կրոնի դասերը: Սկսում է տրված թեմայով, իսկ ապա բացատրության մեջ մի կողմ կըշեղի հարցը և կըվերջացնի բոլոր աստվածների տապալումով:

Հարցաքննվողների համար ի՞նչ և պահանջում—
զրքերով անգիր սովորել:

Լավ: Նա այդ կրկատարի: Յերեխաները անգիր
կանեն բառի համաձայն, կրպատասխանեն բառի հա-
մաձայն, իսկ բովանդակութունը՝ նա իրենը կըզնի:

Յեւքը գտնված է:

Յեւ նրա բախտը ելի բանում է:

Արդեն մի տարի յե աշխատում ե, և ամեն բան
հաջող է գնում:

Խմբակի անդամների թիվն աճեց մինչև ութը
մարդ, նրանցից յերկուսը բարձր դասարանների աշա-
կերտներ են:

Ասել է՝ սերմը ընկել է բարեբեր հողի մեջ:

Նա յերկրորդ տարին մնում է այդ դպրոցում:

Մամուռ անց է կացնում իր գիտելիքները լրա-
ցընելով, իսկ աշնանադեմին վերադառնում է իր տեղը:
Բայց այստեղ սկսվում է արգելքների վրայից
թռչելը:

Ավագ ուսուցիչը նկատում է, վոր նա քիչ է գը-
նում յեկեղեցի և պաստորին չի հարգում: Յեւ հետո
այդ քննադատությունը պաստորի հասցեյին ամբողջ
ժողովրդի ներկայությամբ:

—Այդ ի՞նչպես կարող եր նա հանգեա գալ ժողո-
վում պաստորի հայացքները հերքելու: Յեւ այնպիսի
խիստ արաահայտություններով:

—Անպատճառ պետք է գնալ պաստորի մոտ նե-
նողություն խնդրելու:

Այդ արդեն չափազանց է ի՞նչպես հիմարացա՞վ
նա: Ի՞նչը նրան դրդեց այդ ժողովում խոսելու... Նա
կըզնա պաստորի մոտ, բայց վոչ ներողություն խընդ-
րելու, այլ բացաբություններով:

Նա այդպես ել արավ: Բայց պաստորը դրան
քիչ է հավատում: Այդ ձեք արվեսին չես խաբել: Հի-
մի մեր տղայի վրա հսկողություն է նշանակված:
Յեւ դա արդեն սկիզբն է վաղճանի:

Ահա նրա մոտ կրոնի վերստուգումն է:

Առաջինը՝ յեկեղեցական յերգեցողությունն է:

Լավ են յերգում բայց մեջը սիրտ չկա:

Յերկրորդը, սրբադան պատմությունն է:

Լավ են պատմում, բայց չեն հասկանում աստ-
վածային նախախնամությունը:

Հավատո հանգանակը լավ են ասում, բայց
սրբադան հուզմունքը...

Հետո՝ ծիծաղում են կրոնի դասին: Ծիծաղում են...

Դա հիման բան է: Յերիտասարդ պարոն, պետք
է խելքդ գլուխդ հավաքես:

Այսպես ուրեմն. նրա դիմակը պատված է: Ել
հիմի ի՞նչ կարող ես անել, յերբ ամեն կողմից աչքները
վրադ է:

Նա կըգտնի մի ուրիշ, ինքնուրույն տեղ, ուր
հսկողությունը քիչ է: Պետք է այստեղից ծլկել:

Յեւ նա ուրիշ տեղ է վորոնում:

Ե, ի՞նչ կա վոր, նա բավական լավ աշխատեց:
Մշակերտների մեջ հիմքը դրված է: Պետք է նրանց
կապել հասակավորների հետ և գործը գլուխ կըգա:

Բայց այնուամենայնիվ, բաժանվել ամիսոս է...

Նոր ուսմունքի դուրս յեկած ծիւրը մի սուտ-
սուրբ իր կոչիկների տակ կըտորի և նրա բոլոր աշ-
խատանքը շուրը կըլցվի:

Ե, ի՞նչ հիմարություն յեղավ նրա հանդես գալը
այդ ժողովում:

Բայց դուրս ե գալիս, վոր գործը ավելի վատ կերպարանք ե առնում. ուրյազնիկը ինչ վոր արդեն շատ ե սկսել նրա մասին տեղեկություններ հավաքել:

Պետք ե ժամանակին հեռանալ այստեղից: Նա քաշ կըտա մինչև ամառվա արձակուրդները ե կըհեռանա:

Բայց այստեղ նրա ոճիքից կպավ կուսակցության քաղաքային կոմիտեյի անդամը:

—Յեկեք քաղաք: Այստեղ չափազանց կարիք կա պրոպագանդիստների. իսկ դու, վոնց վոր տեսնում եմ, այդ բանում ճարակացել ես:

—Կըգայի, բայց զորակոչի մեջ եմ: Ազատված եմ, իբրև ուսուցիչ: Հենց վոր այս արհեստը թողնեմ՝ կըքշեն ղինվորական ծառայության: Իսկ այդ յես չեմ ուզում: Իմ արյունով հո չեմ պաշտպանելու կապիտալիստների փողերի տոպրակները: Ներեցեք, յեա այդ բանին ընդունակ չեմ:

—Դե վոր այդպես ե՝ ձմեռը կարող եք վարժապետություն անել. իսկ ամառը աշխատեցեք մեզ ժոտ՝ քաղաքում:

Այդ խելքի մոտ բան ե:

Վճռված ե: Նա գնում ե քաղաք ե գառնում ե կուսակցության քաղաքային կոմիտեյի պրոպագանդիստ:

Բայց աշնանը մի փորձ ել ե անում ուսուցչի անկախ տեղ ստանալու:

Մի շաբաթից հետո նա կրկին տեղ ունի ե անկախ ե:

Այ հիմի նա ցույց կըտա, թե ինչ կտրելի յե անել այդ կակուղ նյութից—յերեսաներից:

Նա կըկերտի իսկական սոցիալիստներ:

Բայց նրան միայն մի ձմեռ ե հաջողվում «կերտել»:

Տեղական պաստորը շատ աշալուրջը դուրս յեկավ ե տեղեկացրեց նրա մասին իշխանության:

Հիմի այստեղ ի՞նչ անես:

Պետք ե հեռանալ, քանի բան չի պատահել:

Նրա համար գործունեյության լայն ասպարեղ կա—քաղաքը:

Բայց ավստո ե բաժանվելը սոցիալիզմի դպրոց ստեղծելու մաքից:

Չե՞ վոր՝ յերեք տարի, ամբողջ յերեք տարի նա նվիրվել ե այդ գործին: Կարողացավ հիմք դնել հարյուրավոր յերեսաների հոգու մեջ: Յեվ հիմի թողնի այդ գործը, վոր մի նոր կատուցանող այդ հիմքի վրա կանգնեցնի նոր շենք ե նրա բոլոր աշխատանքները ջուրը լցվեն:

Բայց այստեղ արդեն վոչինչ չես կարող անել: Նրան արդեն վոստիկանությունն ե վորոնում:

Պետք ե հեռանալ ե հեռքերը կորցնել:

Յեվ նա գավառային վարչության նամակ ե գըրում, վոր իր տեղից հրաժարվում ե: Այդ նամակը ուղղում ե Ամերիկա ծանոթներին, վոր այստեղից ուղարկեն Ռուսաստան:

Մի ամիս անց գավառային ստարշինան կարդում ե.—«Վորովհետև այժմ յես գտնվում եմ Ամերիկայում ե վորոշել եմ լրացնել իմ ուսուցումը՝ ստիպված եմ ուսուցչական պաշտոնից հրաժարվել»:

Ահա թե ի՞նչ բաներ...

Փախավ,—բարկությամբ ասաց ուրյազնիկը: Իսկ

պատարը ձեռները խաչելով՝ աչքերն ուղղում է յերկինք։

Ցնծա՛, յերկինք: Տեր Աստված, քո մատաղ հոտը փրկված է ավաղակ հովվից: Ցնծա՛, յերկինք:

Ցնծացե՛ք, ցնծացե՛ք:

Իսկ սերմը ցանված է և հրաշալի ծիլեր է տալիս:

Իսկ նա յերբեմն իր «Ամերիկայից» գալիս է և շարունակում է սկսած գործը: Յեվ այստեղ նա իմանում է, վոր պատարը գայլից փախչելով՝ հանդիպել է արջին—նոր ուսուցիչն էլ սոցիալիստ դուրս յեկավ:

Նրա սոցիալիզմի դպրոցը շարունակվում է գոյություն ունենալ:

Ասել է՝ դուր չե յեղել աշխատանքը:

ՅՈՒ ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆ

Այսպես ահա, նա դարձյալ քաղաքումն է...

Այն ժամանակ, առաջին անգամ զնալով այնտեղ, նա սոցիալիստները մասին՝ այն գիտեր, վոր նրանք ամենաչար հանցագործներն են: Այժմ նա մշտնում է այդ քաղաքը վոչ միայն համոզված սոցիալիստ, այլ սոցիալիզմի ուսուցիչ—պրոպագանդիստ:

Բայց անցել էր միայն 6 տարի:

Ինչ վոր իր ուժերին հավատալը չի գալիս: Նա դեռ էլ ի իրան յերեխա յե համարում, թեև վերին շուրթը արդեն աղվամազ է բուսել, և հոր ամելին, այդ միակ հայրական ժառանգությունը միքանի անգամ անցել է նրա կզակի և այտերի վրայով:

Այն, շատ վաղուց չե, վոր նա միայն աշակերտ էր, իսկ հիմի—նրան հրավիրել են խոսելու բանվոր

մասսայի առջև, վոր անցել է աշխատանքի ծանր դպրոցը:

Շաբաթ լույս կիրակի գիշերը նշանակված է համախմբումն քաղաքից դուրս, սոճիների անտառում:

Այդ համախմբման մեջ նա պետք է հանդես գա արհեստակցական միությունների մասին մի ղեկուցումով: Կուսակցական շրջանում վեճ հարուցվեց արհեստակցական միությունների և կուսակցության փոխհարաբերությունների մասին: Անհրաժեշտ էր պարզաբանել այդ հարցը և ցույց տալ, վոր չեն կարող լինել արհեստակցական միություններ առանց քաղաքականության, վոր կուսակցության ամեն անգամ պարտավոր է արհեստակցական միության մեջ լինել և ղեկավարել միության գործը, վորպեսզի արհեստակցական միությունը, այդպիսով, դառնա սոցիալիզմի դպրոց:

Մեր տղան դիմադրում է, չի ուզում ղեկուցումով հանդես գալ, նա դեռ վոչ մի ժամանակ մասսայի առջև չի խոսել: այն էլ այն հարցի մասին, վորի մասին նա այնքան քիչ գիտե: Ձե՛ վոր նա այդ տարիները անց է կացրել գյուղում, իսկ այնտեղ արհեստակցական միություններ դեռ գոյություն չունեյին:

Նրա չեմուչումները չեն ոգնում:

—Յերբեք հարկավոր չե իրան քիչ գնահատել: Քո դիտելիքները բանվոր մասսայի համար բավական են: Միայն պետք է այնպես խոսել, վոր նա հասկանա: Դեռ յե գլխավորը: Իսկ դու խոսում ես ժողովրդական լեզվով և վոչ թե ինտելիգենտի. քեզ կըհասկանան: Ել լինչ ես ուզում, ասում է նրան կուսակցության կենդրոնական կոմիտեյի անգամը:

Լավ, թող այդպես լինի: Նա պետք է համաձայնվի:

Հազիվ է սկսում մթնել, յերբ նա մոտենում է պայմանախոսքի առաջին պահակին. անտառի բերանում վերոսիպեղիստը նորոգում է իր վերոսիպեղը: Դա պարոլն է:

Վերոսիպեղիստը նրան ճանաչում է, և դենը չի թողնում անցնելու.—պետք է զգույշ լինել: Դուք պետք է մնաք մինչև պահակի փոխվելը և նրա հետ միասին դնանք: Յեթե վոչ վրա կըհասնի վոստիկանությունը և դուք կորած եք:

—Միևնույն չե՞: Չե՞ վոր ուրիշներին այդ դեպքում ձերբակալում են:

—Վոչ, միևնույն չե. մենք շատ ենք, իսկ այնպիսիները ինչպես դուք եք՝ քիչ: Պետք է ձեզ խնայեք, վորովհետև դուք մեզ հաբկավոր եք:

Այդ բաները նրան են ասում: Նա հարկավոր է... Այնպիսիները քիչ են... Այնպիսիները, ինչպես ի՞նքը...

Չե՞ սխալվում արդյոք այդ ընկերը: Լավ, նա չի վիճի, ախր ինքն էլ մինչև անգամ չի իմանում այդ մասսային:

Ահա նա նստած է վերոսիպեղիստի կողքին: Մեկ մեկի հետևից մոտենում են տանելի հազնված բանվորներ, մեծամասնությունը սունկի համար դամբյուղները ձեռներին:

—Վարտեղ են այստեղ սունկերը բուսնում—հարցնում են նրանք վերոսիպեղիստին:

—Լճի մոտ, ստանում են պատասխան:

Դա պարոլն է: Պարոլը սովորաբար արտառոց բան էր լինում:

Դա նրա համար էր, վոր պատահական մարդը, վորին պարոլիստի տեղ ազարող էյին դնել, պատահամբ ձիշտ չպատասխաներ և չզգոթեցներ համախմբվողներին:

—Շնորհակալություն. իսկ ի՞նչպես դնանք այդ տեղը:

Ընկերը նրան ճամբան է ցույց տալիս մինչև հետևյալ կամուրջը:

Վերջին բանվորներն անցան: Առաջին պահակը վերցնվում է: Նրանք դնում են յերկրորդ պահակին, նրան էլ վերցնում են: Ապա մոտենում են յերրորդ պահակին, վերցնում են նրան և հեռանում են մինչև ժողովատեղին:

—Ինչ վոր քիչ մարդ է յեկել,—ասում է նա պարոլիստին:

—Չե, բավականին կա: Ախր հավաքվում են յերեք ուղղությամբ, վոր վոստիկանության ուշադրությունը չզրավեն:

Նրանք մոտենում են ժողովին: Անտառի բացատում հավաքվել են յերեք հարյուր մարդ: Մթնաշաղը թույլ չի տալիս դեմքերը տեսնելու: Յերևում են միայն բանվորների ջուկ-ջուկ խմբերը և յերբեմն լսվում է ջահնների հազիվ զսպված ծիծաղը:

Թեթև ձայն են տալիս ամենքին և ամենքը լուռվում են: Ժողովը բացվում է:

Բայց հանկարծ հարց է տրվում.

—Պահակներ դրված են:

—Պարոլներից վոչ մինը հո պոչերով չեն յեկել:

—Վոչ, ամեն բան կարգին է, խնդրում եմ ժամանակը չձգձգել:

Վորոշվում է որակարգը: Սրանցից մեր ազան իմանում է, վոր մինչև իր զեկուցումը դեռ կըլինեն ուսյոնների և քաղաքի կազմակերպությունների մասին տեղեկություններ:

Ռայոնում հիմա 500 գործոն անդամներ կան: Բոլորը՝ քաղաքային կազմակերպության մեջ յերկուսու կես հազար են, իսկ միասին գյուղերի հետ՝ յերեքու կես հազար:

Ահա թե յերբ նա իմացավ, վոր իսկապես քանի կազմակերպված սոցիալիստներ կային:

Յեվ այդ ամենը յերկու միլիոնից ավելի բնակիչների մեջ:

Իս նշանակում է, վոր ամեն մի յերկու հազար բնակչին ընկնում էր միայն յերեք կուսակցական մարդ:

Ահա թե յերկիրը ինչ դրության մեջ էր: Իսկ նա ամբողջ ժամանակ դեռ շարունակում էր մտածել, վոր շուտով կըլինի յերկրորդ հեղափոխությունը:

Վոչ, անշուշտ դա այնքան շուտ չի լինի... Այնքան շուտ չի լինի... Բանվորին կուսակցական կազմակերպության մեջ շուտով չես կարող գրավել արյունալի բռնություններից հետո: Պետք է նրան անցկացնես սոցիալիզմի, դպրոցի, արհեստակցական միությունների միջով:

Այո, արհեստակցական միությունների միջով:

Այո, դա, ասենք, սոցիալիզմի իսկական դպրոցն է: Այստեղ վոչ վոք չի կարող թելադրել պարապմունքների ծրագրերը, ինչպես դպրոցում: Այստեղ ծնողների սրտես աչքերը վրադ չեն: Այստեղ հասակավոր մարդիկ են իրենց գլխով ու խոսքով:

Այդ մասին նա այսոր կասի: Յեվ կասի ասյպես, վոր հիշեն:

Բայց անա իրարանցում.—պահակները բռնել են յերեք մարդու զամբյուղները ձեռքին: Բանից դուրս է գալիս, վոր դրանք հասարակ բնակիչներ են, վոր յերկոյանից յեկել են սունկի, վորպեսզի առաջին սունկերը աչքից բաց չթողնեն: Նրանց տուն թողնել չի կարելի. ո՞վ է իմանում. վոստիկանությանը իմաց կանեն: Պետք է նրանց ձերբակալել և պահել մինչև առավոտ, մինչև հավաքույթը կըվերջանա: Թո՛ղ նստեն և լսեն, միայն պետք է աչքները փակել, վոր վոչ վոքի չճանաչեն: Բոլորը հանդարտվեցին, և ժողովը շարունակվում է:

Ահա և նրա հերթն է: Կազմակերպության զեկուցումները վերջացած են, և խոսքը պատկանում է նրան:

Նա սկսում է յերկշտ, անվստահ: Նա դեռ քաշվում է. ախր ինչպես պիտի ինքը—ծծկերը սովորացրեսի այդպիսի ձերերին:

Բայց, ո՞վ հրաշք, նա նկատում է վոր նրան լարված լսում են:

Թփերի մեջ լսեց զանազան տեղերի զեկուցումները, լսողների խոսակցությունները:

Նշանակում է՝ նա կարողացավ ճիշտ կողմից մտենալ այդ քաղաքի բանվորներին: Յեվ ինչո՞ւ չկարողանար: Ախր նրանք իրեն ոտար չեն: Ամբողջ յերկու տարի նա ապրել է նրանց շրջանում և գիտե, թե ինչ է շնչում և ինչ ցավ ունին այդ մարդիկ:

Նա չոր գիտական ճառ չի ասում: Վոչ, նա խաղում է բանվորների զգացմունքի հետ: Նա փայլուն գույնով ցույց է տալիս այն կյանքը, վորի մեջ ձգված է բանվոր դասակարգը և միաժամանակ նկա-

րազրում և այն կյանքը, վորը յերազ չե, հեքյաթ չե, այլ իրազործելի գաղափար, հենց այստեղ, մեր յերկրում, մեր իսկ ձեռներով:

Բայց ի՞նչպես անել այդ:

— Կապիտալիստների զինված, միացած բռնեցքի դեմ պետք է դուրս բերել մեր կազմակերպված հեղափոխական բանվորների ույժը:

— Հիմի մեր ձեռից խլել են որինական ճամբով կազմակերպվելու հնարավորութունը: Մեզ խուկել են զաղտնի գործունեյության վայրերը: Ուրեմն՝ յեկեք ոգտագործենք արհեստակցական միությունները, այդ համարյա միակ հնարավորութունը բանվոր լայն մասաները կազմակերպելու: Իսկ կուսակցութունը, մեր բջիջը պետք է արհեստակցական միության մեջ լինի զինվորական շտաբ:

Հեղափոխությունը 1905 թվին մեզ հանդիպեց վատ կազմակերպված և կապիտալը հաղթեց:

Մովորենք մեր հին սխալների վրա:

Թո՛ղ նոր հեղափոխությունը՝ վոր չի անվում, այլ ինքն է իրան հարուցանում, մեզ կրկին անգամ չգտնի անկազմակերպ:

Արհեստակցական միությունները, դա վոչ թե միայն փոխ-ոգնության կասսան յե, վո՛չ. դրանք պրոլետարական գործի գործոն մասերն են, վորոնք այստեղ սովորում են կապիտալին հաղթելու արվեստը:

Նա վերջացրեց... լավեցին ծափահարություններ... Մթթե այդ թույլ և տրվում անլեզալ հավաքույթի մեջ. Դատարկ բան է, այնքան էլ սոսկալի չե: Մի անգամ վոր սկզբում հետամուտ չե՞. յեղել իրենց, հիմա, առավոտյան դեմ սատանան չի կարող իրենց ձեռ տալ:

Սակայն մինչ վ՛եր աստիճան համարձակ են նըրանք:

Նա վերջացրեց... Հիմի նա զգում է, վոր նա իր դործը գլուխ հանեց: Նա՛ այդ քաղաքացին բանվորների հետ ընդհանուր լեզու գտավ, թեև վերջին տարիները ապրել է գյուղում:

Ժողովը վերջացել է և բանվորներն շտապում են մինչև լույսը առն հասնել, վոր վոսալիկանությունը չնկատի: Միայն յերիտասարդները մնում են այստեղ գիշերելու, վոր ազատ որը այստեղ, ազատ ողում անցկացնի՝ հետու քաղաքի աղմուկից և փոռուց:

Նրանք գողեգող ցրվում են, ինչպես չարագործներ:

Այստեղից նրանք կըցրվեն իրենց բանվորական թաղամասերը, արհեստանոցները, թեյարանները և կըսկսեն լուսավորել բանվոր մասսան, պատրաստելով նրան վճռական կուլի մտնելու կապիտալի դեմ:

Այո, նա սարսափելի յե քեզ համար, կապիտալ, այդ ուրվականը, կոմունիզմի ուրվականը:

Չուր չե, վոր դու քո ուսուցիչների բերանով խաբանում ես նրանց իրրև ամենից չար հանցագործների:

Դա այդպես է. այդ «հանցագործը» կըվերկենաքո դեմ, վորպեսզի մարդկությանն աղատի այն հարասե սարսափից, վոր գործում է մի հանցագործ, վորի անունն է Կապիտալ, վորի դորքը—Բուրժուազիան է:

Այստեղ, անառելի խորքում խուլ գիշերում պրոլետարիաթը սրում է քո գենքը, վորով նա վերջ կըտա հին կազմին:

Յե՛վ յերբ լուսադեմին բուրժուաները, գիշերվա-

որգիաներից հետո, ծառաների ուղեկցութեամբ քաշ կըզան դեպի կառքերը և յերկվարներով մեռյալների պես կըտարվեն տուն,— գիշերային հավաքույթներին մասնակցողները ցրվում են իրենց ծակուռները նոր ծրագիրներով, նոր գիտելիքներով, նոր վճիռներով՝ հեղաշրջել ամբողջ աշխարհը:

Այստեղ անբարոյականութուն և քայքայվող անկարողութուն, այստեղ ասկետիզմ և ավելի ու ավելի աճող ույժ:

Մի՞թե դժվար է ասել, թե ո՞վ կըհաղթի:

32. ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Մեր ազան յերեք մարդ տեղ է բռնված:

— Դու դեռ ենտուզլաստ ես, քեզ գործը դեռ չի ասնձրացել, դու խոսում ես զգացմունքով, և դա շատ բան է նշանակում: Մենք, հին պրոֆեսիոնալներս, գրամաֆոն ենք դառել, մենք բթացել ենք: Մենք ել «հոգի» չունենք: Իրա համար ել մենք մասսային ձանձրացրել ենք:

Իեզպեսները վոր չաշխատեն՝ ո՞վ պիտի աշխատի:

Ահա թե ի՞նչ էյին ասում կուսակցական կոմիտեյի հին պրոֆեսիոնալները:

Նա ել ծուլ չե: Այդ աշխատանքը նրան գրավում է: Հիմի նա ամեն գիշեր հավաքույթներում է.— քաղաքում հինգ ուսոն կա, իսկ ամեն միւր նրանցից շարաթը մեկից վոչ պակաս հավաքույթ է սարքում:

Ամեն բան լավ էր գնում, բայց հանկարծ մի շաբաթ իրիկուն, պարոլիստին հանելու ժամանակ իրանցում ընկավ:

Բանից դուրս է գալիս, վորոնք վերջին պարոլի հետ ներս սկզբց յերկու մարդ, վորոնք չկարողացան պարոլին պատասխանել: Բոլորն անհանգստացան— լրտեսներ հո չէն: Պետք է սաուգել: Ռ՝վ է նրանց դեմքով ձանաչում:

— Յեա,— խոսեցին միանգամից յերկու յերիսասարդ:

— Հարցրեք՝ վո՞ր յենթաուսոյոնից ու բջիջից են և թո՞ղ մեկը հովաստիացնի:

Սկսվում է ներկաների սաուգումը:

— Վահ, քիչ առաջ եստեղ էյին: Ես ո՞ւր կորան:

— Սուզարկեցե՞ք թփերը:

Սկսվում է փնտառուքը: Լրտեսները տեսան, վոր գործը լուրջ կերպարանք է ստանում՝ ուստի և վճռեցին թագնվել, բայց նկատվեցին:

— Կանգնեցե՞ք:

Նրանք չեն կանգնում:

— Կանգնի՛ր:

Նրանք ծլկում են:

— Բռնեցե՞ք զրանց, բռնեցե՞ք:

Դեմները դուրս են գալիս միքանի մարդիկ: Ահա նրանք շատ մոտ են լրտեսներին: Նրանցից մեկը ձեռը գցում է լրտեսի վերարկուին, իսկ սա հանում է ստրճանակը:

— Բռն, բռն:

Լսվում է ստրճանակի յերկու կրակոց: Առաջին հետապնդողը գետին է ընկնում:

— Սպանված են: Վիրավոր են:

— Հիմի ժամանակը չե իմանալու:

— Լրտեսներ են: Բռնեցե՞ք լրտեսներին, — գոռում են բոլորը միաձայն:

Կրտսաներին շրջապատում են:

Հիմա նրանք յերկուսով են կրակում: Միաժա-
մանակ կրակոցի ձայներ են գալիս շոսսեյի կողմից:

— Ստրածնիկներ են:

Ստրածնիկներ են: Թաղնվեցեք:

Հավաքվածները վազեցին շոսսեյի կողմը, վոր-
պեսզի անցկենան մյուս կողմը և թագնվեն թավուս
անտառում:

Բայց շոսսեյի վրա կրակում են:

Միևնուշյն ե, Հիմի ձեռքներն ընկել չի կարելի:

Մեր տղան ել անցնում է շոսսեն և թագնվում է
թփուտներում յերկաթուղագծի և շոսսեյի միջև:

Նստեց թփերի մեջ և սպասում է՝ թե ինչ կըլինի:

Լավում է, թե ինչպես ստրածնիկները շղթայում
են անտառը և լապտերներով սկսում են խուզարկու-
թյունը:

Այստեղ յերկար չես կարող նստել: Լավ չի՞ լինի
անցկենա մինչև յերկաթուղագիծը և շուտ տա դեպի
քաղաք:

Ահա նա արդեն յերկաթուղագծի վրա յե: Մոտ
է կամուրջին, բայց հանկարծ ձայն են տալիս:

Նա չի կանգնում:

— Կանգնիր, կըկրակենք:

Շուրջը արդեն մարգագետին է: Մինչև անտառը
հեռու է: Ի՞նչ անի: Անցորդ ձևացնի: Բայց յերկա-
թուղագծի վրա... Ի՞նչ կա վոր:

Նա կանգ է առնում:

Մոտենում է ստրածնիկը տեղական ուրյաղնի-
կի հետ:

— Մեկը հստեղ է:

— Ի՞նչ եք ուզում:

— Յեկեք ինձ հետ:

— Բայց ի՞նչ եք ուզում ինձանից:

— Մի խոսեք, զնանք: Այնտեղ կըտեսնենք:

Յեվ տարան առանց ավելորդ խոսակցություն-
ների:

Վերադառնում են ու մոտենում անտառին: Այն-
տեղ ել բռնված են միքանի ընկերներ: Նա նշան չի
ցույց տալիս, վոր նրանց ծանոթ է:

Սկսում են անտառում վորոնել:

Գիշերը մութն է, բայց նրանց ձեռին լապտեր կա:
Ստրածնիկ շատ է ուղարկված, յերևում է, վոր լավ
էն պատրաստվել:

Ասել է՝ այստեղ պրովակատորի բան կա:

Նա ուշով մտիկ է տալիս լրտեսների դեմքին և
ձանաչում է. դրանք այն մարդիկն են, վորոնց հետ
վերջին պարոլի հետ միասին նստել եր:

Մինչև անգամ հետները խոսակցություն է ու-
նեցել:

Ասել է՝ իրան կըձանաչեն: Անպատճառ կըձանա-
չեն: Թեև յերեկոն մութն եր և նա փաթաթված եր
պլաշտով: Հիմի նա առանց պլաշտի յե և կարողացել
է մինչև անգամ գլխարկը փոխել: Գուցե վտանգը
անց կենա:

Բայց այս ո՞ւր են տանում իրանց:

— Ձի՞ կարելի իմանալ: Այդ ո՞ւր եք մեզ տանում:

— Հետո կիմանաք:

Դուքս է գալիս, վոր լրտեսները ավարից դժգոհ
են: Հավաքույթի հիմնական միջուկն նրանք ձեռք չը-
զցեցին: Մեծամասնությունն արդեն կարողացավ անց-

նել ուրիշ անդ: Լրտեսները վրա հասան միայն վերջին խմբին, վոր չեր կարողացել նշանակած անդից հեռանալ:

Հիմի նրանք վորոնում են հիմնական միջուկը:

Հեռվում վորոտում և յերաժշտութիւնը: Հնարավոր ե, վոր հավաքույթը ծածկվում ե պարահանդեսի դիմակի ասկ, ինչպես այդ հաճախ լինում ե: Պեք ե այնտեղ գնալ և շրջապատել պարողներին:

Շրջապատում են, խուզարկում, հարցաքննում.—

Բոլորը միաձայն ցուցմունք են տալիս. հարսանիք ե, պարերը սարքել են այստեղ կանաչի վրա: Միայն այդքան:

Դուրս յեկավ մինչև անգամ հարսնացուն ու փեսացուն: Կարծես ամեն բան պարզ ե: Մինչև անգամ տեղական ուրյադնիկը վկայում ե, վոր նա այդ փեսացունին ճանաչում ե: Նաև այդ կալվածքի տիրոջը հարածում ե: Նրանք հնազանդ մարդիկ են:

Ակալողը չնին և պրիստավը չեն հավատում:

— Բոլորին, ովքեր դոկումենտներ չունեն՝ ձերբակալել և ուղարկել շոյսեյի գինետունը՝ հարցաքննութեան:

Հիսուն գյուղացի տղաներ ու աղջիկներ, մինչև անգամ արևոր ծերուկներ պահակներով քշվում են գինետունը: Նրանք հետները հո անձագիր չեն ման ածում: Այն ել հարսանիքում:

— Ես ել քեզ հարսանիք, — զայրանում ե ինչ վոր մի յերիտասարդ:

— Առաջին անգամն ենք հարսանիք սարքումք Հիմի մեր յերկրումն ենք ու պարել ել չի կարելի:

— Ժամանակներ են...

Չի ոգնում վոչ լացը, վոչ խնդրքը. պրիստավն անողորք ե:

Ախր չի կարող թույլ տալ, վոր իրեն խաբեն. իմաց ավին, թե հսկայական հավաքույթ ե լինելու, իսկ բունել են միայն մի հինգ մարդ և այն ել սոցիալիստների քիչ նման:

Կարող ե պատահել, վոր դա հարսանիք ե: Կարծես չի կարելի հավատալ: Բայց պրիստավի ինքնասիրութիւնը թույլ չի տալիս իր սխալը խոստովանել:

Նրա գործն անհաջող անցավ, դե թող այս հարսանիքի հյուրերը ևս զգան, թե ինչ ասել ե անքուն գիշեր:

Փոխանակ պառկելու փափուկ անկողնում կամ նստելու տաք ճաշարանում՝ նա թրև ե գալիս անտառում, մինչև ծուծը թրջվել ե ցողից, սովածացել, հոգնել...

Թող սրանք ել զգան: Թող զգան...

Յեվ թող ուրիշ անգամ լավ հսկեն իրենց անտանները և թույլ չտան նրանց մեջ անթույլատրելի հավաքույթներ:

Գինետան անագին ցուրտ սենյակներում լցրել են թե հարսանիքավորներին և թե սրանց՝ ժողով գընացած հինգ հոգուն:

Նրանք պետք ե սպասեն այստեղ մինչև լույս և մինչև անտառի շուրջկալը վերջանա:

Ժամը իննին բերին քահանային և ստարշինային: Նրանք վկայում են, վոր հարսանիքը իսկական հարսանիք եր յեղել, և պարողների մեջ սոցիալիստ չկա:

— Մի՞թե այդպես ե:

— Վկա աստված:

— Դե, անց կացեք: Ուրիշ անգամ ել առանց մեր թույլտվութեան պարահանդեսներ չսարքեք:

Յերթասարդներն ուրախությունից խմում են, իսկ հարսնացուն լաց ե լինում. արատավորեցին իր հորսանիքը, կոտորեցին նրա բախտը... Սա վառ նշան ե:

Յեղ նա հիմի միշտ պիտի անիծի այդ պրիստավին:

Ել նրան ինչ ե ֆնում՝ խեղդվել...

Բայց ահա հերթը հասավ մեր ժողովականներին: Նրանք աղմկում են, անզգամություն են անում, սիրալիրություններ են անում, ցույց են տալիս, թե սիրահարներ են, բողոքում են յերկար ժամանակ բռնաբարված լինելու համար:

Գուցե պրիստավի համբերությունը կըհաանի և բաց կըթողնի...

Բայց պրիստավն ել կողք ունի: Նա դեռ շուրջկալը չի վերջացրել: Արդեն ճաշի ժամանակ ե, իսկ նա դեռ վորսում ե անտառում: Նա յել թելք ունի գլխում. անտառում թագնվածները պետք ե քաղաք վերադառնան: Հենց այստեղ ել նա նրանց կըբռնի:

Բայց հենց այստեղ ել պրիստավի հաշիվները սխալ են: Տոն որ ե, անտառը ժողովրդով լիքն ե:

Բոլորին չես կարող տանել: Իսկ ճվքեր են նրանցից սոցիալիստ: Մ՛վ կասի: Ճակատին հո չի՞ գրած:

Բայց լրտեսները ելի միքանիօին ճանաչեցին: Նրանց բերին գլխետուն և դրանով ել հանդսասացան: Հիմա միայն սկսվում ե հարցաքննությունը:

Մեր տղան ամբողջ ժամանակ ցույց եր տալիս, թե քնած ե, յերեսը ձեռքերով ծածկած, վորպեսզի դեմքը չերևա: Բայց հիմա հարցաքննում են, և յերկու լրտեսներ աչքները տնկել են վրան:

Նրանք համենայն դեպս չեն կարող պնդել, թե ազիտատորը հենց նա յե: Բայց ավելի լավ ե նրան քաղաք տանել: Այնտեղ լուսանկարներով կարելի կը լինի ստուգել:

—Ազգանունը: Զբաղմունքը: Ի՞նչպես հայտնվեց այստեղ:

—Յես ժողովրդական ուսուցիչ եմ: Յեկա ուսուցչական դասընթացներին, իսկ շաբաթ որը վորոշեցի ոգտագործել տեսնելու նոր ջրմուղը: Վոտով գնացի և ուշացա: Յետ դառնալիս բռնեցին. նա աշխատում ե այնպես ստել, վորպեսզի նման լինի իրականության:

Պրիստավը կարծես հավատաց. դոկումենտը կարգին ե, ուսուցչական դասընթացներ գոյություն ունեն, ջրմուղը նույնպես: Դրա հետ միասին նա իսկպես գյուղավարի յե:

—Բաց չթողնե՞ք:

Բայց լրտեսները պնդում են չազատել:

Ա՛յ սատանաներ:

Զոկեցին և ամբողջ խմրից թողին յեոթը մարդ: Դա յե վորսի հետևանքը:

Յերեկվա ժամը յերկուսին նրանց սոված քշեցին դեպի քաղաք: Իսկ մինչև քաղաք տասներկու վերստ ե: Շուրջը ձիավոր սարածնիկներ են, սրերը մերկ. ուղղակի ավազակների պես են քշում:

Թող ժողովուրդը զգա, վոր իշխանությունը քրնած չե. մենք բռնել ենք կարևոր պետական հանցավորներ և իրկել ենք թագավորի գահը:

Այն, նրանք հասարակ թաշուկներ չեն...

Թող ժողովուրդն իմանա այդ բանը:

Վոստիկանատուն: Վարչություն:

Նրանց տեղավորում են յերկու կամերայում.—
տղամարդկանց քշում են մեկի մեջ, կանանց՝ մյուսի:
Ձեռքներին առնում են ամեն իր, մինչև անգամ շալվա-
րի կապերը, վոր չկախվին,—իրենց ուժիմը լավ գի-
տեն... Յերեկոյան դեմ ամենքի համար բերում են մի
կտոր հաց և մի աման յեռ շուր:

Անուշ արեք:

Իսկ դուրսը շուռ ե գալիս վոստիկանական մե-
քենան:

Առաջին կետ. բանտ են դնում մի լրտեսի:

—Վերակացու,— լսվում ե դռների մոտ,—ահա մի
կտորի՞ճ ել: Ազատ կամերա չկա:

Վոչ:

Դե ուրեմն մի վորևե տեղ ներս առ: Նրան յեր-
կար չենք պահիլ: Այսոր ևյեթ կուղարկենք քաղա-
քամասը:

Դուռը բացվում ե և ներս են թողնում մի յերի-
տասարդի՝ պսպտացող աչքերով:

—Բարև՝ ձեզ, ընկերներ:

—Բարև,— դժկամ պատասխանում են նրա բա-
րևին:

—Որս փչացրին. բռնեցին ձամբին և քաշ են տա-
լիս այստեղ: Իբր թե հավաքույթում յեղել եմ:

Բայց յեն ստեր հնարեցի և ահա խոստացան
այսոր բաց թողնել: Իսկ դժեք ինչու համար եք բռո-
նվել:

—Հարսանիքում եյինք, պարահանդեսին և նույն-
պես ինչ վոր բանի համար քաշ տվին այստեղ:

Թե չե՞ փեսացուն կըխանդեր:

Ահա թե ինչ: Այ քեզ կարգեր: Իսկ դուք ի՞նչ-
պես ընկաք այստեղ,—դիմում ե լրտեսը անձամբ մեր
տղային:

—Վոնց վոր հավը փրավի մեջ: Դասընթացներում
հրաշքներ պատմեցին ջրմուղի մասին: Յես ել վրա ըն-
կա տեսնելու. ընկա շուրջկալի մեջ...

Նա վորոշեց գյուղացի սարսաղի դեր խաղալ: Նրա
շորերը իսկ և իսկ հարմար են, գյուղական են:

Լրտեսն զգում ե, վոր այստեղ վորսալու բան
չկա: Նա խնդրում ե վոտաց ձանապարհ, իսկ հետո
նրան բոլորովին դուրս են տանում:

—Գտան հիմարներին, ծիծաղում են մերոնք:

—Շատ հնացել ե ձեր: Քիչ են կարողանում հը-
նարել:

—Հա, հա, հա...

Յերկրորդ կետ. թնդանոթի յեն կապում:

Հերթով կանչում են բոլորին գրասենյակ:

—Ե, յերիտասարդ, բանըդ բուրդ ե: Չի կարելի
այդ քաղաքացիներին հավատալ: Տես, նրանք ձեզ
կանչեցին քաղաք, կանգնեցրին առաջին պլանում, իսկ
իրենք թագնվեցին թփերի մեջ: Այդ ել ձեզ քաղաքա-
ցիները, Իրենց կաշին պրծացնելով՝ նրանք ուրիշնե-
րինը չեն ամստում: Ահա այստեղ ձեր մասին ցուց-
մունք կա վոր... Հիմի դուք ի՞նչ կասեք սրան:

—Յես վճռապես վոչինչ չեմ հասկանում: Յես
ընդհանրապես չեմ ճանաչում վոչ քաղաքը, վոչ ել քա-
ղաքացիներին: Ահա հենց նոր գյուղից եմ յեկել, վոնց
վոր տեսնում եք,—նա ցույց ե տալիս իր շորերը:

—Ափսոս, ափսոս, վոր դուք համառում եք: Նը-
րանք ձեզ չափսոսացին...

— Բայց յես նրանց առաջին անգամ եմ տեսնում:

— Իսկ նրանք ասում են, վոր ձեզ ճանաչում են, վոր դուք այստեղ բոլոր... Այ իսկապես վոր լրբեր են: Վոչ, աստված ազատի այդպիսի բարեկամներից... Այո, ուրեմն ի՞նչ կասեք սրան... խոստովանեցեք, ձեզ համար լավ կըլինի:

— Յես չեմ հասկանում, ինչի՞ մասին եք խոսում: Ախր յես քաղաքացի չեմ:

— Հենց այնպես ել չե՞ք ուզում խոսել:

— Յես ձեզ չեմ հասկանում:

— Յես տարեք: Կընստի ինձ մոտ: Յեվ կըխոսես: Կամերայում ընկերները հանդիպում են նրան փորձող հայացքով:

— Ե, ինչպես յեղավ:

— Հին յերգ ե. ձեր մասին ձեր ընկերներն այստեղ արդեն ամեն ինչ ասել են, ասացեք առանց թագցնելու: Մի խոսքով՝ ուզում եյին թնդանոթի կապել:

— Հն, հն, հն: Հին ե: Հին ե:

— Ե, դա նորերի համար ե:

— Բայց ինչ վոր ե՝ վորեն մեկը կըկտցահարի այդ կարթը:

Յերրորդ համար. հարսընտես:

Բորբին դուրս են բերում լվացվելու և շտկվելու:

Սպասեցեք միջանցքում. բռնված ե լվացարանը:

Նրանք սպասում են: Իսկ լրտեսները մեկ մեկի յետևից կողքներից անցնում են, ծաղրական խոսքեր նետելով:

— Այդ ի՞նչ մուժիկ ե յեկել մեջներդ խցկվել: Ձեր ընկերը չե, ձեր ընկերը չե:

Այդ մեր տղայի հասցեյին ե:

Իբրև թե նա իր դերը հրաշալի կատարում ե:

Գուցե դարձյալ դուրս կըգա:

Հարսնտեսը վերջացավ. ձեռնարկում են ավելի հիմնական գործին:

Չորրորդ կես. լուսանկարումն:

Նրանց ստիպում են բարձրանալ հինգերորդ հարկը, կտուրի հենց տակը:

Մի բազմոց ե դրած պտուտակներով: Նստեցնում են, նշանակելով հասակը, լուսանկարում են:

— Ձի՞ կարելի հիշատակի համար մի լուսանկար վերցնել:

— Ինչո՞ւ համար: Այդպես ել պատմության մեջ կընկնեք:

Ահա այդ ձիշտ ե:

Այդպես ել պատմության մեջ կընկնեք...

Այդ վոստիկանական արխիվները լուսանկարներով մի ժամանակ կընկնեն հեղափոխական ժողովրդի ձեռը և այդ լուսանկարները բնութագրերով կըհանձնըվեն հեղափոխական արխիվը:

— Լուսանկարում են: Ե, ասել ե, գործը պրծած ե, ճանաչել են, — մտածում ե մեր տղան: Իսկ տանը նրա մոտ ամեն բան կարգին չե:

Տեսար սատանի բանը: Հենց պետք ե յերկաթողու գծի վրա դուրս գալի:

Հինգերորդ կես. մատների տպելը:

Նրանք բավական չեն միայն յերեսի լուսանկարը: Յերեսը հեշտ ե փոխել: Մորուքը կըբուսնի, կամ խուզել կըտա և ել չի ճանաչվի: Բայց այ մատների տպումը ստույգ բան ե: Չկան այնպիսի մարդիկ, վորոնց մատների գծերը միանման լինեն:

Դա ամենասուղ ձևն է ճանաչելու:

Մեխանիկան հասարակ է:

— Մատներդ չոխր: Այդպես, բռնիր:

Մատների վրա քսում են թաղիքը սև ներկով:
դզույ՜ ներկելով մատների ծայրը:

— Դիր թղթի վրա:

Մատները սեղմում են թղթի վրա և վոստիկանա-
կան արխիվներում հավիտյան տպած են մատներդ:

Մեր տղան հոգնեց այդ փորձերից: Հիմի գոնե
մի քնի: Հիմի ամեն բան միևնույն է: Միայն թե այ
տանեցոց պեսք է նախագգուշացնել: Նա քաղաքա-
յին կոմիտեյի անդամի ընակարանումն է: Նրա մոտ
ահագին անլեզալ գրականություն կա: Դեռ յերեք որ
առաջ յերեք սայլ արտասահմանյան գրականություն
բերին: Բայց ինչպես իմաց տա: Վոչ վոք չի ազատ-
վում: Միակ հույսն այն է, վոր ընկերը ինքը գլխի
կընկնի:

Ել հիմի միևնույն է...

Նա պառկում է թախթի վրա և քնում է մեռե-
լի քնով:

33. ՎՐԻՊԵՑԻՆ

Առավոտյան նրան կանչում են գրասենյակ:

Սա ի՞նչ բան է, ելի՞ հարցաքննություն: Բայց
ինչո՞ւ յեն նրանից սկսում: Ասել է՝ խաղը տանու է
տված: Սատանան տարավ նրան անտառից դեպի այդ
անիծած յերկաթուղու գիծը:

Բայց ահա լավում է որապահի ձայնը.— Մոժի-
կին բերի՞ք:

— Բերինք:

— Դեպք բերեք դրան:

Նրան տանում են որապահի մոտ:

— Ազգանունդ ի՞նչպես է... Հը՞... տես, ել այդ
խալխի հետ ծանոթություն չունենաս:

— Յես նրանց իսկի չեմ ել ճանաչում:

— Վերադարձրեք սրա իրերը և տարեք քաղա-
քամասը:

Նրան իր իրերը հետ են տալիս և քաղաքապահի
հետ ուղարկում են ընակավայրի վոստիկանական մասը:

Աղատման հոտն յեկավ:

Իսկ յեթե քաղաքամասում բռնեն:

Նա աշխատում է վոստիկանից իմանալ, բայց
սա վոչինչ չգիտե, կամ չի ուզում ասել, միայն հայ-
հոյում է, վոր ահա այդպիսի քոսոտների յերեխայու-
թյան պատճառով ստիպում են ծեր տեղովը քաշ գալ
ջհանգամի ծերերը, այս հեռու քաղաքամասը:

Քաղաքամասում ստուգում են պասպորտը:

— Վերանդ ես ապրում:

— Յերկար փողոցում:

— Յերկար փողոցում: Ելի՞ Յերկար փողոցում...

Այդ ի՞նչ ունեք դուք այնտեղ Յերկար փողոցում: Դար-
ձյալ այդ...— Ակալողը՛նին հանկարծ լսեց: Ուշքի յե-
կավ, վոր ավելորդ բան ասաց:

— Ստորագրիր, վոր պասպորտդ ստացար:

Նա ստորագրում է և դուրս գալիս:

Հիմի այլևս ձիշտ է. նա ազատ է:

Այսպես խաբեց այդ կտրիճներին:

Խաբեց:

Նրանք նրան ընդունեցին գյուղական անտաշ
յերիտասարդի տեղ:

— Հն, հն, հն... Դեռ հետախուզման ել սպեցիա-
լիստներ են:

Բայց տանը, տանը ի՞նչ է կատարվում: Ախր ա-
կալողը չին զուր տեղ բերնից դուրս չթոցրեց Յեր-
կար փողոցի մասին:

Նա մոտենում է նախազգուշութուններով. ար-
դյոք դարան չկա:

Բայց այնտեղ ամեն ինչ հանգիստ է:

Նրան հանդիպում է ընկերը՝ գործից քրտնած.—

—Մենք միայն յերեկոյան իմացանք հավաքույ-
թի ցրման մասին: Դուք չեկաք, այդպես վորոշեցինք:
Վոր բռնել են: Ամբողջ գիշեր աշխատում եյինք մու-
րազները մաքրելով: Յերկու հոր փորեցինք և գրա-
կանությունը թաղեցինք գետնի մեջ:

—Ամեն բան լավ, բայց պետք է այստեղից ա-
մեն բան հեռացնել: Յես հավատացած եմ, վոր նրանք
ինձ բաց թողին անհոգությունից:

Վաղը գլխի կընկնեն և այստեղ կըլինեն: Չեք
խանգարի բնակարանը փոխեյինք:

—Դե հիմի մաքրեցինք, թող գան և խուզարկեն,
ինչքան սրտերն ուզում է:

Ակալողը չին ինչ վոր բերնից թոցրեց... նրանք
ինչ վոր հոտն առել են:

—Դատարկ բաներ են:

Արդեն յերեկոյն յե: Արդյոք տանը գիշերե: Հան-
կարձ գիշերը կըզան և կըսրբեն: Այն ժամանակ ել
չես կարող ազատվել:

Բայց անդամներն այնպես ծուլ են, վոր նա հը-
նարավորություն չունի տեղից շարժվելու:

Լվացվում է, ընթրում և ընկնում անկողին:

Մի ժամ անց արդեն խուժացնում են՝ նա և իր
ընկերն անցյալ գիշերվա աշխատանքից հոգնած:

Առավոտյան նա զնայք է նստում և գնում է
գավառ, այնտեղի կազմակերպության մեջ ծառայելու:

Նա պայմանավորվել է դեռ յերեկ այնտեղ լինել, բայց
ձերբակալումը խանգարեց: Հիմա պետք է շտապել, թե
չե՞ պարտիստին չի գտնի պայմանավորված տեղում:

Ամբողջ մի շաբաթ նա կորչում է՝ շրջելով գյու-
ղական կազմակերպությունները: Միրաը հանգիստ չե-
լինչ է կատարվում տանը: Արդյոք ընկերը կարողա-
ցավ հետքերը կորցնել:

Դալով քաղաք՝ նա առաջ դնում է հայտնելու իր
գալու մասին, իմանալու առաջիկա անելիքը և գոր-
ծերի դրությունը քաղաքում:

—Դու տանն եյիր, — հանդիպում են նրա ընկեր-
ները:

—Վոչ: Ի՞նչ կա:

—Ի՞նչ լավ արիր... Այնտեղ դարան կա... Չեք
բակալեցին մեր կոմիտեյի անդամին, ծեծեցին նրա
մորը, սա խելագարվեց: Ամեն տեղ պեղում եյին թագ-
ցըրած գրականությունները, արձանագրությունները,
բուրբը, բուրբը... Հիմա քեզ են վորոնում: Լուրջ գոր-
ծի հոտ է գալիս:

Անձ թե ինչ: Յես զգում եյի, վոր այն ժամա-
նակից վոր ինձ ազատեցին՝ նրանք վրիպեցին:

Պահակներն ուժեղացրել են: Արդեն ամբողջ շա-
բաթ կանգնած են մոտակա փողոցներում: Ինչպես
յերևում է, ինչ ուզում է լինի, ուզում են քեզ վոր-
սալ՝ և ստեղծել հազվադեպ պրոցեսս—հարյուր յերկու
հողվածի համաձայն: Իսկ դրանից, անպակր ջան, տա-
ժանակիր աշխատանքի հոտ է գալիս:

—Հը՛, թե գտար՝ բռնի:

Հիմի նա քաղաքում աշխատել չի կարող: Համե-
նայն դեպս առաջիկա ժամանակները:

Ուստի և նա ապսպրանք է վերցնում զավատի համար և գնում է այնտեղ յերկար ժամանակով:

Բայց առաջի գործը—պետք է նոր պասպորտ: Նախկին մարդը մեռավ: Ծնվում է նորը...

Նա վերջնականապես անցնում է զաղտնի գործունեյության:

Այնտեղ, զավառակում, ուր ինքն ուսուցիչ էր՝ մի ծանոթ գրագիր կա:

Նա գնում է նրա մոտ:

—Փախած եմ, սխալեր ջան, մտադ մի թղթե ծախու հոգի չկամ:

—Ինչ վոր չլինի, եդ բարեփից շատ ունեմ: Կարող ես ընտրել: Քանի տարեկան է պետք քեզ:

—Այնպեսը վոր զինվորությունից ազատի:

—Ե՞, ասել է 35—40 տարեկան: Կըզտնենք:

Առնում է պասպորտային մատյանները, փընտռում է զավառից հեռացած մի գյուղացու, նրա անունով մի պասպորտ է գրում և հանձնում է մեր տղային:

—Միտդ պահի, մի անգամ վրիպեցին, բայց յերկրորդ անգամ հազիվ թե դա կրկնվի:

—Յես առաջին անգամը չեմ:

—Դե, տես Միրուք թող, թե չե տարիքիդ չեն հավատա:

Հիմի նրա զրպանում դարձյալ թղթե հոգի կա: Նա որինավոր քաղաքացի չէ:

—Բռնիր՝ թե գտնես:

34. Հ Ե Տ Ք Ե Ր Ո Վ Ը

Ժանդարմերիան ուղղակի կատաղեց. ձեռներն եր ու այդ հիմարաբար բաց թողին մեր տղային:

Մեծ գործի յեւ հոտ եր գալիս. նրան կարող ե- յին կապել՝ լատիշական յերկրի կենդրոնական կոմի- տեյի անդամի, Ռիգայի կոմիտեյի անդամի և կենդ- րոնական կոմիտեյի պրոպագանդիստ—ազիտատորի գործի հետ:

Անհրաժեշտ է վորսալ նրան:

Ինչ ուզում ե՞ լինի:

Նրա լուսանկարներն ուղարկվում են բոլոր գա- վառները. ժանդարմերիան պրովոկատորների միջոցով գիտե, թե սովորաբար ուր են ապաստանում անհաշո- դության հանդիպած աշխատավորները:

Բայց նրա ինչ գործն է: Գրպանում պասպորտ ունի, առաջվա ածիլված յերեսին միրուք է բնում: Շուտով նա բոլորովին անճանաչելի կըդառնա:

Նա հիմա մշտական տեղափոխություններ է կա- տարում: Նա դարձյալ սոցիալիզմի առաքյալ է: Այ- սոր նա խոսում է մշակների գիշերային հավաքույ- թում, վաղը սարքում է թուուցիկ միտինգ յեկեղեցու մոտ կամ շուկայում, իսկ հետեյալ որը նստած է ան- տառում, խոտի մարաքում և զրույց է անում մարք- սիստական խմբակում սոցիալիստական կազմի մասին:

Նրան դուր է գալիս այդ աշխատանքը: Նա այս- տեղ հասարակ ազիտատոր և պրոպագանդիստ չէ, նա թե կազմակերպիչ է և թե տեխնիքական գործադրող: Նա ինքն է գրում կոչերը, ինքն տպում հեկտոգրա-

Ֆոփ, ինքն ե պատրաստում և հեկտոգրաֆը և ինքն ել մասնակցում ե կոչերը տարածելուն:

Այդ ամենը հենց նրա սրտովն ե. նա անգործ չի կարող մնալ վոչ մի րոպե:

Նրա ամենասիրելի արարքը—գյուղական յերեկույթներում—պարահանդեսներում թուուցիկ միտինգներ սարքելն ե:

Հենց վոր իմանում ե թե մի վորեք տեղ պարահանդես կա, վերցնում ե հետը յերկու զինված մարդ ու սլանում ե այնտեղ: Մեկը մնում ե բակում հսկելու, մյուսը կանգնում ե դռան մոտ, իսկ յերրորդն անցնում ե պարողների միջով և ձայն ե տալիս.

—Ընկերներ, մի րոպե ուշադրության:

Հյուրերը թյուրիմացության մեջ են. մտածում են—գուցե յերիտասարդը չարածնություն ե անում. հետո հասկանում են և վորը վախից, վորն ուշադրությունից սառած մնում են: Իսկ նա արագախոսությամբ հատ-հատ արտասանում ե.

—Պարեցիք՝ հիմի յել ինձ լսեցեք: Ուրախությունը լավ բան ե, բայց միայն ուրախանալով բան դուրս չի գա: Միթե յերկար ժամանակ ազատ մարդիկ եյիք, վոր հիմի յել կրկին կազակի նագայկան յեկավ ձեր մեջքը ծոց: Արդյոք կա՞ ձեր մեջ մի միամիտ մարդ, վոր չի ուզում իր մեջքը դրստել: Այդպիսիները չկան: Ուրեմն իմացեք. վոչ վոք այդ բանը չի անի ձեզ համար: Բանվոր դասակարգի ազատության գործն իրենց, բանվորների գործն ե: Կազակերպիցեք, միացեք, սրեցեք ձեր միտքն ու զենքը և նոր պատերազմ հայտարարեցեք բուրժուազիային...

Այսպես խոսում ե նա կես ժամ: Ավելին մնալը

վտանգավոր ե. մեկը կարող ե ստրածնիկներին իմաց տալ:

Յեւ վերջացնում ե.

Ուրախացեք, դա խորթ չե մարդկային բնավորության: Մենք, սոցիալիստներս ել կուվում ենք ավելի լավ, ուրախ ապագայի համար. բայց մի մոռանաք սպանված ընկերների գերեզմանների վրա տված յերգումը.—մենք կըհանենք ձեր մահվան վրեժը և կը վերջացնենք ձեր սկսած գործը:

Հյուրերը դեռ ուշքի չեյին յեկել, վոր նա արդեն կորավ դռան միջով, իսկ դուրսը—հետքը կորավ:

—Բռնեցեք դրան, —ձայն ե տալիս յերբեմն մի մոխրագույն բարոն: Բայց նրա ձայնը մենակ ե՞ մըշակները սոցիալիստների հետ դաշինք ունեն և թագցընում են նրա հետքը՝ ինչ ուզում ե լինի:

Այստեղ կըզրգուի, այնտեղ կըզրգուի և աչքից կը կորչի ուրիշ գավառում:

Ուրյադնիկներն անհաջող հետապնդում են նրան: Բայց ահա և մի անսպասելի հանդիպում. նա մտնում ե մագազին, գործակատարի մոտ, վորին պիտի ներկայանա, և հանկարծ—ուրյադնիկը: Նա տախտակորմի հետևն ե, խանութի կառավարիչի սենյակում, ուրյադնիկը—մագազինում:

Իսկ պատի արանքից լսվում ե նրա ձայնը.—ես պիտի մի կտրիճի այստեղ չէք հանդիպել: Յեւ գործակատարի հետ խոսակցություն ե սկսվում: Հետևի մուտքից նետի պես ներս ե թռչում գործակատարի յերբայրը:

—Թագնվեցեք շուտով. ուրյադնիկը այնտեղ ե ձեր լուսանկարով:

Այ թե ինչ...

Բայց ուր գնամ: Յես այստեղ շրջակայքը չգիտեմ:

— Մտեք փողոցի դիմացի գարեջրատունը: Իսկ
յես կը վազեմ, կիմացնեմ թե ուրյաղնիկը ուր է գնալու:
Նա գարեջրատանն է:

Գնում եմ մի շիշ գարեջուր և նստում եմ անկյունում:
Բայց ի՞նչ խելք է այստեղ նստելը: Լավ չի՞ դաշ-
տում մի վորեւե տեղ:

Ուրյաղնիկը գարեջրատունը աչքից բաց չի թողնի:

Դա նրանից չե:

Միայն հիմի յե հասկանում իր վարմունքի բո-
լոր հիմարությունը:

Դավաճանությունն չէ՞ արդյոք գործակատարի
կողմից: Ո՞վ է իմանում նրան:

Թագնավի՞... բայց հանկարծ ճանապարհին ուրյաղ-
նիկին հանդիպի:

Միևնույնն է, կորա, կորա: Կը գնա:

Վեր է կենում, վոր գնա, հանկարծ քայլեր են
լսվում:

Ուրյաղնիկն է:

Հավի պես փրավն ընկավ: Յեվ ի՞նչ հիմար կեր-
պով: Հիմար կերպով:

Նա փորձում է մի կերպ դիմակավորվել, յերեսը
բաժակով ծածկել:

Բայց... ուրյաղնիկը առաջ է անցնում և չորս
կողմ չնայելով դուրս է գալիս հետևի դռնով
բակը, ձիու մոտ: Պարզ է. ուր վոր շտապում է: Գու-
ցե հետապնդելով...

Նա վեր է կենում և գնում է դեպի գլխավոր
մուտքը, վոր փախչի: Գործակատարը դեմն է յեղնում:

— Փախեք շուտով անտառ: Յես ուրյաղնիկին
խաբեցի, թե այդ լուսանկարին նմանող մի մարդ, մի
ժամ առաջ անց կացալ պարոմով: Բայց արդյոք կը հա-
վատա՞...

— Գնում եմ:

— Իուրս քեզ կը տանի անտառ խոտի մարագը:
Այնտեղ սպասեցեք մինչև յերեկո: Մենք կը գանք
հավաքույթի:

Նա կրկին մարագի մեջ է:

Ահա թե ինչու մնա երանը — սկսվեց հետապնդումը:

Դե, թող պար գան. նա այնքան էլ հեշտ վոր-
սալունն չե: Վաղը նա արդեն ուրիշ գավառում կը լինի:
Գնում է այնտեղ:

Բայց այնտեղ էլ իրարանցում է: Ուրյաղնիկը
շրջում է լուսանկարով:

Նա գնում է յերրորդ գավառը, այնտեղ ավելի
վատ, ստրաժնիկները հսկում են ճանապարհին, նրանց
ձեռներին ևս տեսել են նրա լուսանկարը:

Ասել է՝ հեռքը գտել են:

Ե, ի՞նչ կա, կարելի յե գյուղի տեղ ելի քաղաքն
ընտրել:

Դա յերբեմն ոգնում է: Վոստիկանության մտքո-
վըն էլ չի անցնի, վոր նա կը վճռի այդպիսի հուսահատ
քայլ անելու: Իսկ նա դրանից ոգավում է:

Մտածում է ու անում, մի որից հետո նա արդեն
քաղաքումն է:

Յեվ դարձյալ ամեն բան հաջող է ընթանում:

Նա նոր և իսկական պասպորտ ունի և վոչ թե
կեղծ:

Կը գըվի մի տան վրա ու քեֆ անելով կապրի: Ի
հարկե:

Դարձյալ իր հին բարեկամը—խառատի ոգնա-
կանը նրա համար տեղ սարքեց ծանոթ բանվորի և
հիմի նա այնտեղ է ապրում, վոնց վոր ուղտի ա-
կանջում:

Յերեկը հանգստի համար է, իսկ գիշերը՝ գործի:
Հիմի այսպես է նրա կանոնը: Յեթե վոն՝ ցերեկ-
վա լույսին կարող են նրան ճանաչել:

Լնով բան էս, քաղնք: Քո մեջ լինել ասել է տայ-
գայում լինել. միքանի ծառեր ծածկում են ամբողջ
անտառը:

35. ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆ- ԴԵՍ Ե ԴՈՒՐՍ ԳԱԼԻՍ

Անցել է յոթը տարի, վոր նա առաջին անգամ
այդ քաղաքում ծանոթացավ սոցիալիստների հետ:

Այն ժամանակ յերկաթուղու կամրջի մոտ յեղած
գնդակահարման որը, հունվարի 13-ին, այնպես թվաց,
թե սոցիալիստները շատ են:

Բայց նա բոլոր ցուցարարներին սոցիալիստների
տեղ ընդունեց: Իսկապես նրանք շատ չեյին: Այդ ար-
գեն նա հետո իմացավ խառատի ոգնականից:

Բայց հիմի այդ յեոթը տարվա ընթացքում լա-
տիշական յերկրի սոցիալ-դեմոկրատիան անճանաչելի
կերպով աճեց:

1906 թվի պատժիչ արշավանքները կոտորեցին
կուսակցության հիմնական կազրը, իսկ հիմա նրանք
կրկին լրացրած են ավելի հաստատ սոցիալիստներով,
քան այն ժամանակ:

Ուղղակի հրաշքներ են:

Կարծես կուսակցությունը հրաշալի հսկա յե,
վորի մի կտրած գլխի տեղ բսնում է տասը նոր գը-
լուխներ:

Ահա նա հիմի ապրում է թագստոցում և իր աչ-
քերով դիտում է այդ կյանքի և մահի համար մղվող
պայքարին:

Յերկրորդ ոայոնում յերկու ամսվա ընթացքում
ձերբակալվեցին ոայոնական կոմիտեաների համարյա
լրիվ յերկու կազմը: Բայց չանցավ և մի շաբաթ, անտ
ոայոնը ունի նոր կոմիտե:

Ամեն ամիս ձերբակալվում են հարյուրավոր ան-
դամներ, բայց կազմակերպությունը թվով աճում է:

Բանվորական մասսաների միջից դուրս է գալիս
նոր հոսանք, վոր լրացնում և մեծացնում է կուսակ-
ցության կարողությունը:

Առաջավոր մարտիկ բառալիոնները զորասյունե-
րով են գնում ցարական ամրոցը շտուրմի յենթար-
կելու: Նրանց սրբում է թշնամու կրակը: Բայց նրանց
հետևից ավելի աճում և գնում են նույն քայլվածքով
նոր կովող կադրեր, կարծես թե դա վոչինչ բան է:

Ընկած ընկերների դիակների վրայով նրանք
բարձրանում են ամրոցի պատները: Հարյուրավորնե-
րը, հազարավորները ընկնում են, իսկ նրանց յետե-
վից ավելի և ավելի աճում և գնում են նոր կովողնե-
րի հարյուր հազարավոր կադրեր, վորոնք սկսած գոր-
ծը կըհասցնեն վախճանի:

Այդպես եր պատկերանում նրա առջև պայքարը,
յերբ նա քիչ եր ծանոթ թագստոցի գործունեյության:
Հիմի նա տեսնում է, վոր դա իսկապես այդպես է:

Այ, որինակ՝ վերցնենք նրա տնկից ընկերովը,

վոր գրականության հետ միասին ձերբակալված ե։
Չէ վոր նա մինչև հոմիտեյի անդամության ու անլե-
գալ գրականության եքսպելիտորի պարտականու-
թյունների հանձնառու լինելը գիտեր, վոր նրան ըս-
պառնում է ցարական քրեական որենսգրքի 102-րդ
հոդվածը, այսինքն՝ տաժանակիր աշխատանք կամ
աքսոր։

Բայց նա գնաց այդ գործը կատարելու առանց
մտածելու։

Յեվ նա ուներ ծեր մայր, յերիտասարդ կին և
յերեխաներ։

Չէ վոր նա գիտեր, թե անհաջողության դեպքում
ինչ վիճակի յե մատնում իր ընտանիքը։

Բայց այնուամենայնիվ հաստատ գնաց ընտրած
ճամբով։

Հասավ նրա հերթը։ Նրան ուղարկեցին աքսոր,
մայրը խելագարվեց, իսկ կինը մնաց յերկու փոքրիկ
յերեխաները գրկին...

Ահա այդ կատարվեց նրա աչքին...

Բայց մի՞թե դա միակ դեպքն էր։ Վոչ, ամեն
քայլափոխի կըհանդիպես այդպիսի դեպքերի։

Դուք այնպես եք կարծում, վոր դա ուրիշներին
վախեցնում էր։

Ընդհակառակը՝ մինչ այդ անտարբեր բանվոր-
ները գալիս եյին նրա մոտ և խնդրում եյին գրել
կուսակցության մեջ. նրանք այդ այդպես չեն թողնիլ։

Այդ յերկզկիսանի արծիվը անհրաժեշտ է վոչնչա-
ցընել։

Ահա թե ինչպես է բանվոր մասսան։

Վոչ, բանը գնում էր դեպի նոր ապստամբու-

թյուն։ Այդ նա հիմա զգում էր ամեն քայլափոխի։
Մարտիկների շարքերն աճում եյին որեցոր։ Թագըս-
տոցը կուսակցության համար նեղ դարձավ։ Անհրա-
ժեշտ է գտնել նոր կազմակերպության ձև։

Ի՞նչպիսի։

Լեզալ։

Պետք է ընդլայնել արհեստակցական միություն-
ների գործունեությունը։

Պետք է նրանց պաշտոնական ատյանը դարձնել
կուսակցական։ Պետք է նվաճել նրանց։

Բայց արհեստակցական միությունները որենքով
գրավում են վորոշ խնդիրներով, վորոնցից դուրս
վոստիկանը թույլ չի տալիս խոսելու։

Ուստի և բանվորները հնար են գտնում կազմա-
կերպել դանազան կուլտուր—լուսավորության ընկե-
րություններ։

Ինչ վոր չի տեղավորում իր մեջ թագստոցը, այն
գործադրություն է գտնում այստեղ։

Այստեղ ունկնդիրների թիվն էլ շատ է։ Թագստո-
ցում քեզ տասնյակներն են լսում, այստեղ հազարա-
վորները։ Ամեն բանվորի չես կարող գրավել թագըս-
տոց, այստեղ նա սիրով է գնում։

Յեվ ահա թագստոցը դուրս է գալիս հրապարակ։
Թագստոցը իր մեջ չի տեղավորում արդեն մի կարող
կուսակցություն։

Բայց կուսակցությունն իր որենքներն ունի. մի
հրապարտվեր լեզալ հնարավորություններով. Ով նշա-
նակված է թագստոցի աշխատանքի՝ իրավունք չունի
մասնակցելու արհեստակցական միությունների և կուլ-
տուրական ընկերությունների մեջ. դա պետք է թագըս-

տոցի համար, իսկ բացարձակ հանդես գալը բաց է անում քո իսկական դեմքը:

Մեր տղան թագստոցում աշխատողի թվումն է: Ուստի և նա յերբեք չի հաճախում բաց ժողովներին: Նրա գործը հարմարվում է թագստոցի խմբակներին, կուսակցական կոնֆերենցիաներին ներկա լինելու և գրել կուսակցական թերթերում:

Նա խլցւորդի պես նստած է իր բնում: Միայն գիշերն է փողոց դուրս գալիս:

Իսկ շուրջը կյանքը յեռում է: Թագավորող դասակարգի վտտի տակ հողը տատանվում է: Կոմմունիզմի ուրվականը դարձյալ յերևաց:

Տեղներդ պի՛նդ կացեք, դահիճներ:

Թագստոցը հանդես է դուրս գալիս:

36. ՓԱԽՈՒՍ

Մեր տղան չղջիկի պես իր տեղից միայն գիշերն է պոկվում:

Բայց այդ ել անհաջողությունից չի փրկի:

Կուսակցության մարմնի վրա յերևաց նոր խոց-պրովակատորությունը:

Ընտանիքը առանց արատավորի չէ:

Պատահում էր մինչև հիմա յեւ վոր միքանի ընկերներ, հարցուփորձի ժամանակ խոշտանգվելով չդիմացան և սխեցին կուսակցական գաղտնիքները դուրս տալ: Յեղան, թեև հազվադեպ, այնպիսիներ, վորոնց գրավեց ժանդարմերիայի առաջարկած հարուստ աշխատավարձը:

Այդ ամենը յեղել է:

Բայց դա հասարակ բան է այն խոցի համար, վոր հայտնվեց հիմա:

— Աշխատիր մտնել կուսակցության մեջ, ձեռքեր սոցիալիստ, ակտիվություն ցույց տուր, միայն մեր թույլությամբ, և կուսակցությունը մեր ձեռքում կըլինի—ասում է ժանդարմական սպան իր գոհին կամ համախոսին:

Յեվ նրանք, այդ ստոր մարդիկ են: Նախ՝ կուստուրական ընկերության մեջ: Այստեղ նրանք ամենից ձախ են, իսկ ապա և խմբակում:

Այստեղ նրանք ամենագործունյաներն են:

Ամենքը նրանց վրա ուշադրություն են դարձնում: Նրանք առաջի պլանն են առաջանում: Հիմա նրանց առջև բացվում է կադմակերպության բարձր աստիճանի ճամբան:

Ամենքը նրանց հավատում են, գնահատում են:

Յեվ հանկարծ—դուրս է գալիս, վոր նրանք վտտիկանության պատվերով դավաճաններ են:

Այո, այդ խոցը հիմա մեծացել է:

Մի անհաջողության հետևում է մյուս անհաջողությունը: Հիմի ժոտենում է և նրա հերթը:

Պրովակատոր հայտնվեց ամենասերտ ընկերական շրջանում:

Ուրեմն ի՞նչ, թքի՞ այդ ամենի վրա: Մնա՞ իր տեղում:

Հույս դնի, թե ելի՞ կըհաջողվի, ինչպես միշտ: Ռի՞սկ անի:

Մին ել տեսար՝ դեռ պրովակատոր ել կըհամարեն...

Բայց անհաջողության ել կըհանդիպես ու տա՜ ժանակիր աշխատանքը համեցեք կանեն:

Վոչ, պետք է հեռանալ: Այդ վճռած է:

Նրան խորհուրդ են տալիս արտասահման գնալ: Բայց դա նշանակում է բոլորովին կտրվել սկսած գործից, յերկար ժամանած ձգել ընտելացած ու անհրաժեշտ գործը:

Վոչ, նա այդ բանին ընդունակ չէ: Ո՞վ պիտի գործը կատարի:

Նա կըզնա Ռուսաստանի խորքը, մի վորևե տեղ: Այնտեղ նրան սատանան էլ չի գտնի և նա կրկին կարող է իր գործը շարունակել: Ընդհատ է, նրան այնտեղ սպասում է նոր շրջան, այնտեղի կազմակերպուլթյան հետ նա կապված չէ: Բայց միթե նրա հետ դժվար է կապ ունենալը:

Յեվ ինչո՞ւ համար նա իսկապես խրվել է այդ Մերձբալթյան նահանգների գործի մեջ: Ռուսաստանը մեծ է: Այնտեղ նա ավելի յե պետք, քան այստեղ:

Վճռված է: Նա գնում է:

Բայց դա այնքան էլ հեշտ չէ:

Նրա լուսանկարը բոլոր լրտեսների մոտ կա: Իսկ կայարանները նրանցով լիվ լեցուն են: Նա ընտրում է գիշերային գնացքը: Հագնվում է շրջակա գյուղացիների նման: Սիգար է վերցնում, վորպեսզի դեմքը թագցնի, զրպանը կոխում է զանազան շեր ու գնում է կայարան:

Նրան ուղեկցում է բանվորի կինը և տանտիկնոջ աղջիկը, վոր այն տպավորությունն ստացվի, թե ընտանիքը ամուսնուն ճամբու է գնում:

Տոմսակը սկզբից է գնված նրա համար: Նա գընում է ուղղակի վագոն, բռնում է պլացկարտով տեղը և տեղավորվում է վերին դարակում յերբորդ կարգի բոլոր հարմարություններով:

Բայց ի՞նչ են այդ կանայք կանգնել պատուհանները մոտ: Մինը մինչև անգամ նոթերը կխել է: Ինչպես էլ գլխի չեն ընկնում... Հենց հիմա վոր ուշադրություն կըզարձնեն այս վագոնի վրա:

Այդպես էլ է:

Վագոն է վագում մի աղվեսի ուխտ, պսպստացող աչքերով և նստում է նրա դեմ: Լրտեսը մի վերստից յերևում է, իսկ այս ուխտի վերաբերյալ մարդ միթե կըսխալվի:

Մոտենում է կանդուկտորը և տոմսակ է պահանջում այդ մարդուց: Սա ցույց է տալիս ձրի տոմսակը լուսանկարով:

Ե՛, այդպես էլ է. լրտես է:

Հիմի վո՞նց պիտի լինի բանը. ելի՞ հաշվենք կորավ-գնաց:

Յեթե լրտեսը նրան տեղնուտեղը կըճանաչի, ասել է՝ նա ձերբակալությունից չի խուսափի, իսկ յեթե նա միտքը դրել է հսկել նրա ճամբան, վոր միանգամից հետևի նաև մյուսներին՝ ապա փրկություն կա. կարելի յե գնացքի ժամանակ վար թռչել:

Պետք է սպասել...

Լրտեսը իր համար սարքվում է հարևան բաժանմունքում պատուհանի մոտ և պառկում է դուխը նրա կողմը: Պարզ է—վճռել է ուղղեկցել, վորպեսզի հետևի կազմակերպուլթյան:

Նա գլխի չի ընկնում, վոր մեր տղան Ռուսաստանի խորքն է գնում: Չի՞ վոր առաջի անգամը չէ, վոր նա այդ ճամբով գնում էր այցելելու գավառական կազմակերպուլթյուններին և հիմա, անշուշտ դարձյալ այնտեղ է գնում:

Ահա թե ինչո՞ւ նրան միանգամից չձերբակալեցին: Ժանդարմերիան ուզում է կռունկ բռնել յերկընքում:— Զգու՛յշ, վոր ձեռներիդ ճախահավը բաց չըթողնեք:

Մի բան պարզ է.

— Պետք է փախչել: Պետք է ոգտվել գնացքի դանդաղեցումից մի վորևե պտույտում և ցած թռչել...

Դուրսը մութ գիշեր է, թագնվելը դատարկ բան է: Բայց իրե՛րը: Իրե՛րն ինչ անի: Հենց այնպես թողնի վագոնում: Չե՛ վոր ունեցած-չունեցածը դա յե: Առանց մի բանի մնա ձմեռվա կեսին ոտար յերկրում՝ խելացի բան չէ:

Վոչ, իրերը նա չի թողնի:

Բայց այդ դեպքում ի՞նչ անի: Իրերը ձեռիդ չես կարող վայր թռչել:

Բայց մի՞թե իրերը ազատությունից թանգ են:

Մի՞թե:

Ինչացո՞ւ յեն այդ հարցերը. նա մնում է: Ափսոսաց, ինչպես Տարաս Բուլբան իր ծխամուրճը:

Դե հիմի ասեք՝ գիժ չե՛:

Վոչ, վոչ-բոլորովին: Նրա գլխում մի ուրիշ ծրագիր հասունացավ:

Բավական է միայն դեն գցի վրայից գյուղացու շորը, խուզի միրուքը, գլխի սարքը փոխի՝ այն ժամանակ սատանան ել բազմության մեջ նրան չի ճանաչի: Պետք է ոգտվել լրտեսի ննջելուց, դուրս թռչել հանգուցավոր կայարանում, գնել նոր տոմսակ և պարզապես նստել նոր վագոնում:

Գաղափար է:

Նա անցնում է այդ բանի իրագործելուն:

Կամացուկ հանում է ամելին և թագցնում է գլրպանում: Ցած է թողնում մորթե գլխարկի ականջները և միայն պիջակով դուրս է գալիս վոտաց ճանապարհը:

Լրտեսը նիրհում է: Գնացքի ժամանակ նա առհասարակ նիրհում է և վեր է կենում միայն գնացքի կանգնած ժամանակը, վոր իր դոճին բաց չթողնի: Վոտաց ճանապարհին մեր տղան վեր է անում միրուքն ու բխերը, և գլխարկը լավ աչքերին քաշելով վերադառնում է իր տեղը: Վեր է կենում դարակը և սավերի մեջ մնում:

Գրպանում համենայն դեպս մի կեպի ել ունի, վոր փափախի տեղ գլխին գնի, խսկ գլխատուկին դըրել է վերարկուն: Յեթե հաջողեցնի շորափոխությունը նա փրկված է:

Բայց վերարկուն կեպի չէ. գրպանում չես կարող թագցնել, յեթե հագնես, լրտեսը կըտեսնի:

Բայց մի բան պետք է մտածել: Արդյոք չի՞ կարելի վերարկուն թաշկինակի մեջ փաթաթել, կամացուկ նետել հարևան բաժանմունքը և վոտաց ճանապարհ գնալիս վերցնել:

Ականջ է դնում. հարևան բաժանմունքում բոլորը քնած են: Վագոնը անաստված կերպով թխթխկում է: Լրտեսը նիրհում է: Վոչ վոք ուշադրություն չի դարձնի վայր ընկնող կապոցի վրա:

Նա վերցնում է վերարկուն և դնում է հարևան բաժանունքի վերին դարակում քնած ճանապարհորդի վոտների մոտ:

Արդյոք լրտեսը չտեսնի:

Վոչ, նա փախցնում եր քունը:

Վոտով մի հարված, և կապոցը թռչում, ընկնում է հարեան բաժանմունքի հատակի վրա:

Լրտեսի աչքերը բացվեց: Նկատեց: Հիմի ամեն բան կորավ: Վոչ, նա կրկին ներհում է:

Մինչև հանգուցավոր կայարանը յերկու անգամ է գնացքը կանգնում: Այստեղ փոխվում են հերթապահ լրտեսները: Դա փորձով գիտե: Ուստի և կայարանը նրանցով յետում է:

Ռիսկ անի՞:

Միևնույն է, դրանից դենը նրան չեն թողնի: Բայց վհնց իմանաս: Մի անգամ վոր թողել են ուղեկցելու—կարող են ուղեկցել մինչև վերջ:

Նա ռիսկ կանի, հիմի արդեն փախուստը մինչև առավոտ հետաձգել չի կարելի: Որվա լույսով իսկույն կընկատեն կերպարանափոխութունը: Այն ժամանակ ամեն ինչ կորած է:

Ե, ինչ կըլինի՞ կըլինի: Նա ռիսկ կանի:

Ահա անցան վերջին կայարանը: Մինչև հանգուցավոր կայարանը 20 վերստ կա: Հիմի նա լարված նայում է ժամացույցին: Գնացքի հասնելուն տասը րոպե մնացած. նա ցույց է տալիս, թե գնում է վոտաց-ճանապահ:

Արդյոք լրտեսը նկատեց:

Նկատեց:

Բայց իրերը մնում են իրենց տեղը, ուստի լրտեսը հանգստանում է և նույնպես մնում է իր նստարանի վրա:

Իսկ նա զնալիս վերցնում է հետը վայր գցած վերարկուն, փափախի տեղ դնում և կեպին և դուրս է գալիս դռան մոտ: Անցնում է մյուս վագոնը, նրանից

ել հետևյալը և մտնում է դարձյալ վոտաց ճանապահ:

Նա այստեղ կըմնա մինչև գնացքի կանգ առնելը:

Ահա և կայարանը:

Նա իջնում է, բեռնակիր է վերցնում:

—Վագոնի համար 1645, 9-րդ տեղ. դուրս բերեք իրերը՝ մի չեմոդան է և անկողին, մուշտակ, յես կըլինեմ կասսայի մոտ:

Բայց հանկարծ նա հիշում է, վոր լրտեսը կարող է հսկել նրա իրերի վրա: Անհրաժեշտ է, վոր նա դուս թռչի վագոնից նրան վորոհելու:—Բեռնակիր,—նա ուզում է սրան պահել մինչև լրտեսին տեսնելը:

—Յես ուզում եմ տեղս փոխել յերկրորդ կարգը: Գնեցեք ինձ համար տոմսակ, իսկ հետո իրերս տեղափոխեք: Յես կը լինեմ բուֆետում:

—Լսում եմ:

Բայց լրտեսը չի յերեւում: Պետք է, վոր մեր տղան բեռնակիրն պահի մի կերպ:

—Ձեր համարը: Լսում եք, ձեր համարը:

—Քսան:

Ահա և լրտեսը: Նա ուղղակի գլուխը կորցրել է և սլանում բազմության միջից:

—Լավ, գնացեք:—Նա բաց է թողնում բեռնակիրին:

Լրտեսը վագում է դեպի տոմսակների կասսան: Ձի գտնում: Վագում է ճանապարհորդների միջից. չի գտնում:

Բայց նա անա խորհուրդ է անում ուրիշների հետ... Բուրիին իրար անցան. հիմի լռիանությունը ցույց կըրա նրան...

Նա ուզում է իմանալ թե ինչ են խոսում այն-
տեղ: Մոտենում է նրանց:

Ի՞նչպես, լրտեսներին:

Յեզիլին՝ վոչ: Մի՞թե նա ճանաչելի յե: Ձե, վոր
նա հագուտը փոխել է: Մոտենում է: Պարզ լավում է,
թե ինչպես տեղական լրտեսները հայհոյում են ուղեկ-
ցողին:

— Ախր ի՞նչ իշություն արիր, իրերը թողիր:

Հսկիր նրանց մոտ:

— Յեզիլ, գուցե նա վոչ մի տեղ էլ չի ծլկել: Գու-
ցե պարզապես վոտաց ճանապարհունն է: Գնանք իրերի
մոտ:

Ահա թե նրանք վոնց են: Գլխի ընկան: Իսկ ուր
է հիմա բեռնակիրը: Կարողացավ արդոք իրերը վեր-
ցընել: Հանկարծ նրան կըռնեն:

Հիմի միենույն է: Նա կըգա բուֆետ և կըսպասի:
Դուան մոտ հանալիպում է բեռնակիրին:

— Ահա բերի աղա:

— Շնորհալի եմ: Ահա այս էլ քո աշխատանքի
համար:

— Վոր կուպեյում է:

— Յույց կըտամ:

Հինգ բուպեյից հետո նա արդեն սարքվեց յերկ-
րորդ կարգի կուպեյում, հանվեց և պառկեց վերմակի
տակ...

Թող լրտեսները հսկեն նրա իրերի մոտ, յեթե
գտնեն:

Այսպես խարեց նրանց:

Ի՞նչ կուզե լինի, սարսաղ են այդ լրտեսները:

Դե, հիմի թող գնան փնտրեն՝ թե գտնեն:

Իսկ այդ բոլոր ծառայութեան համար անհրա-
ժեշտ է շնորհակալություն հայտնել ժանդարմի գնդա-
պետից:

Նախաճաշից հետո նա մի նամակ է թխում ժան-
դարմերիայի վրա.

— Շատ յերախտապարտ եմ այն ուշադրութեան հա-
մար, վոր ցույց ավիք ինձ: Ձեր մարդիկ ինձ ուղեկ-
ցեցին մինչև Դվինսկ, ոգնեցին սարքվելու յերկրորդ
կարգում և յես առանց կանգ առնելու հենց նույն
գնացքով առաջ գնացի: Ասել են՝ առուսուր, չեն ասել՝
առուկուր: Կարող եք հավատացած լինել, վոր ապագա
հեղափոխութեան ժամանակ ձեր աշխատանքները հար-
յուրապատիկ կըվարձատրվեն:

Ձեր հսկողութեան տակ՝ Յերկար:

Գցեց նամակը, դեմից յեկող գնացքի պոստարկը
և սկսեց սուրի կամարինսկի:

— Այստա վոր չեմ տեսնի, թե ինչպես կատարու-
թյունից ժանդարմի սպայի յերեսը պիտի կապտի:

Մնաք բարով, Ռիզայի ժանդարմներ:

Մնաք բարով, լրտեսներ:

Դուք ինձ մեծ պատիվ արիք՝ ձեր տեղավորելով
ձեր բոլոր ռեգիստրացիոն մատյաններում իմ լուսա-
նկարը:

Գյուղական հովվին դուք բարձրացրիք մինչև հա-
մաշխարհային մեծութեան:

37. ՄԵՆՔ ԴԱՐՁՅԱԼ ԿԸԿՌՎԵՆՔ

Այո, գյուղական հովիվը սոցիալ-դեմոկրատ դարձաւ:

Դրանում ծառայութիւնն է մատուցել խառատի ոգնականը, վոր նրան տվեց սոցիալիզմի մասին առաջին հասկացողութիւնը, բայց ավելի մեծ է ժանդարմերիայի ծառայութիւնը:

Այն խտուրթիւնը, այն տմարդութիւնը, այն հեզնանքը մարդու վրա, վոր նրանք ցույց տվին, — նրան հեղափոխական դարձրին մինչև ծուծը:

Գործատուների ատելութիւնը նա դեռ ստրուկ մոր կաթի հետ է ծծել, իսկ իշխանութիւն խորամանկ մեքենայութիւն հանդեսը նրա աչքը բաց արեց խառատի ոգնականը, իսկ այդ վճռականութիւնը՝ վերջացնել այդ մեքենայութիւնը և աշխարհը վտտից մինչև գլուխը շուռ տալը նա ձեռք բերեց իր կյանքի ճամբին, և այդ վճռականութիւնը մտաւ նրա արյան և ուղեղի մեջ և վոչ մի կարիճի ոգնութիւնը այդ մարդուն մինչև անգամ ժանդարմերիան չի կարող ուղղել:

Նա ուխտեց վերջ տալ այդ կամայականութիւններին կամ մեռնել:

Յե՛վ նա այդ կըկատարի:

Նրա համար գոյութիւն չունի անձնական կյանք: Նա ամբողջովին բռնված է այս աշխարհը կերպարանափոխելու մի ձգտումով, նրա բռնադատութիւն հասարակակազմից դարձնել անհրաժեշտութիւն թագավորութիւն, սոցիալիզմի թագավորութիւն:

— Կապիտալիստական ստրկութիւնից — ազատու-

թիւն թագավորութիւն, բուրժուազիայի արյունալի ռեժիմից — պրոլետարիատի դիկտատուրա, պրոլետարիատի դիկտատուրայից — վերջ տալ դասակարգային հասարակութիւնը և հաստատել կոմունիստական հասարակարգ, — ահա մեր ուղին:

— Ով այդ ճամբան վտտ է դրել իր գործի արդարութիւն լիակատար գիտակցութիւնը, նրա համար նահանջ չկա:

Նին նավերը նա այրեց իր յետևում, մնաց միայն իր առջևի ճանապարհը: Նա շատ հաճախ պահանջում է անձնական կյանքից հրաժարում, հրամցնում է զրկանքներ, հետապնդումներ, չարչարանքներ, բանտեր, աքսոր, տաժանակիր աշխատանք, գնդակահարում, կախաղան... Բայց այդ ամենը մեզ չի վախեցնում: Կընկնեն առաջին զորամասերը, կըվոչնչանան յերկրորդները, բայց մեր բացած ճեղքերից ներս կը սպրդեն կովոզների նոր կազմեր և կըտիրեն կապիտալիստական ամբողջին:

Այդպես է պատմական անհրաժեշտութիւնը, վոր վորոշում է մեր ուղին:

Յեթե դա քեզ չի վախեցնում, յեթե դու կարող ես կապերդ խզել ընտանիքիդ հետ, հին աշխարհի հետ, արի, աշխատենք ձեռք-ձեռքի տված և միասին բաժանենք ցավն ու խնդրութիւնը: Դու կըկորցնես հին բախտավորութիւնը, յեթե նա ընդհանրապես գոյութիւն ունի, և ձեռք կըբերես նոր բախտավորութիւն:

Առանց անձնական կյանքը ամբողջի հետ համաձայնեցնելուն չկա և չի կարող լինել վոչ մի բախտավորութիւն:

Այսպես եր գրում նա իր նոր ապաստարանից

այն առաջին կնոջը, վոր ուսուցչութեան և թագրատոցի առաջին տարիները նրա սիրտը գրավել եր: Այդ կինը, մնաց այնտեղ իր յետեր, չեր կարողանում հին աշխարհի հետ, իր ընտանեկան ոջախի հետ ունեցած կապերը խզել: Յեւ նա, առանց յերկար մտածելու հեռացավ... Առանց ընտանիքի, առանց հարազատների առանց ծանոթների...

Բայց միթե նա հիմա մենակ է:

Նրա հետ հարյուրավոր են, հազարավորներ: Նա հենց առանց ընտանիքի ու առանց ցեղի: Նա նրանց հետ հնուց ծանոթ չէ, բայց նրանց կապում է ներկան, ապագան, ընդհանուր պայքարը, կորուստներն ու հաղթութիւնները: Յեւ նրանց մեջ կան այնպիսի կանաչք, վոր կարող են հին աշխարհի կապերը խզել և համարձակ նայել մահվան աչքերի մեջ:

Նա ձեռք բերեց անձնական բախտավորութիւն ընդհանուր բախտավորութեան մեջ:

Նա և մասսանները— դա միասնական ամբողջութիւնն է:

Նրա չորս կողմը դարձյալ յնուում է թագստոցային կյանքը: Նա կրկին այդ կյանքի ջրագտույտի մեջ է:

Շարքից հենց մի գլուխ դուրս են գալիս մի քանիսները, բայց նրանց տեղ գալիս են ուրիշները տասնյակներով և հարյուրավորներով:

Մեր ուղին... Դեռ հեռու յե նա և դժվար... Բայց մարտիկ բատալիոնները հաստատ քայլվածքով գնում են և հաղթում են ճամբին ամեն խոչընդոտի:

Առաջներումս դեռ սպասում են դաժան կտիւներ, բայց վառողի պահեստներում դեռ կա վառող:

—Մենք դեռ կրկովենք—սատանան տանի:

«Ազգային գրադարան»



NL0333039

13.586

891.71

U-77